

# Kinë : Patmowaçk'ner

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Armen, Enovk (1885-1936). Kinë : Patmowaçk'ner. 1906.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.


\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).








03671

\$12.00

2008-129465





4 1 2 3

معارف نظارت جلیه سنك ۹۲ نومبرولى و فى ۲۰ مايس  
۳۲۲ تاريخلو رخصتنامه سيله طبع اولمشدر



# ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

## Կ Ի Ն Ը

( Պ Ա Տ Մ ՈՒ Ա Շ Ի Ն Ե Ը )



*ՍՈՒՐԵՆ*




Տ Պ Ա Ր Ա Ն

Ծ Ա Ղ Ի Կ ( Ս Ա Գ Ա Ե Ա Ն )

Կալամա, Գուրզուհյուռ Խան, Թ/

Կ. ՊՈՒԻՍ

1906





Կ Ի Ն Ը

Ա.

Տարտամ ու պղտոր երապի մը պէս, միաքս կուգայ յիշատակը կեանքիս այն անցքին, զոր սրտամուխեանս ատեն ապրած ըլլալ կը յիշեմ, և որուն արկածալից մահը ըամամուխիւնները կցկտուր ու մշուշոտ դիժերով կը յօդաւորուին հիմա միաքիս մէջ, ամէն անգամ որ սրտահարար մտածումս կը սեւեռի անոր, վնասուելով կեանքիս այդ անցեալ էջին կտրուած դրուագները՝ որոնք տազնապալի երապի մը մէջ սկսնուած խառնակ ու անկապ անցքերու պէս՝ կը վախճաին յիշողութենէս:

Ի՛նչ որ անցեալ մտցուած երապի մը տարտամուխիւնովը կը յիշեմ անկէ, ստուերամած ուրուագիծն է անոր, որուն ամբողջական շէնքը ա՛յնչտի պնցկց հոգիս, ատեն մը:

..\*

Կեանքի կանխաճատ այն շրջանին, երբ դեռ հոգիս նո՛ր կը բացուէր իր արվաւէտ



երկինքին տակ, լայն ու լուսավիր հարկոնս-  
ներու սեւեռած, յանկարծակի հիւանդ ինկայ,  
տկարութիւնով մը սակայն, որ, անկողինի չի  
դամեր մարդը, և բարձերու վրայ չի քաշ-  
կուտուիր, բայց որ սուքի վրայ՝ կը չարչարե-  
իր ենթական, ո՛չ աղէկցնելով, և ո՛չ ալ  
մեռցնելով:

Բժիշկները արդիւեցին զիս դպրոց երթա-  
լէ, և խոտիս յանձնարարեցին մէկ քանի  
տարի արձակուրդ ընել, ինքզինքս տալով  
ձեռական աշխատութիւններու, և լայն օդ-  
չնչելու, բայցօթեայ տեղուանք, լեռներու,  
ձորերու մէջ, անկաշկանդ երկինքներու տակ:

Չէի կրնար անսասանել բժիշկներու յանձ-  
նարարութեանը, որոնք ա՛յնչափ անուղոք էին,  
մանաւանդ անո՛ր համար որ, շատ գէշ ու  
վճռական կը նկատէին վիճակս, և արտա-  
տովոր չափազանցութիւններու հասցնելով  
առողջական կացութեանս սաղնապայտու-  
թիւնը, կ'ըսէին թէ՛ պղախկ թերացում  
մը, իրենց յանձնարարութիւններուն մէջ,  
կրնար զիս անմիջապէս մահուան բաղուկնե-  
րուն մէջը նետել:

Իպրոցական հոգեպառ մտատանջութիւն-  
ներու և տաղտկալի սրամաշուքներու ստա-  
րակը ժողովելով ուրեմն, աուն քաշուեցայ,  
կէս առ կէս հնազանդելու համար բժիշկնե-  
րուն պատուէրին, որովհետեւ այս մասին

Ծնողքիս ըրած նկարագրութիւնները իրաւ-  
ցիւնէ՛ կը վախցնէին աչքս, և ես չէի ուզեր  
դեռ մեռնիլ, ա՛յնչափ շուտ յանձնուիլ  
գերեզմանի սարսուռներուն, քանի որ տա-  
կաւին ոչի՛նչ հասկցած էի կեանքէն:

Տուն առանձնացումիս առաջին ամիսները՝  
պզտիկ բարւոքում մը բերին վրաս: Կ'երե-  
ւայ թէ հանգիասը և մտատանջութիւններու  
թօթափումը՝ կը նպաստէին կազդուումին  
մարմնիս, որ, անզգալարբար, սակայն տեւա-  
կան ծանուակշիռ առաջխաղացութիւնով,  
հասնումի սահմաններուն թեւակոխած էր  
արդէն, — ե՛տքէն կը զգայի բոլոր ասոնք,  
ինչպէս ծնողքս ալ, — և ես դարձեր էի  
վտիտ ու ազազուն գոյութիւն մը՝ որ փլչե-  
լու, չքանալու համար ուժգին հովի մը մի-  
այն կը սպասէ:

Ժամանակաւոր խարկանք մը ըլլալու սահ-  
մանուած են եղեր սակայն, բարւոքումի այդ  
խարուսիկ նշանները, որովհետեւ, դէպ ի վեր-  
կենցաղում սրացող այդ քանի մը քաջալերիչ  
օրերուն յաջորդող ամիսները՝ իրենց հետ ինծի  
բերին կատարեալ յուսահատութեան շրջան մը:

Նոր ապաքինած հիւանդի մը դէպ ի տկա-  
րացում ըրած սրբնթաց արշաւանքին պէս,  
յանկարծ ետ էի դարձեր կէս ճամբէն, ու  
հիմա, ալ ետ-ետ կ'երթայի միշտ, օր-օրի կը  
տկարանայի, կ'ընկճէի, անձանաչ թշնամիի մը  
կեղեքումին սպառիչ ազդեցութեանը տակ:

Մարմնական աշխատութիւնները՝ զորս տկար ճիգերով կը փորձէի, — բժիշկին յանձնարարութեանը համաձայն, — չէին տար ինծի այն ազդեցութիւնը, զոր կը սպասէի, միամտօրէն ապաւինած անոնց անժանօթ ուժին, ի ծնէ հաշմանդամ ու ախտաւոր տղեկի մը պէս, որուն անթացուպեր, փայտէ անշունչ ձիեր, կառքեր կուտան, որպէս զի ոտքի ելլէ ան, անոնց հետ փորձած իր ճշտորումներովը, ի գործ դրած իր բուռն ճիգերովը, ու անոնց վրան հեծնէ:

Բացօթեայ պտոյտները և լեռ-ձոր թափառումներն ալ՝ սպասուած ներգործութիւնը չէին ունենար վրաս, և, ո՛ր և է կազդուր ու հանդարտութիւն չէին տար ինծի, որ խռոված ու անհամբոյր գոյութիւն մըն էի դարձած, և սիրտ իսկ չունէի ծովին ու երկինքին նայելու, բնութեան գեղեցկութիւններէն վայելք մը զգալու, ևս որ ա՛յնչափ սրտազեղ սիրտը մըն էի առաջ բնութեան և իր մեծահրաշ սքանչելիքներուն:

Անբացատրելի տագնապ մը կը տիրէր ներսս, անժանօթ խռովք մը, որ պաշարած էր ամբողջ էութիւնս, և որ ուժգնակի կը ցնցէր զիս, առանց զգացնելու իր ի՛նչ ըլլալը:

Բժիշկները՝ որոնց մէջ ա՛լ վարպետ ու համբաւուած անուն չէր մնացած՝ որուն դի-



մած չըլլայի, — եղկելի մահամերձի մը պէս, որ իր վերջին շունչի օրերուն իսկ ապրիլ կ'ուզէ և դեղերու խաբուսիկ ուժին կ'ապաւինի, — որոշ անուն մը չէին կրցած առկա տկարութեան, որովհետեւ մարմնական վատթարացումի ծանօթ ո՛չ մէկ տխտանիչ կրնային գտնել վրաս, այլ կը բուականանային հոգեկան կացութեան մը վերագրել այն երկիւղալի հիւժումը և օրրասօրէական անդարմանելի վատթարացումը՝ որուն զո՛ր եղած էի:

Եւ իրա՛ւ, մարմնական ո՛չ մէկ ցաւ, ո՛չ մէկ տկարութիւն կը զգայի վրաս: Ի՛նչ որ կը չարչարէր զիս, հերքին աշխարհի տագնապ մըն էր, որուն ի՛նչ ըլլալը ես ալ չէի զգար:

Կը զգայի միայն թէ, անոր կենթական եմ, և որ ինձի փայլուն վաղորդայն մը չէ՛ որ կը խոստանար, յուսահատ օրերու յաջորդական սողանցքին մէջ:

Անհուն մելամաղձութիւն մը, անասնման ու աննկարագրելի յուսահատութիւն մը կը լկէր հոգիս, ու աշխարհք աչքիս մութ կ'երևար: Չէի ուզեր բանի մը երես հայիլ, ո՛չ մէկ բանով դբաղիլ: Կ'ուզէի մոռնալ աշխարհը և իրերը, կեանքի սաղակալի վիճակները՝ որոնք շուրջս ծաղկած դժնեատեաիլ բոյսեր կ'երևային աչքիս, սահմանուած զիս ծաղրելու, զիս չարչարելու՝ իրենց քինախնդիր տեսքովը:

Առանձնացումի , մութին , լուսթեան մէջ  
քաշուելու մեծ ըղձանք մը կը տուայտէր զիս ,  
ու կ'ուզէի մեկուսանալ , հեռանալ շուրջա  
պարզուող աղմուկէն ու խաժամութէն , փախ  
չի'լ անոնցմէ , գերագոյն պարապի մը մէջ  
թաղելու համար բոլոր սարսուպի ձայները  
անձանօթ ցաւերուս :

Այս մենամոլութեան ըղձանքէն մղուած ,  
յաճախ օրերով կը փակուէի տունը , աղմուկէ  
ու խժգժութենէ հեռու սենեակի մը ան  
կիւնը , ահարկու տուայտանքի մը յուսահա  
տեցուցիչ ժամերը հոլովելով հոն , թաղուած  
գլխքի մը մթառառուեր էջերուն մէջ , իմ շու  
քիս ու առանձնութեանս ուրուականին հետ  
ապրելով :

Օրեր ետքը , խղզուք գալով վրաս , փակ  
ուած կեանքի այդ տաժանքէն , լեռները կ'իյ  
նայի , թափառիլ կ'ելլէի քաղաքէն հեռու  
բացաստանները , անաղմուկ մենութեան մը  
մէջ , քիչ մը հովահրելու համար կուրծքս  
սեղմող նեղութիւնները :

Իրիկնամուտի տուերներուն հետ միայն ,  
երբ ալ մութը կ'իջնար իր անթափանց գոր  
շութիւնովը՝ քաղաքին ու հեռակայ ըլրակնե  
րուն վրայ , տունի ճամբան ձեռք կ'առնէի ,  
քիթս հովին , անսխոյթ ու աշխարհի սրբողած  
երեւոյթով , թափառկոտ ուրուականի մը պէս ,  
որ մութին հետ այցի մը ելած ըլլար մենաւոր  
սեղուանք :

Դուքսը, իմ անխօս ուրուականս տեսնող  
կիներ ու մատողաչ աղջիկներ՝ սրտագեղ ու ան-  
կեղծ կարեկցութեան արտայայտութիւնով մը  
կը դիտէին զիս, ո՛վ գիտէ կակծանքի ի՛նչ  
ցանցեր հլուսելով իրենց հոգիին մէջ, իմ հի-  
ւանդկախ ու տառապող տղու էութեանս  
վրայ:

Ու սրտնեղութիւնը, անձկութիւնը, յու-  
սահատութիւնը՝ որ կը պատէր զիս, և ամէն  
քան մութ, ատելի տեսնելու յուետեսու-  
թիւնը, աշխարհէն համ չառնելու, աշխարհը  
տանելու մեղամաղձութիւնը՝ որ գրաւած էր  
ամբողջ հոգիս, ո՛չ մէկ բանով կրնայի մեղ-  
մել, կեանքի ո՛չ մէկ ձևով լուսաւէտել:

Հոգեկանս այս դժնդակ կացութեանս դառ-  
նութիւնը յաճախ սուսի սպասուհիին վրայ  
կը թափէի, պարզամիտ, խեղճուկ աղջիկ մը,  
որ դժբաղդ դոհը եղած էր բոլոր սրտնեղու-  
թիւններու ու խէթութիւններու, և որ  
տակայն կարեկից ու ներողամիտ համակերպու-  
թիւնով մը, կը ջանար տակալ, անձանձիր հան-  
դուրժել իրեն տուած բոլոր տանջանքներու,  
կնոջական զգացումներէ բղխող մայրական  
գորովանքի անյիշաչարութիւնով մը: Որով-  
հետեւ, ամէ՛ն հոգիս նեղացած ատեն, ամէ՛ն  
ծանր սրտասեղմում մը ունեցած պահուս,՝  
պատճառ մը կը գտնէի զինքը չարչարելու,  
անխնայ սխմրտելով զինքը, մաղէն քաշել



գետինը պառկեցնելով, կամ մինչեւ շալակը վիզերը ցատկելով: Իրմէ տարիքով քիչ մը պզտիկ ըլլալով, և արդէն գրեթէ իրեն հետ մեծցած՝ պզտիկուց, անվայելչութեան մը վախը չէր կասեցնէր զիս, քիչ մը յախուռն ու գայթակղիչ ընթացքիս մէջ, մանաւանդ որ, ա՛յդ իսկ պատճառով, տեսակ մը ընտանութիւն կար մէջերնիս, որ ինծի համարձակութիւնը կու տար ուզա՛ծս ընելու իրեն:

Չեմ կրնար նկարագրել թէ, ս՛րչափ հաճոյք կը զգայի իր վրայ փորձած այդ չարութիւններէս, այդ հաճոյալի կզվտութիւններէս:

Կ՛ենթադրեմ թէ, իմ մեծերս ալ, հոգիին Տենչանքներուն ծանօթ տարեցնէր, իրենց ներողամիտ թոյլտուութիւնովը, իմ սիրային արշաւներուս մէջ, կ՛ուզէին քիչ մը կենդանութիւն բերել վրաս, բարեփոխել կեանքս, ազգու զանազանութիւն մը մայնել անոր մէջ, ինչպէս փորձը ցոյց կուտար այդ արդիւնքին ծլումը վրաս, որովհետեւ, ամէն անգամ որ այդ սպառուհի աղջիկը՝ Աղաւնին թեւերուս մէջ առած, սիրտս անոր տաք կուրծքին հպեցուցած ըլլայի, այդ օրը կը փոխուէի հիմնովին, նոր կենդանութիւն մը կը մանէր երակներուս մէջ, որ կը կազդուրէր զիս, կ՛ոգեւորէր, ու ամբողջ օրը ցնծուն ու թռչտուն տղայ մը կ՛ըլլայի: Կը յիշեմ հիմա թէ, նոր արեւի մը ճառագայթիլը

կը զգայի ներսս, իմ մթամած հոգիիս խորը, որ խաւար երկինքով մը պատուած էր շարունակ, և ուր կեանքի, ուրախութեան, հրճուանքի լոյս մը չէր նշուելը երբեք:

Սակայն այդ կենսաբաշխ աղջկան մարմինն հոգիիս մէջ կաթող կենդանութեան բոցը մարելէ, անոր երակներէն ծորող մեղրի զգւիւիչ համը շրթունքներէս կորսուելէ անմիջապէս ետքը, տանջանքը նորէ՛ն կը պաշարէր զիս, այս անգամ աւելի՛ զօրաւոր թափով: Ու հոգիս կ'այրէր կարօտովը անձանօթ տեսչականի մը, որուն հեշտանքովը ծարւած լեզուս՝ չէր հպեր անոր, չէր գաներ գայն, իր անատոյգ ու մոլորական խարխախուճմաներովը:

Ու օրերով, բուժումի նշան մը չէր յայտնուեր վրաս, կեանքի վերգարթնումին երջանկաշեր ծիծեռնակը, որ արիտէտ դարունի մը գալուտին աւետիար բերէր, կեանքիս թաղծոտ աշունին վրայ, արդէն յետին ձմեռի մը սարսուռներովը դողահար:

Ու ոչ մէկ բան աղէկնաչու յոյս կը ներշնչէր ինձի: Օրերս կը գէշնային հետզհետէ մեղամաղձութիւնը, հոգիս պատող մթութեան ծանրութիւնը, վհատութիւնը, աշխարհէն խորշուլու մենամոլութիւնը կ'ընկճէին զիս չարաչար, կարծես նենգաւոր ու չարադէտ որդ մը սողոսկած ըլլար ներսս, որ կրճէր ու մաշկոյնէր հոգիս, վայրագ ու ռիսերիս մոլեղնութիւնով մը:

## Բ.

Այդ օրերը, երկարատեւ բացակայութենէ մը ետքը, Եւրոպայէն կը դառնար հօրաքայրս, իր մէկ հասիկ աղջկանը՝ Անտէլի հետ: Հոս ժամանելով, կ'իջնէր Ենի-Քէօյի իրենց ծովեզերեայ ամառանոցը, որ իր տէրերուն տարիներու բացակայութեանը միջոցին, լքուած դղեակի մը պէս, առանձին ու թաքթաքուր սպասեր էր մենաւոր սփռնաքները վաւորի, իր լուռ պատերուն մէջ արձագանգելով անոր ջութերուն սկար ճողիւններու ձայները, տարիներով, օրերով, ամառ ձմեռ, սրովհետեւ, տասնըհինգ տարուան բաժանում մը ունեցեր էին իր բնակիչները, զինքը յանձնելով Խովաթի մը հսկողութեանը, որ անոր գեանայարկի մէկ սենեակը միայն բացած գոցած էր, այդչափ տարիներ, ցորեկին հուլիսուելով տունին ետեւը տարածուող պարտէզին հողատարութեանը, խղճամիտ ու դաւակ-սէր հօր մը պէս մշակելով այն ծաղիկները և տունկերը, որոնք իրենց սիրականէն լքուածի պէս, անոր վերադարձի ցաւը կը հեծէին, ինչպէս ամբողջ ապարանքը՝ որ ախուր ու վշտահար երեւոյթ մը առեր էր, հօրաքրոջս բացակայութեանը շրջանին:

Հիմա, անոր վերադարձովը՝ ապարանքը կը կենդանանար հորէն, ոգեւորութիւնը ծայր կու տար դարձեալ անոր մէջ, հոգ չէ թէ մեծ

բազմութիւն մը չլլար անոր մէջէ-մէջ բազմութիւ սենեակները լեցնողը :

Ամուսինին մեռնելէն ետքը , աչքին մութ երեւալով անոր յիշատակը արթնցնող ամէն բան , հորաքոյրս իր սուգի օրերը Զուլցերիա ուզեր էր տանիլ , հոն օտար երկինքի ու անձանօթ վայրերու մէջ մոռնալու համար զինքը ընկճող մեծ ցաւը , իր սիրական ամուսինին կորուստը : Բարեբաղդաբար այս ծրագիրը գործադրելու դիւրութիւն կ'ընծայէր իրեն՝ այն ինը-տասը հազար ոսկիի գումարը , զոր Սեպուհ էֆ . , իր ամուսինը , ջոջ ու բարեհամբաւ վաճառական , ձգած էր իրեն , հնչուն դրամ , բացի բազմութիւ կալուածներէ : Անգամ մը Զուլցերիա ոտք կոխելէ ետքը , սիրեր էր հորաքոյրս անոր հրապուրիչ լեռները և պայծառ երկինքը , ու անցեր՝ սիրուն գիւղաքաղաք մը , ուր քանի մը տարի ետքը աղջիկը՝ Անտէլը , տեղական վարժարան մըն էր դրեր , քանի որ ալ խելահաս եղած էր ան , և ինք միտք ունէր քանի մը տարի ալ մնալու այդ յանկուցիչ երկինքներուն տակ :

Աղջիկը դպրոց տալը սակայն , ետքէն , պատճառ էր եղեր որ , հորաքոյրս հարկադրուի քանի մը տարի աւելի մնալու հոն , ու վերջի վերջոյ , անոր ընթացաւարտ ըլլալուն արասելու , ինչ որ անոր դպրոց մտնելէն ետքը , եօթը տարիներու կարօտեր էր :



Ու հիմա, Անժէլ, ուշիմ ու սրամիտ աղ-  
ջիկ, տասնըվեց տարուան իր մատղաշ հա-  
տակին մէջ, Աղջիկներու Բարձրագոյն Վար-  
ժարանէ մը շնորհքով վկայականի մը տիրա-  
ցած, մօրը հետ կը վերադառնար հայրենի  
տունը:

Երբ եկան հաստատուեցան Ենի-Քէօյի  
իրենց վաղեմի ապարանքը, քանի մը շաբաթ  
ետքը այցելութեան դացինք իրենց, երկա-  
րատեւ բաժանումի մը կարօտակէդ փափաք-  
ներովը լեցուած:

Ես, իմ մասիս, իրենցմէ ո՛չ մէկը կը  
ճանչնայի որոշակի: Հազիւ աղօս մը յի-  
շէր թերեւս հօրաքոյրս ալ՝ իմ մանկութիւ-  
նս, կամ, շատ-շատ, ծնունդս:

Իրիկունը հոն մնացինք: Երբ յաջորդ օրը՝  
կը դառնայինք, հօրաքոյրս պնդեց որ ես  
իրենց մնամ, քանի մը ամիս: Ատիկա աղէկ  
օդափոխութիւն մը պիտի ըլլայ, — կ'ըսէր, —  
ինձի համար, որ թերեւս աղէկցնէր ալ զիս:  
Եստ պնդեց իր առաջարկին վրայ, որովհե-  
տեւ վիճակս մտատանջութիւնս պատճառած էր  
իրեն, և, սրջտի կը զգայի, շատ կը սիրէր  
զիս, թերեւս մանչ-դաւակ չունենալուն հա-  
մար, հո՛ գեւին կը սիրէր, մօ՛ր մը սէրովը կա-  
թողին ու դարովանքով սեղմելով զիս կուրծ-  
քին վրայ, քանի՛ քանի՛ անգամներ: Նայ-  
ւածքովը, սէրի արտայայտութեան իր սրտա-  
զեղ դուրդաւրանքովը՝ կ'ուտէ՛ր զիս:

Գէշ չըլլար, մտածեցինք, ու կենալուստ  
որոշումը տրուեցաւ: Ինձի հետ եկողները  
մեկնեցան: Ես մնացի: Ան իրիկունը ճաշերնիս  
պարտէզը ըրինք, ես, հորաքոյրս ու Անժէ-  
լը, սաղարթախիտ ու ստուերոտ ամպհովա-  
նիի մը տակ, զոր սարքած էին պարտէզին  
կեդրոնը, կարկաչուն աւազանի մը եզերքը,  
և որուն՝ պարտիզպանին խնամոտ յարգարան-  
քը դիւթական գեղեցկութիւն մը տուած էր:

Ո՛րչափ երջանիկ զգացի ան իրիկունը,  
ինքզինքս, մեր մտերիմ երրորդութեան այդ  
հաճելի ճաշակցութենէն, աննկարագրելի է:  
Անուշ ու անվերջանալի խօսակցութիւններու  
մէջ, սեղանը վերջացաւ անզգալաբար, մինչ  
զինիի վերջին գաւաթները իրար կը բաղ-  
խէին, ինչան մեր նորահաստատ բարեկա-  
մութեան և տեսութեան: Ո՛րչափ խօսուն ու  
ուրախ էր Անժէլ, երբ տանտիրուհիի ու նոր  
գտնուած եղբոր մը վայել աղնուական հիւ-  
րամեծարութիւնով, գաւաթս կը լեցնէր, կամ  
դանակին ծայրովը պտուղ մը կը կարկառէր  
ինձի, միշտ սրամիտ կատակ մը շրթունքին  
ծայրը կամ զուարթ խօսակցութիւն մը շա-  
րունակելու վրայ:

Այդ օրը երազի մը պէս անցաւ:

Յաջորդ առտուն, ամէնքս ալ կանուխ  
արթնցանք: Նախաճաշնիս նորէն նոյն գե-  
ղանի սարսիկնային տակ առինք: Ո՛րչափ

աղւորցած էր երկինքը աչքիս՝ ան առտուն ,  
 ու մեր շուրջը ինչ հմայիչ աղւորութիւնով  
 մը կը փողփողէին ամէն բան , ծառերը , ծա-  
 դիկները , օձապտոյտ ջուրերուն հոսքը : Պար-  
 տէզը ինքնին սքանչելիք մըն էր , իր հովա-  
 նուտ խորշերովը , սաղարթախիտ թփուտք-  
 ներովը , ստուերոտ անկիւններովը , որոնց  
 վրայէն տեղ-տեղ երկինքը կը քողարկուի ,  
 կամ պղտիկ անգաղանապահ պատառուածք-  
 ներէ հազիւ կը ցուցնէ իր փեռեկտուած կա-  
 պոյտը : Անկէ ետքը մեր առօրեայ կեանքը  
 ճշդուած էր ալ :

Մինչև ցորեկ , Անժէլին հետ , պարտէզին  
 հովանուտ ծառաստաններուն կամ թփուտք-  
 ներուն տակ կ'անցընէինք օրը , գլուխ-գլխի ,  
 առանձին , անվերջանալի խօսակցութիւննե-  
 րու տալով ինքզինքնիս , կամ ընթերցումներ  
 ընելով , այն տեսակ էջերէ , ուր տիրող  
 կեանքը քիչ շատ մերինը կը յիշեցնէր : Այդ  
 ընթերցումները առիթը կը հայթայթէին մեզի՝  
 մեր հովուերգական կեանքին մէջ զանազա-  
 նութիւններ , նոր փոփոխութիւններ մտցնե-  
 լու , միօրինակութիւնը մեռցնելու համար ,  
 գիրքերու մէջ նկարագրուած պատմութիւն-  
 ները ապրելու , դբօսնելու նոր ձևեր պատ-  
 շածեցնելու մեր կեանքին : Օրն ի բուն , քովս  
 ի վեր կը ճուռողէր Անժէլ , միշտ բան մը  
 գտնելով զիս զուարճացնելու , միշտ խելքս

գողնալով՝ զուխցերիական կեանքի իր պատմութիւններովը: Սահուն ու անուշ ֆուանսերէն մը կը խօսէր, երբ չի կարենար հայերէնով բացատրել ինքզինքը, զոր զարմանալի թութովութիւնով մը ու անուշ աղճատումով մը կը խօսէր, — ա՛յնչափ վարժ՝ որչափ տունը կրցած էր սորվիլ մօրմէն: Այդ լեզուն շատ անուշ ու շա՛տ հմայիչ կուգար ինձի, ու կ'ուզէի որ՝ միշտ իր քմածին ու սխալ-միսալ հայերէնը խօսի, խօսի, ու ես մինչև ետքը մտիկ ընեմ:

Ճաշէ-ճաշ միայն կը տեսնէինք հօրաքոյրս, և մէյ մըն ալ իրիկունը, սեղանէն ետքը, երբ երեք հոգի, իրարմով ժամանակ կ'անցընէինք, անդրադառնալով անցեալի յիշատակներու, օրուան կեանքի իրադարձութիւններու և ընտանեկան պատմութիւններու:

Ազկէ դուրս, երբ ամբողջ ցորեկը կ'առանձնանայինք Անժէլի հետ, ինք վերը բանով մը կը զբաղէր, նորաձև ասեղնագործութեան մը հիւսքին հետապնդումով, կամ իրեն ու աղջկանը պատկանող վարդական բարակ կարերով, թողլով մեզ որ՝ պզտիկ սղոյ պէս դբօսնունք իրարմով, իյնանք ելլանք, ժամանակ անցընենք, քանի որ մեր դրեթէ քոյր-եղբայր ըլլալը՝ իրաւունք չէր տար իրեն ո՛ր և է բանէ կասկածիլ: Եւ արդէն, միւս կողմէ, մենք ալ այնչափ անքա-



դաքակիրթ չէինք. մեր քմայքին ձգուած կենցաղ մը՝ անպատշաճ ու լիրբ վայրենու թեան մը հասցնելու համար:

Մեր կեանքը ճշգուած էր ալ: Մեր քմահաճոյքին խառնուող ո՛չ մէկը ունէինք, ո՛չ մէկը՝ որ խանգարէր այն երջանիկ ու մշտնջենական ընկերակցութիւնը, այն հեշտալի tête-à-têteր, որուն տուած էինք ինքզինքնիս և որմէ չէինք ձանձրանար երբեք, ո՛ր մը, վայրկեան մը իսկ, որովհետև ամէն նոր որ, իր հետը մեզի կը բերէր նոր փոփոխութիւն մը՝ մեր հաճոյքներուն մէջ:

Օրն ի բուն չէինք բաժնուէր իրարմէ, ու ամէն ժամ բան մը կը գտնէինք իրար դրօսցնելու, իրա՛ւ պղտիկ աղոց պէս՝ քիթ-քիթէ չզատուելով, աղայական դուարթ խաղի մը յանձնուելով, կամ պղտիկ բղէղութիւններ ստեղծելով, ինչպէս քարեգնդակ խաղալ: Նուննան դարձրնել պարտէզին խիճուա շրջեղերքին ամբողջ երկայնքը, խաղեր՝ որոնց մէջ Անսէլի յարուցած չարութիւնները և անառակութիւնները չափազանց կը հրճուեցնէին զիս:

Արդէն արտաքոյ կարգի անառակ բան մըն էր ընկերուհիս, անհանդարտ, ուստուստուն, չար հոգի մը, սատանայի ծնունդ դոյութիւն մը՝ որուն այդ խառնուածքը դգալի կերպով մը դորացուցած էին իր ասպրած

միջավայրին ու ստացած դաստիարակու-  
թեան հանդամանքները :

Երբ այս խաղերուն մէջ հեւ ի հեւ թուշ-  
տելէն ու անհաշիւ ասդին անդին վազվղե-  
լէն կը յոգնէր, ու երկուքս ալ կը քրտ-  
նէինք, շնչասպառ եղած, թեւէս բռնելով,  
զիս կը տանէր աւազանին քովի ամուհովանին,  
ուր զիս անկիւն մը նստեցնելէ ետքը, թեւը  
վիզիս անցուցած ու կիսովին յեղգօրէն հա-  
կած վրաս, իր փափուկ խնկաւէտ թաշկի-  
նակովը քրտինքս կը չորցնէր, մէյ մը իմ  
երեսս պտտեցնելով քնքուշ դգուանքը թաշ-  
կինակին, մէյ մը իրը, երեսէս կախուած,  
թուշս, այտերս շոյելով, անառակ ու կատա-  
կաբան շարժումներով, զիս ընդոստ ցնցելով  
իւր թեւին շղթայովը, աչքիս մէջ նայելով,  
սէրի հրավառ բացագանչութիւն մը թուցնե-  
լով բերնէն, գլուխս իրեն քաշելով, այտերս  
իրենին հպեցնելով, տաք ու կարմրած իր այ-  
տերուն՝ որոնց քրտինքի հեշտալի տամկու-  
թիւնը՝ անբացաարելի սարսուռով մը կը  
գգուէր զիս :

Ու ատանկ կը մնայինք ատեն մը, իրարու  
թեւի մէջ նոյնացած, թող տալով որ մեր  
կուրծքերը բաբախեն, իրենց վանդակը սլայ-  
թեցնելու չափ ուժգին :

Խավաթին ու սպասուհիին լրտեսութիւնը  
չէր խռովէր մեզ այդ միջոցին, որովհետեւ

այդ բարեսիրտ մաշտը, որ մեզ իր զաւակնե-  
րուն չափ կը սիրէր, ցորեկը գործով մը դուր-  
սը կ'ըլլար անպատճառ, իսկ միւս խեղճը՝  
գլուխը խոհանոցէն դուրս հանելու իսկ ժա-  
մանակ չէր ունենար: Իրիկուան դէմ, ցո-  
րեկի դքսանքներէն ձանձրացած, պտոյ-  
տի կ'ելլէինք պարտէզին ետեւ երկնցող ծա-  
ռուղին, կամ ծովեղերքին երկայնքը, քիչ  
մը դէպի հեռուները՝ գիւղին աղմուկէն, մե-  
նաւոր բացաստանները Ենի-Քէօյի գեղանի  
զառիթափներուն, դէպի պարտէզներու և  
պուրակներու մօտերը, որոնք լեռան կողին  
վրայ ցանցնուած, մշտական հանդարտ լուռ-  
թեան մը մէջ, յանկուցիչ գեղեցկութեան  
սիրուն թաքստոցներ են:

Այդ անագիւտ շրջագայութեանց միջոցին,  
թեւս կ'սունէի Սնժէլը, ու սիրամուլ գոյգի  
մը պէս, կը թափառէինք խորհրդասպան  
ստուերներուն տակ այն ծառուղիին, զոր իրիկ-  
նամուտի կէս-մութը ա'յնչափ կ'աղւորոյնէ,  
և որուն ամբողջ երկայնքը եղերող խիտ ու  
բարձրաբերձ անծայրածիր շարքը հնամենի  
ծառերուն, երկու եղերքներէն իրարու գլուխ-  
գլխի տուած, խորհրդաւոր վափառքներ կ'ը-  
նեն կարծես, իրիկնամուտի սխրալի պա-  
հուն, իրարու պատմելու պէս իրենց սէրե-  
րը ու ցաւերը, ինչպէս իրենց թաւ ստուեր-  
ներուն տակ, մե'նք, թե-թեի, գլուխ-

գլխի, իրարու կը փափաայինք անվերջ պատմութիւնները մեր կուրծքին տակ թե առնող յուզումներուն: Երկուքս ալ մեծ հաճոյք կը զգայինք ու կը գինովնայինք այդ շրջագայութիւններէն: Անբացատրելի հաճոյք մը և խնդութիւն մը կը պատէր մեզ, երբ ատանկ միս-մինակ կը զգայինք մենք մեզի, թեթեւի ու հեռու՝ ծուռ աչքերու հետասնդումէն:

Հուռ ու հատցնող յուզում մը կը ցնցէր զիս, տենդագին սարսուռ մը կը վրդովէր հոգիս տեւակամօրէն, երբ ատանկ՝ Անժէլը քովս առած, յանդուգն սիրահարի մը պէս անոր պաշտպան եղած, քայլերս իրենին յարմարցնելով, կը թափառէինք, աննպատակ, անձանձրոյթ, թողլով որ մեր քայլերը տանին մեզ ո՛ւր որ կ'ուզեն, և բաղձալով որ ժամերը չի սահին, գիշերը չիջնէ մեր անձառելի հաճոյքը ընդհատելու... ու չի միջնայ:

Իսկ կիրակի օրերը, ուրիշ հաճոյք մը կը սպասէր մեզի: Ամէն կիրակի, անխոտոր ու կանոնաւորաբար, ձիարշաւ կ'ընէինք: Բարի Խովաթը, Պօփօ, իր ձեռքովը, աղւոր ձիեր կ'ընտրէր մեզի, կը թամբէր ու մեզի կը յանձնէր:

Անժէլ, աղւոր հեծնող, կը ցատկէր կայտառ ձիին վրայ, որ անոր պարիկի թեթեւ մարմինին տակ, կը ցատկաւէր, անհանգարտ դարձդարձումներ կ'ընէր վրնջելով,



անսանձ արշաւելու համար: Ես ալ կը ցատկէի իմ ձիւս վրայ, ու կը մեկնէինք, ծովեզերքին երկայնքն ի վեր, դէպ ի Պէոյիւք-Տէրէ, ուր ձիւս ոտքերուն յարմար ամէն ճամբայ հինցնելէ ետքը, իրիկուան դէմ, լեռան ճամբով մը, կը դառնայինք գիւղ: Ձիարշաւի մեր այդ զբօսանքներուն մէջ ինչ անսովորութիւններ կ'ընէր Անժէլ, ինչ վտանգներու կ'ենթարկէր երկուքս ալ, հի'մա մտաբերելով կ'ահաբեկիմ: Բաց ասպարէզ մը ներկայացածին պէս, յանկարծ կը թուլցնէր սանձը ձիւն, սրընթաց ու խօշարձակ արշաւելու համար, հրաւիրելով զիս որ հասնիմ իրեն: Յաճախ, երբ ձիւերը քրանէին, քովքովի կ'երթայինք, հանդարտ ու միօրինակ դնացքով, վեր առնելով ծայրը խօսակցութեան մը, որ մեզ կը զբաղեցնէր ժամերով, առանց ձանձրոյթի:

Եստ անգամ, կը դիտէի որ, առանց պատճառի, յայտնապէս սուտ պատրուակով մը, վար կ'իջնէր, որպէս զի վերստին նստած ատեն, օգնե'մ իրեն հեծնելու, թեւը բռնելով և սրունքները, քղանցքը անդաւորելով թահիլն վրայ: Ինչ հաճոյք մը կը զգար առնական այդ հոգածութիւններէս ու օգնութիւններէս: Քիչ մը տեղ ետքը, նորէն կ'իջնէր, խնդալիւր ու գրգալի շփացածութիւնով մը հրաւիրելով որ նորէ'ն հեծցնեմ:

զինքը: Ու ասանկ՝ օրը իրիկուն կ'ընէինք,  
առանց զգալու:

\* \*

Կը զգայի որ հոգիիս հորիզոնը կը լայն-  
նար այս աղջկան ներկայութենէն, որ երազ-  
ուած ըղձանքի մը պէս դէմս էր ելեր մէկէն:

Ձիս կաշկանդող սեւամաղձութեան խա-  
ւարները՝ որոնք հոգիս կը սեղմէին ու սիրտս  
կը մթնցնէին առաջ, կամաց-կամաց վարա-  
տեր էին, ու լայն շունչ մը կ'առնէի հիմա,  
կեանքի վայելքին ու ապրելու հաճոյքին  
արբշուանքով: Իր խայտալից կեանքէն բղխող  
անամպ ու լուսաւէտ բոցը՝ կենդանութեան  
ու ապրելու ըղձանքին կայծը բռնկցուցեր  
էր ներսս, որուն կենդանացուցիչ ճաճանչնե-  
րովը կ'ողողուէի, և որով յամբ վերկենցա-  
ղումի մը թռիչքը կ'առնէի:

Անոր կենսանորոգ արբեցումը՝ կը զգայի  
որ կ'ուռեցնէր կուրծքս, առողջութեան ու  
կորովին զովարար ցօղը կաթեցնելով երակ-  
ներուս մէջ, ու ալ հետզհետէ թեթեւցած կը  
զգայի ինքզինքս կուտակումներէն այն ան-  
բացատրելի վրդովանքներուն, որոնք խառն  
ի խուռն ամէն կողմէ զիրար կը խաչաձե-  
ւէին հոգիիս մէջ, և որոնք կը սեղմէին  
կուրծքս, կը ճնշէին հոգիս առաջ, զայն  
պայթեցնելու աստիճան ուժգին սաստկու-  
թիւնով մը:

Յանկարծակի փոփոխութիւն մը տեղի ունեցեր էր այսպէս ներսս, ընդոտտ յեղաշրջութիւն մը՝ որ զգալի ապաքինումի մը բարերար դեղթափը ներարկեր էր տխեղծ հոգիիս մէջ:

Ու Գերեզմանէն դէպի Կեանքը այդ Դարձը՝ ա՛յնչափ ակներեւ կերպով կը շեշտուէր վրաս որ, երբ չորս-հինգ ամիս ետքը տունէն նորէն այցի մը եկած էին հորաքրոջս, բոլորովին կազդուրուած կը գտնէին զիս, և յուսադրող առողջութեան մը նշանները կը տեսնէին վրաս, ինչ որ պատճառ կ'ըլլար որ տուն չդառնայի շուտով ու երկարածագէի հորաքրոջս քով օդափոխութեանս միջոցը:

— Ո՛րչափ փոխուեր է, — կ'ըսէին ամէնքը, խանդաղատ ուրախութեան մը դոհարտութիւնով, — երեսներուն վրայ արիւնի գոյն է եկեր, գիրցեր է ալ, քիչ մըն ալ թող մնայ կարսլիսը հոս, օդը աղէկ է եկեր իրեն:

Օ՛դը, կ'ըսէին միամիտները, անդիտանալով պատճառը այն ստեղծագործ վերկենդանութեան և ուռճացումին, զոր շուրջս ճառագայթող կենսաբաշխ արևը կը ցօղուէր վրաս և որ կը բզխէր Կեանք-Սրեւի վառարան՝ Անժէլի Մարմինէն ու Հոգիէն:

Իրաւ է որ աղգականութեան և քրոջականութեան շատ սերտ աղերսով մը զօղ-

ուած էր ան ինծի, և ես չէի կրնար անասնական ցանկութեան մը կիրքը մշակել իր անձին մէջ, սակայն անոր տղայութիւնը իսկ անձանօթ ըլլալով ինծի, և տարիներու շղթան մեռցուցած ըլլալով մեր միջև արեւակցութեան ձեռնապահութեան վերապահումը, ան ինծի հետ բոլորովին անաղերս աղջկան մը օտարութիւնովը կը ներկայանար, երբ ինձմէ հեռու մեծցուած, իրարու կատարելապէս անձանօթ, դիպուածը մէկէն ի մէկ դէմ դէմի հանած էր մեզ:

Իր տղայութիւնը, դեռատի աղջկան՝ կեանքի արահետին մէջ իր ճշտորումները անձանօթ էին ինծի, որպէս զի վարժուած ըլլայի անոր դէպի հասունութիւն ստացած ամէն մէկ փոփոխութիւններուն, ու ան հրապոյր մը չունենար ինծի, ինչպէս կ'ըլլայ հետդ կամ ձեռքիդ մէջ մեծցած տղայ մը, որուն համար դաւկի, եղբօր կամ քրոջ սէրէ սարքեր զգացում կարելի չէ ունենալ:

Մինչ ան, հիմնովին հակառակ սլայմաններու տակ կը ներկայանար ինծի, իբր հասուկ ու ամէն կատարելութեան թեւակոխած աղջիկ՝ ինծի ընկեր տրուելով, շքեղ թաղարի մը մէջ խնամուած և իր կատարելութեանը մէջ բացուած աղւոր ծաղիկի մը պէս, որ յանկարծ ձեռքդ կ'անցնի, և որուն բոյրը ու սուքը կը յանկուցանէ քեզ, ու չես յագե-



նար զայն հոտոտելէ, անոր վրայ գուրգու-  
րալէ, քանի որ անոր այդ աղւոր թերթերը  
ու գեղանի տերեւները քու ձեռքիդ մէջ չէ՝  
որ մեծցած են, որպէս զի վարժուած ու յա-  
գեցած ըլլաս անոնց գեղեցկութեան վայել-  
քէն ու հրապոյրէն:

Այդ ծաղիկն էր ինձի համար Անժէլ,  
զոր չէի յագենար օրն ի բուն հոտոտելէ, և  
որուն՝ շուրջս սիւսած բոյրը կը գինովցնէր,  
կը խելայելէր զիս:

Կը զգայի որ ալ սկսած էի սիրել զինքը,  
օրչափ միամիտ ու տարտամ, նոյնչափ ալ  
հոգիս հիմնովին վրդովող սէրով մը, որ կը  
խռովէր կեանքս ու կը ցնցէր էութիւնս:

Տղու զգացումներս գերագոյն հրճուանքի  
մը հեշտաւէտ եթերին մէջ կը թեւածէին,  
երբ ինձի բացառիկ երջանկութիւնը տրուած  
էր՝ ուրիշներու ըմբռնածէն տարբեր սէ-  
րով մը սիրելու, պաշտելու, խնկարկելու,  
վայելելու կուռքս, ուրիշ, անարգել ու  
սանձարձակ սիրելու, պաշտելու, տառապելու  
կոյր յագեցումէս, Կեանքը կը հոսէր ներսս,  
հոգիս լեցնելով անձառելի երանութիւնովը  
հեշտալի անուշութիւններուն:

Հոգիս պարուրող այս Կեանք-Արեւի  
ուորար՝ վերկենցաղումի շունչը ցօղեր էր  
հիմա վրաս, որուն ծնուցիչ ազդեցութեան  
տակ՝ նոր խանձարուրքէ մը կը յառնէի դէպի

Կեանքը, ընդոստ Դարձով մը Մահացումի  
մօտաւոր սեմէն:

.\*

Երկու տարիի մը չափ տեւեց այս օղա-  
փոխութիւնս, և երբ տուն կը դառնայի, ալ  
բոլորովին ապաքինած ու կաղղուրուած էի:

.\*

Ո՛չ մէկը կրցաւ խելք հասցնել այս հրաշ-  
քին, ո՛չ իսկ բժիշկները:

\*  
\* \*

Հիմա որ, սակայն, տարիներու շարք մը  
զիս կը բաժնէ այդ օրերէն և խելքս կը  
համնի ամէն բանի, կ'ըմբռնեմ Պատճառը  
հիւանդութեանս, — աղետալի Հիւանդութիւնը  
Զարթնումի ցաւերովը գալարուող Արուին,  
որ կի՛նը կը փնտռէ:



# Ս Ո Ւ Ք Ի Ա Ս

Մեր սիրական ընկերն էր Սուքիաս, որ ամէն ժամ քովերնուս չէր բաժնուէր, ան մեր անձին վրայ դուած ըլլալով՝ զինքը քիչ մը հասկցող բարեկամներ, և մենք իր վրայ մէկը՝ որուն հետ կարելի էր ժամանակ անցընել, իր խենդ ու խելառ խօսակցութիւններովը, աշխարհի քիթին խնդացող անփոյթ սկեպտիկի իր խօսվառութենովը: Ամէնուն ծանօթը և ամէնուն խօսքին առարկան էր Սուքիաս, գեղին մէջ, իր այն կենցաղով ու նկարագիրով, որով կէսփիլիստիայի մը վիճակը զգեցած էր, և զինքը բոլոր ճանչցողները՝ սովորական մահկանացուի մը նայելու աչքով չէին նայէր անոր վրայ, ինչպէս այդ հայեացքով չէին վերաբերուէր իր բոլոր վարմունքներուն ու գործքերուն համար, որոնք ամէնքն ալ իրենց պատմութիւնը և մասնաւոր խմաստը ունէին:

Սուքիաս հեղինակն էր այն տեսակ գործքերու և արարքներու, որոնք զարմանք և ապշութիւն միայն կրնային պատճառել սովորական մարդոց, որովհետև ո՛չ մէկը կրնար մեկնութիւն տալ այդ բաներուն և ո՛չ ալ



Թափանցել անոնց ի՛նչ մտադրութիւնով գործուած ըլլալուն: Միայն երբ Սուքիաս էր հեղինակը այդ գործերուն, ըլլար ան աշխարհի ամէնէն անսովոր ու չսուած բանը, մարդիկ կը հաւատային եղածին, քանի որ Սուքիաս էր ընողը:

Գեղին ամէնէն գեղանի աղջիկը գիշերանց ճամբան ձեռք ձգելով, առանց անսովոր բան մը ըրած ըլլալու կասկածին, մեծ պաղարիւնով երեսը համբուրել, մէկուն հաւը ուտել տէրոջը առջեւ, ուրիշի մը սաղը իր ապրանքին պէս ծախել, դրացիի մը ձին փողոցը կապուած գտած ատեն՝ առանց հարցնելու հեծնել՝ պտոյտի մը երթալու համար, գիշերը ուշ ատեն միայն վերադարձնելու պայմանով, և այս տեսակ իրեն համար հարիւրաւոր անմեղ շահատակութիւններ՝ ամէն օր լտած բաներն էին գեղացիներուն, որոնք ներողամիտ աչքով կը նայէին իր բոլոր ըրածներուն, և բան մը չէին կրնար ըսել, քանի որ ընողը Սուքիասն էր, և առարկութիւն մը ըրած ատեննին, այս իմաստուն շահատակը ա՛յն տեսակ անառարկելի փիլիսոփայութիւններով, այն տեսակ պարզ տրամաբանութիւնով մը կ'արդարացնէր ըրածը որ՝ շատ անգամ գործին մէջէն յանցաւորը խնդիր հանողը կ'ելլար, Սուքիասի հայեացքովը դատուած անվիճելի ճշմարտութիւններ:

րու հետեւութիւնով: Սօսքը չէ որ կը պակ-  
սէր իր բերնին մէջ, արդարացնելու համար  
իր այդ վարմունքները, ո՛չ ալ ամէնուն հա-  
մար յերիւրուած նորօրինակ տեսութիւններով  
ճշմարիտ փիլիսոփայութիւններ, որոնց կը հա-  
մոզուէր ամէնէն խստաբարոյ դատախազը  
անգամ, և իր առարկութեանը մէջ կ'ընկը-  
կէր անմիջապէս, յաճախ ինքզինքը դատա-  
պարտելով ըրած անխորհուրդ առարկութեա-  
նը համար, որուն անտեղութեանը առաջուց  
անդրադարձած չըլլալ կը կարծէր, — ա՛յնչափ  
համոզիչ ու անժխտելի պատճառարանու-  
թիւններով կը կարկեցնէր Սուքիաս դէմինին  
բերանը:

Գեղ դացած առաջին օրս ճանչցայ զին-  
քը, որովհետեւ ամէ՛ն տեղ է Սուքիաս գե-  
ղին մէջ, ամէն վայրկեան խօսքի առարկայ,  
և ամէն քայլիդ դէմդ, ո՛ւր որ ոտքդ նե-  
տեսս՝ հո՛ն:

Առջի վայրկեանէն ընածին համակրու-  
թիւն մը՝ բուռն սէրով մը կապեց զլա այդ  
սարօրինակ տղուն, որ լայն համբաւի մը  
տիրացած էր ամէն կողմ, գեղին մէջ:

Արդէն, գեղ մը երբ ունենայ իր մէջը  
այդ տեսակ տիպար մը, շուտով կ'անմահա-  
ցնէ զայն, և շատ շանցած կը կապէ անոր  
ճակտին՝ համբաւի պսակը, գէշ կամ աղէկ:

Այդ գեղը՝ ուր ամառ մը կենալու հա-

մար կ'երթայի, ըլլալով քանի մը հարիւր տնւոր բնակչութիւնով ինքն իր մէջ ամփոփուած գեղ մը, առանձնացած լեռան մը կողք, Վոսփորի մէկ եզերքին վրայ, իր մէջ շուտով անմահացուցած էր Սուքիասի անունը, զայն դարձրնելով իր հերոսը, մարդոց միօրինակ խառնակութեանը մէջ տեսակ մը զարտուղութիւն, տիպար մը, առանց որուն չի կրնար ըլլալ կարծես քիչնոր համայնք մը, և առանց որուն համ չունենար ամբողջ գեղը:

Ու այդպէս, Սուքիաս, դարձած էր ամէնուն սիրելին, զբօսանքի առարկան, ու շատ հաճելի էր իր գոյութիւնը գեղին մէջ, ուր գրեթէ ժողովուրդին ժամանցները կը կազմէին անհամ զբօսանքներ:

Ինքնին ապուշ ու խելքով պակաս տիպար մը չէր սակայն Սուքիաս, ինչպէս կ'ըլլան սովորաբար այդ կարգի տիպարներ: Ընդհակառակը, իր ձեւաւոր գիծերով խոշոր գլուխը, արտայայտիչ դէմքը և խոհուն աչքերը, շա՛տ բան կը խոստանային հաւասարակշիռ ու զարտուղի խմացականութեան մը գոյութեանը իր գանկին մէջ, որ լեցուն ըլլալ կը թուէր հանձարեղութեան յատկանիշներով, ինչպէս կ'ապացուցանէր իր խմաստուն խօսուածքը և տրամաբանելու խոհական կարողութիւնը:

Միայն, կեանքի մէջ աշխարհային յուսա-  
խաբութիւններ, անագորոյն պատրանքներ,  
որոնց ամէնէն ծանրերուն հարուածին հան-  
դիպած էր, — ինչպէս կը պատմէր ատեն  
ատեն, մտերմութեան պահերնուս, — զինքը  
սթափեցուցած էին ամբողջ ստութեան գի-  
տակցութիւնովը կեանքին, և անարժէք ու-  
նայնութիւնովը աշխարհային ու մարդկային  
սէրերուն: Ու ատոր համար էր որ, անխոյժ  
ինքնամոռացումի մը և սկեպտիկ աշխարհա-  
հայեցողութեան մը առած էր ան ինքզինքը,  
աշխարհը ու իրերը դիտելով բիրտ ունայնու-  
թեան մը դիտակէն, ուր ամէն բան իր աշ-  
քին իբր սնչութիւն, պատրանք ու խաղէու-  
թիւն կը ներկայանային:

Յամառ կարդացող մըն էր եղած, պա-  
տանութեանը տարիքէն, մանաւանդ սիրահար  
ընթերցումին նուիրուած խմատասիրական  
նիւթերու և ինչ բան որ խորհրդաւոր, թա-  
քուն, աւեղծուածային ու գաղտնալից է:  
«Վեցհազարեակ»ի պէս գիրքեր իր գոց դիպած  
բաներն էին: Ու արդէն, ատեն մըն ալ,  
դպրոցը ձեռքը «Կիպրիանոս» շատ տեանելնուն  
համար է որ՝ ընկերները Կիպրիանոս անունով  
մըն ալ վերամկրտեր էին զինքը, տխաղոս մը՝  
որ ետքէն մուցնել սուեր էր իր բուն անունը:  
Եւ ասանկ, իր այս նորօրինակ նախասիրու-  
թիւններուն մղուֆով, Սուքիաս կրչած էր



բաւական հմտութիւն ամփարել միտքին մէջ ,  
 գիտութեան ու գաղափարներու պաշար մը ,  
 զոր իր խորատես հոգին ու միտքը ա՛լ աւելի  
 ընդարձակած ու զօրացուցած էին հետզհետէ ,  
 զինքը դարձրնելով կէս-փիլիսոփայ մը , ամէ-  
 նուն աչքին , որ կեանքի ու աշխարհի նկա-  
 տումով իր մասնաւոր տեսութիւնները , ըմ-  
 բռնումները ու հայեացքները ունի :

Իր զուարթ բնաւորութիւնը , սկեպտիկ  
 հակումները , փիլիսոփայ միտքի իր զարտուղի  
 նկարագիրը՝ պատճառ եղած էին որ՝ տարբեր  
 սէրով մը փարիսի իրեն , առջի օրէն , իր ան-  
 ձին մէջ գտնելու համար մէկը՝ որուն հետ  
 կարելի է խօսիլ , խորհիլ և տարբեր կերպով  
 դիտել մարդերը և իրերը :

Ամբողջ ամբան պարտապ օրերուս , ամէնէն  
 սիրական ու մտերիս ընկեր մը եղաւ ան ին-  
 ծի : Աւանց իրարու՝ չէինք կրնար ըլլալ , ու  
 դեղացիները վարժուած էին օրն ի բուն մեզ  
 իրարու հետ տեսնել , լեռները պտոյտի մը  
 գացած ասուն , կամ մօտակայ թաւուսները ,  
 քիչ մը աս ու ան մրդաստանին պողատու ծա-  
 ւերը կողոպտելու , փեթտելու , ընկուղի ծառի  
 մը տակ ընկողմանած՝ ժամանակ անցընելու  
 համար , -երբ փիլիսոփայ բարեկամս իր ամէ-  
 նէն անուշ պատմութիւնները կ'ընէր ինծի ,  
 իր ու աշխարհի կեանքին վրայ :

Այս զարմանալի սողուն կեանքին շուրջը բողորուած պատմութիւններուն և իր գործած շահատակութիւններուն մէջ, կար հատ մը, որ ամէնուն զարմանքին առարկայ եղած էր, և որուն ոչ մէկը կրցած էր մեկնութիւն տալ:

Գիտէին թէ՛ Սուքիաս կատու սպաննելու մոլի մըն է, թէ ձեռքը անցած կատուն կը խղղէ, յաճախ ալ ողջ-ողջ կը թաղէ, շարունակ կը հալածէ այդ նենգամիտ կենդանիները, բայց ոչ ոք գիտէր թէ ինչո՛ւ: Եւ որովհետեւ այդ գործին հեղինակը Սուքիասն էր, հարկաւ բան մը գիտէ ըսելով կ'անցնէին, առանց ուղեւոր թախանցել այդ մենամոլութեան գաղտնիքին, և միայն բաւականանալով ըսել թէ՛ այսօր ցորեկը կատու մըն ալ թաղեր է Սուքիաս, գիշերը հա՛տ մըն ալ, առտուն ուրի՛շ մըն ալ: Այս անսովոր դիտարկութիւնը մանաւանդ սեղի կ'ուսնէնար Մարտի մօտերը: Բերնէ բերան ես ալ լսեր էի այս սարաճայնութիւնը, և անհուն հետաքրքրութիւնը ունէի վայրկեան առաջ լսելու այդ գործին գաղտնիքը, մանաւանդ որ երկու խօսքին մէկը, նորերեւոյթ աղօթքի մը պէս, հոգիին խորէն հաճոյք զգալով, կը կրկնէր. — «Այս տարի շա՛տ կատու թաղեցի, շունչանորդիները . . .»: Կ'ըսէր ու կ'անցնէր, վրան խօսք բերելով, ամէն անգամ երբ այդ խօսքին բացատրութիւնը կ'ուզէի իրմէ:

Օր մը , դարձեալ , մեր սիրական սովորութեան համաձայն , լեռ էլնք ելեր , հետերնիս ունենալով ինծի հիւր բարեկամ մը , և գեղէն ուրիշ երխտասարդ մը , որ ինծի պէս հաճոյք կը զգար Սուքիասի հետը ըլլալէն , ինչպէս ինձմէ առաջ անոր քիթէն չբաժնուիր եղեր , ամբողջ խորհուրդ , առեզծուած այդ աղէն , որուն նմաններուն քիչ կարելի է պատահիլ , և այդ պատճառով ա՛յնչափ թանկագին էր անոր ընկերակցութիւնը ինծի :

Չորս մէկ երկնցած հսկայ ընկուզենի մը ձգած լայն շուքին տակ , որ լեռան կողին մէկ պատառը կը հովանաւորէր , և որ մեր սիրական յաճախավայրը եղած էր , կը ճրճրայինք ասդիէն-անդիէն , առելի կախուած մեր եղական ընկերոջ բերնէն , որ դիւթական պատմութիւններ կ'ընէր մեզի , իր դիտցածներէն :

Յանկարծ , իբր թէ դեռնէն ցցուող փուշ մը խայթած ըլլար իր նստատեղին , ընդոստ վեր ցատկեց Սուքիաս ու զառիթափն ի վար խոյսոցաւ , կարուկ աղաղակ մը արձակելով . «Կեցէ՛ք տղաք» : Վարը փուռող պարտէզի մը ցանկապատին վրայ կատու մը նշմարելով , կռահեցինք դործը : Սրարողութիւն կայ , մտածեցինք ամէնքս ալ , տենչալի գաղափարի մը հասած ըլլալու դոհունակութիւնով թէ , պիտի՞ հասկնայինք վերջապէս , պատճառը Սուքիասի կատուներու ծանօթ թշնամութեան :

Մօտենալով անսխալ կենդանիին, որ անճառելի երջանակութեան մը մէջ, կռնակը գաղջ արեւին տուած, երկու թաթերուն վրայ կը ձգտէր, գինովնալով արեւին պարզեւած հեշտանքի արփշուանքէն, երկու ձեռքերուն վրայ եկաւ աչալուրջ դարանակալը, ու կամաց կամաց սողոսկիլ սկսաւ դէպ ի անոր քովը: Սակայն զգուշաւոր ու սրականջ կենդանին, լսուած խշրտուքէն սթափելով, կասկածուտ ակնարկ մը քթթեց շուրջը, ու զինքը հալածող մը նշմարելով, մարտիս մը թեթեւութիւնով՝ ցատկեց մօտակայ ծառի մը երկճղի կոճղին վրայ, անտարբեր դիրք մը առնելով, ապահովուած թէ՛ ալ իր թշնամին չպիտի կրնար իրեն մնաս հասցնել:

«Ասանկ, հա՛, հիմա հողիդ կը լայնեմ», ձայնեց Սուքիաս, ակռաները կճրտացնելով, և մոլեգին դայրոյթով մը չեցուած: «Երկինքն ալ ելլելու ըլլաս, սղատում չունիս ձեռքէս, — վրայ բերաւ, — հի՛ մտ վար կ'առնեմ քեզ հողկէ»: Ու իրա՛ւ, անանկ քինախնդիր ցատումով մը բռնկած էր ան, և կենդանին անա՛նկ ողջ-ողջ լափելու ատելութիւնով մը զինուած ըլլալ կ'երեւար որ՝ շուտով համոզուեցանք թէ աղատում չունէր ան, երկինքներն ալ ելլելու եթէ ըլլար: Ծառը հաստ լուծով մը գօտեւորուած ըլլալով, դժուար էր վեր ելլել, մանաւանդ որ՝ իր վեր շուլուիլը՝ կեն-



դանինն բռնելու յոյսը կրնար կորսնցնել, քանի որ ան կրնար միւս կողմէն վար ցատկել: Միտքի սասանայական արթնութիւնով մը, գրպանէն լուցկի մը հանեց, ու բռնկեցուց քովը գտնուած խանձած չոր կոճղ մը, որ լուցկիի պէս դիւրավառ տերեւներով ծածկուած էր: Կոճղը կրակ առաւ անմիջապէս, ամէն կողմէ: Անոր կոթէն բռնելով, զայն քիթին երկնցուց ապահով թաքստոցին մէջ թառած կատուին: Խեղճը, յուսահատած, այրելու սպառնալիքը տեսնելով աչքին առջեւ, ասդին դարձաւ, անդին դարձաւ, ողբազին մլաւիւններ արձակեց, ու համոզուեցաւ որ ազատում չի կար, ո՛չ ալ յոյսը՝ աւելի վեր շուլլուելու, ծառին հասակը շա՛տ կարճ ըլլալով: Առջեւի երկու թաթերը կոճղի մը երկայնքն ի վար դնելով, պատրաստուեցաւ դէպի գետին ուտում մը ընելու, ճարահատութեան վերջնական գերագոյն ճիգի մը թափովը. բայց մարմինը օդին մէջ թող տուած չտուած՝ ոտքերէն մէկը ձեռք ձգեց Սուքիաս, ու դլուխն ի վար նապաստակի մը պէս կախած, մեր կողմը ուղղուեցաւ, ականջ չդնելով երբեք գոհին աղաչական ու յուսահատ մլաւիւններուն ու ազատելու համար փորձած կատաղութեան մը վերջին ճիգերուն, միշտ յաղթական գոհունակութեան մը երջանակութիւնովը օրօրուն:

Երբ մեր քովը բերաւ իր սրաք, անիծապարտ վրէժխնդրութեան զայրոյթով մը լեցուն ակնարկ մը սեւեռելով անոր վրայ .

— Կը տեսնէ՞ք սա սինլքորը, — ըսաւ, — ձեռքէս փախչելո՛ւ ալ կը յանդգնի, հիմա կը սորվեցնեմ իրեն, ողորմելի՛ մեղաւորը . . . : Այ առիթն է որ ըսե՛մ ձեզի կատուներութշնամութեանս պատճառը, — յարեց, — երբ տեսաւ որ մեր դէմքին վրայ ցոլացող լուռ հարցականով մը պատասխանը կը փնտռէինք իր այդ ընթացքին :

Նստէ՛ք որ պատմեմ, — վրայ բերաւ, — կենդանիին երկու ականջները իրար բերած, զայն միտի կտորի մը պէս կախելով վեր բարձրացած թեւէն, յանցաւորէ մը իր մեղքին համար պատասխան փնտռող ծուռ ակնարկ մը սեւեռած անոր :

Նստանք ամէնքս ալ, իր խօսքերուն անձկոտ, ու ինք ոտքի վրայ, շարունակեց .

— Կը տեսնէ՞ք, յղի է, սա սինլքոր էակը, փորը լեցուն է անշունչ կեանքերով, զորս վաղը միւս օր աշխարհ պիտի բերէ, քանի մը թշուառ արարածներ ձգնելով աշխարհի, իր բեղմնաւոր արդանդէն : Անձուռնի գոյութիւնը գտե՛ր է ալ իր փորը պտղաբերող ցանկասէր տարփածու մը, որուն յանձնուեր է ամբողջ եռանդովը իր վաւաչոտ էգութեան : Բնութիւնը իր գործը տեսեր է, ու վաղը ո՛վ

գիտէ քանի՛ հաստ իրենս նմաններ պիտի ժա-  
 ոանագէ աշխարհի, քիչ մը ատենս, մայրա-  
 կանս բնածին զգացումով, անոնց գուրգու-  
 րանքին նուիրուելէ ետքը, մոռնալու, երե-  
 սէ ձգելու համար զանոնք, և, շատ չանցած,  
 իր հեշտագրդիւ մարմինը յանձնելու պատրաստ  
 ուրիշ ցանկասէրի մը, նոր բեղմնաւորութեան  
 մը համար: Աս չէ՞ ամբողջ գործը սա խղճա-  
 լի արարածին և իր ամբողջ պաշտօնը, աշխարհի  
 մէջ: Լա՛ւ, ըսէ՛ք ինծի թէ ի՛նչ պիտի ըլլան  
 այն անմեղ կեանքերը՝ որոնք վաղը աչքեր-  
 նին պիտի բանան աշխարհի: Չէ՞ որ անոնք  
 ալ շատ շուտով պիտի խառնուին այն վշտոտ  
 ու տառապալից կեանքին՝ զոր այսօր կ'ապ-  
 րին իրենց սեռակիցները և նոյն ինքն իրենց  
 կեանք տուողները: Չէ՞ որ, ատոնք ալ,  
 քիչ ետքը, պիտի երթան աւելցնել բազմու-  
 թիւնը անոնց՝ որոնք ժանտաբոյր ու նեխած  
 աղբանոցներու մէջ, կեղտոտ անուղի մը  
 ի խնդիր, ցաւոտ կեանք մը կը քաշքշեն,  
 չգիտնալով թէ ինչո՛ւ եկած են աշխարհ,  
 ի՛նչ է արդարացումը իրենց գոյութեան, ի՛նչ  
 է իրենց կոչումը, նախասահմանութիւնը,  
 կեանքի նպատակը, և թէ ինչո՛ւ կ'ապրին:  
 Կարելի՞ է ըսել թէ անոնց կեանքը տառա-  
 պանքէ, չարչարանքէ ու մարտիրոսացումէ  
 տարբեր բան մը պիտի ըլլայ, գիշեր մը ա՛ս  
 երդիքին հիւր, գիշեր մը միւսին, ճիւնին դէմ

դողդղալով, բուքին դէմ սրափալով, ամէն  
 վայրկեան, ամէն քայլի, ենթակա՛յ ասոր անոր  
 հարուածին, իրենց ձեռք ձգելիք պատառ մը  
 չքոտի ուտեստին համար, զոր հարկադրուած  
 են անտանելի տաժանքներով, մեծ վտանգ-  
 ներով հայթայթել, և, չգտած ստեն, անօթի  
 մնալ, դատարկ ստամոքսով կծկոտիլ անկիւն  
 մը, ու դոփալ: Շարունակ մէկ անկիւնէն  
 միւսը քաշքշել իրենց կմախացած, չոր ու  
 դիակնային մարմինը, թշուառ ու եղկելի: Եւ  
 ինչո՞ւ համար այս բոլոր չարչարանքները,  
 անխմաստ ու անասոյգ տաժանքը կեանքին. —  
 որովհետեւ երկու գարշելի արարածներ ուղած  
 են յագուրդ տալ իրենց անսանական ցան-  
 կութեան: Չեմ ըսեր թէ իրենք են պատաս-  
 խանատուն այս մեղապարտութեան, երբ  
 բնութիւնն է որ ցոյուցեր է իրենց այդ ճամ-  
 բան, և լաւագոյն օթեւան մը, նպատակ մը,  
 կոչում մը չէ՛ սահմաներ իրենց կեանքին:  
 Բայց քանի որ հիմա իրե՛նք են անգիտակից  
 դերակատարները այդ մեղքին, պէտք է որ  
 իրե՛նք ըլլան նաեւ քաւութեան զոհերը: Ին-  
 չո՞վ յանցաւոր են այն անմեղ հոգիները՝ որոնց  
 վաղը կեանք պիտի տայ սա պոռնի՛կ ար-  
 գանդը, և որոնք աչքերնին բացած օրեր-  
 նուն՝ չարչարանքի, տուայտանքի անխմաստ  
 ու աննպատակ կեանք մը պիտի ողջունեն:  
 Առանց այս պոռնիկ ծնողքներուն մեղանշան-



քին, ծնունդ չպիտի առնէին այն կեանքերը, որոնք աշխարհ կուգան դիպուածաբար, բեղմնաւորուած անգիտակից կամքէ մը, առանց նպատակի, առանց գոյութեան իրաւունք մը կանխասահմանուած ունենալու: Պէ՛տք է ուրեմն իր տհասութեա՛նը մէջ ոչնչացնել այն անպիտան սաղմը, որ վաղը կեա՛նքը պիտի շնչաւորէ ոչնչութեան ծոցէն ծաղկած աննպատակ գոյութիւններու, և որոնք իբր մէյ մէկ կեանք՝ պիտի սկսին շնչել ու Ապրիլ: Ոչնչութեան արգանդէն ծաղկող այդ անպէտ պտուղներուն դեռ կեանքի շունչովը չոգեւորուած՝ Ոչնչութեան գոգը դրկուիլը՝ մեծագոյն բարիքն է զոր ես կրնամ գտնել ընելու, իր սաղմին մէջ սպաննելու համար՝ թշուառութիւնը ու տառապանքը ապրելու պատրաստուող կեանքերը:

«Լա՛ւ է որ անոնք ծնունդ չառնեն ու չքանան այն կեանքերը, որոնք ո՛չ մէկ իմաստ պիտի ունենան իրենց համար: Ասոր համա՛ր է ահա, որ ես թշնամի եղած եմ ոչ միայն կատուներու, այլ ուրիշ կենդանիներու ալ, բռնելու և թաղելու համար զիրենք իրենց մեղքին հետ, որպէս զի իրենց պիղծ ու մեղապարտ արգանդը չբեղմնաւորէ իրենց գոյութեանը և պատճառին անգիտակից, դիպուածաբար ու ակամայ աշխարհ եկող ծնունդներ»:

Լուրջ շեշտով մը վերջացնելով իր խօսքը Սուքիաս, երկու մատերուն մէջ առաւ պարանոցը կենդանիին, որ ուժաթափ ու ամքած, կախուած էր մինչեւ այն ատեն իր ականջներէն, և ուժով մը սկսաւ սեղմել, վրիժառու ցատումով մը:

Կենդանին սկսաւ պրկուիլ ու գալարուիլ մարմինին վրայ, թաթերը ճօճելով ջղաձգական տազնապի մը մէջ:

— Դարձի՛ր, դարձի՛ր, գարշելի՛ պոռնիկ, որ պիղծ կիրքիդ խնկարկումին համար, չե՛ս գիտեր թէ ի՛նչ կ'ընես, երբ հեշտանքի աղբիւր մարմինդ կը յանձնես էրկանդ վաւաշոտ գրգիռներուն, դարձի՛ր, դուն որ քանիներո՛ւ մեղքը գրեցիր ճակատիդ, այդ վայրկեանին, և զոր հիմա փորիդ մէջ կը անուցանես, կը մեծոյնես, դարձի՛ր, — կը կրկնէր Սուքիաս, մեզերայի մը դիւթութիւնովը շարունակելով կենդանին խղղելու իր գործը, առանց ցաւ դգալու, անտարբեր, ինչպէս վարժ մսագործ մը մեծ պաղարիւնով կը մորթէ ոչխար մը:

Երբ անշնչացաւ դիրուկ փորով կատուն, Սուքիաս զայն գետին նետեց բունն ատելութեան արտայայտութիւնով մը: Ու, «Կեցի՛ր, հի՛մա կը դրկեմ քեզ սիրականիդ քով», մուտալով, կոճղի մը ծայրովը փորեց կակուղ գետինը, ու նետեց դիակնացած մարմինը փոսին մէջ:

— Պառկէ՛, բեղմնաւոր արգանդ, պառկէ՛, — կը կրկնէր, հողը վրան գոցելով, — և թող կուրծքիդ տակ ապրող զաւակներդ՝ տակաւին չչնչաւորուած՝ չքանա՛ն իրենց սաղմին մէջ: Կեանք առնելէ, շնչաւորուելէ ու աշխարհ գալէ ետքը, դարձ չի կա՛յ ալ: Այն ատեն, Կրե՛լ միայն կը մնայ տառապանքի ցաւը այն բեռին՝ զոր Կեա՛նքը իսկ կը նետէ որ և է էութեան մը ուսին, դատապարտելով կրել, քաշքշել դայն, ուղեւո՛ւ վ չուղելով, իյնալո՛ւ ելլալով, ակամա՛յ, ստիպուա՛ծ, ճակատա՛ դրապէս, անդառնալի՛ օրէն: Պէ՛տք է չբողբոջի՛լ, չողեւորուի՛լ, չճննդաւորուի՛լ, չկենդանանա՛լ այն շունչով՝ որ Կեանքի կայծը պիտի վառէ գործարանաւորութեանը մէջ կենդանիին: Ոչի՛նչ պիտի կորսուի անշունչ սաղմին Չնչումովը, որ, չնչի՛ն Հիւլէ անկենդան գոյութեան, պիտի երթայ կորսուիլ մեծ զանգուածին մէջ հսկայ Ոչինչին: Իսկ տարասեռներու հեշտանքին համար սարքուած պիղծ պատարագէ մը բղխող կեանքի բոցին մօր մը արգանդի տաճարին մէջ կածկլտաւով, արծարծելով, բռնկելով իբր կենսաւոր էութիւն դուրս գալը՝ չէ՞ որ պիտի ըլլայ այն ահաւոր Մեղքը, որ Մնած ու Մնցուցած ըլլալը իսկ է: Ամէն անդորրութեան հանգրուան յաւիտենական հանգիստիդ մէջ պառկէ՛, վաւաշո՛տ պոռնիկ» . . .

Խորհրդաւոր ու միաթիք դամբանական մըն էր աս՝ եղկելի մեռելին վրայ՝ զոր վեհաշուք ու լուրջ շեշտի մը մէջ աւարտեց դամբանախօսը: Ու արտասովոր դիւթաղի մը խորհրդաւոր երեւոյթով, Սուքիաս աւարտեց իր մեռելաթաղի ահաւոր պաշտօնը: Ու մենք, լո՛ւռ յուղարկաւոր այդ նորանշան թաղումին, փակեցի՛նք գերեզմանը կեանքի մը վրայ, որ արժանի շիրիմի մը մէջ հանգչած էր:

Դարձին, տպաւորուած խորհրդաւոր զգայութիւններէն մեր յուղարկաւորութեան, ինձի ընկերացող բարեկամս, մօտենալով ինձի.

— Իրաւո՛ւնք ունի, — փսփսաց, — մտածկոտ ու լուռ խորհրդածութեան մը սեւեռուն:

— Մինակ կատուներո՞ւն համար, թէ բոլոր կենդանական գոյութիւններուն, — կը պատասխանէի:





# Ս Է Ր Ը

## Ա.

Երբ օր մը չափահաս ըլլար, ու խելքը հասնէր աշխարհի իրերուն, տարտամ յիշատակ մը պիտի ունենար Մանօ, այն կեանքին վրայ, զոր ապրած էր ամբողջ իր մանկութեանը շրջանին, և չարչարանքներով, դառնութիւններով, անկեալ թշուառութեան մը դժբաղդութիւններովը լեցուն իր անցեալին ուրուանկարը պիտի պատկերանար աչքին, տազնապներով անցուած աղօտ երազի մը պէս, որուն մեծ գիծերը կորսուած կ'ըլլան միտքէ, երբ մարդ կը սթափի անկէ, բայց որուն ցաւատանջ դրուագները և անցքերը խոր սարսուռով մը կը համակեն հոգին, երբ նոր վելյիշում մը կ'ունենայ երեւակայութիւնը:

Այն օրէն, երբ աչքը բացեր էր աշխարհի, ու ոտքերը սկսեր էին կրել իր վտիտ մարմինը, ինքզինքը փողոցն էր գտեր, անկարող դեռ՝ ինքզինքը պաշտպանելու՝ աշխարհի փորձութիւններուն դէմ, մաքառելու զինքը

դիմագրուող դժուարութիւններուն հետ, եւ անխորձ, անվտանգ ելլելու այն ամէն արկածներուն մէջէն, զորս կեանքի պայքարին աղմկայոյզ թոհուբոհը կը ստեղծէ կեանքի բեռը ուսը առնող հոգիի մը գլխուն: Ու դեռ ի՛նք կարօտ՝ պաշտպանող, պատապար թեւի մը, ինքզինքը գտեր էր պարտականութեանը մէջ ի՛ր և ուրիշներու վրայ մտածելու, ապաստանած ամբողջ ուժին իր ճղճիմ դոյութեան, իր տկար ու չքոտի հոգիին, իր անարժէք ու չնչին Նսին, որուն ամբողջ զօրութիւնը պէտք էր որ սպառեր աշխարհիկ ամէն դժուարութիւններէ յաղթող ելլելու մեծ ջանքին, որո՛վ միայն զերծ կրնար մնալ զինքը ընկճող հոգերէն:

Մուրացիկ տղու կեանքն էր իրը, կեանքը անոնց՝ որոնք շա՛տ կանուխ կը յանձնուին աշխարհի փոթորիկներուն, անզօ՛ր դեռ՝ մարանչելու յեղակարծ հողմերու հոսանքին դէմ:

Երբ հազիւ ոտքի ելած, լեզուն բերնին մէջ սկսեր էր քիչ մը դառնալ, և կրնար իր մանկական պզտիկ գաղափարները արտայայտող քանի մը կցկտուր ու սխալմիտալ բառեր թոթովել, Մանօ գործի հանուեր էր, նորընծա՛յ աշակերտ Մուրացկանութեան արուեստին, ատով օգնութիւն մը ընելու, նպատա մը հասցնելու համար

իր ծնողքին ինկած կայութեանը, այն չափով՝ որչափ կրնար սպասուել իր անդօր էութեան բոլոր չնչին կարողութիւններէն:

Հայրը, իր դաւակը ճանչնալէ առաջ մեռեր էր, ու Մանօ, հիմա, մօրը կողմէ կը դրկուէր քաղաք, հոն աշխատելու և իր մանկական ճիգերուն արդիւնքը բերել դոգը թափելու համար մօրը, որ ա՛յնչափ կանուխ կը զրկէր զինքը իր խնամքներէն, ու իր դաւկին օգնութեանը, ջանքերուն, աշխատութեանը կ'ապաստանէր այդպէսով, իր սէքերուն համար, զայն գործիք դարձնելով այն արուեստին, որուն աշխատաւոր մըն էր եղած նաեւ ինք, և որ է՝ դաս փրկութեան ճամբայ մը չգտնելու չափ կարճամիտ ու իր դաւակը դէպի այդ գործը մղելու չափ անխղճահար կը գտնուէր:

Չեռք բանալու վարժուող ստորնալիցած հոգիներու բնական մղումը, մուրացկանութեան դիւրութիւնները ճաշակող մօր մտածել կրցած միակ ելքի ճամբան էր ադ, որով Անձին ու Եսին գիտակցութենէն դեռ դուրկ հոգի մը՝ կ'առաջնորդուէր գործի մը, որմէ չկարենար ազատիլ թերեւս մինչև վերջը, անգամ մը ի՛նք ալ իր հոգին խաթարելէ, աղարտելէ ետքը անոր ապականած միջնորդութիւն:

Մայրը, քանի մը շաբաթ խղճամիտ դասաւանդութիւն մըն էր ըրեր, ընդգրկելիք

արուեստին պատրաստուող իր մանչուն , և , համողում գոյացնելէ ետքը թէ , բաւարարապէս աւանդած է նախնական անհրաժեշտ գիտելիքները այդ գաղտնալից արուեստին , քաղաք էր բերեր զայն , իր օրինակովն ալ վարժեցնելու համար քիչ մը ատեն . և քանի մը օր ետեւէն պատոյնելէ ու փողոցներուն ծանօթացնելէ ետքը , ա՛լ թողեր էր ոչ մնացածը ի՛նք սարլի , արուեստին կենդանի՛ դպրոցէն :

Ու ան , հիւսա , ճշգապա՛ն հետեւորդ իր կոչումին , առտու իրիկուն , կանոնաւորաբար կը չափէր երկայնքը գլուխէն քաղաք բերող ճամբուն , առտուն , մութն ու լուսուն , ճամբայ իցնալով , և , իրիկունը , ուշ ատեն , յոգնած և ուժաբեկ՝ իր անխնայ դեզերունմներէն , ուղղուելով իր հլուակը , դէպի այն երդիքը , որուն տակ մայրը իր գաղաւտին ու վատասկին կը սպասէր , անհամբեր անձկատութիւնով :

Ա՛ն այդ ճամբան , երկար ու անվերջահալի , շա՛տ ծանր կուգար իր սրունքներուն , ու հողի՛ն կը մաշեցնէր , իր փոշոտ ու քարատ երկըը սրարած ա՛նայի ցանքերու մէջտեղէն , դար պէտք էր կոխտանել , հատոյնե՛լ , իր սղտիկ քայլափոխներով , և իր բոսլիկ տաքերը յաճախ կը վիրաւորուէին փոշիներու տակ ծածկուած աննշմար , խարդախ քարերէ , որոնց հարուա-

ծէն ժայթքող արիւնը հո՛ղն էր որ կը չորցնէր  
 դարձեալ, ու մինչև որ ծայրը բերէր այդ  
 անուպայ ուղիին, քիթը-բերանը կը լեցուէր  
 հողով ու փոշիով, ու մարմինը և խեղճուկ  
 ցնցոտիները կը ծեփուէին անոնց դորշ խա-  
 ւովը, անձանաչելի կերպարանքի մը մէջ  
 մացնելով զինքը, — սակայն, ի՛նչ ընել, յի-  
 ճակուած էր իրեն այդ կոչումը, ա՛դ էր իր  
 գործը, պէ՛տք էր կատարել դայն, ուզելո՛ւմ  
 չուզելով, իյնալո՛ւմ ելլալով, մեռնելո՛ւմ կեն-  
 դանանալով, քանի որ չնչին շահէ մը զրկուե-  
 լու հոգէն դատ, կար հաւել մօտը սպառնա-  
 լիքը, որմէ ո՛ր և է քանի տակի կը սարսա-  
 փէր: Մայրը, զինքը գործի հանած ատեն,  
 իր լսույ պատուէրներուն հետ, դռաշօած էր  
 հաւել սա՛ մեծ պատգամը թէ՛ պարապ ետ դառ-  
 նալու չէ, այլ պէ՛տք է անպատճառ այն ինչ  
 չափի որոշ գումարը ունենալ, ի՛նչ որ ալ  
 ըլլայ, ապա թէ ոչ, ադկէ պակասին իւրա-  
 քանչիւր տանուց գլուխ, բիրի կամ կամիթի  
 հարուած մը կար իրեն պտալժ, զոր գոր-  
 ծադրելուն այնչափ անկասկածելի կերպով  
 վստահեցուցած էր զինքը, և քանի մը ան-  
 գամ ալ սպացուցած: Խեղճ ու անմեղունակ  
 հոգի, չէր գիտեր թէ՛ ինչո՞ւ արժանի էր այդ  
 բոլորին, ինչո՞ւ դատապարտուած էր այդ  
 տաժանելի շարչարանքներուն, և առիւտուած՝  
 աշխատելու, տանջուելու՝ մօրը համար, և



մտմտալու օրապահիկին վրայ ուրիշի մը, երբ  
 ի՛նք պէտք ունէր դեռ խնամքի և հոգա-  
 ծութեան: Բնականաբար, ա՛ղ ըլլալ կարծած  
 էր սակայն ճակատագիրը ամէն տղու, և  
 անտրտունջ համակերպութիւնով, կը հնազան-  
 դէ՛ր ամէն այն պատուէրներուն ու հրաման-  
 ներուն՝ որոնք կուգային մօրմէն: Եւ այդ  
 գաղափարին հաշտուելու պզտիկ պատճառներ  
 ալ ունէր, որովհետեւ, կը տեսնէր որ, հո՛յնը  
 կ'ընէին իրենց գիւղին հասակակից տղաքը,  
 ու քիչ մը՝ տարէցնե՛րն ալ: Իսկապէս գիւղ  
 մը չէր սակայն այն կայքը, ուր վիճակակից  
 խումբ մը տնւորներ շրջանակ մը կազմած  
 էին, քաղաքէն հեռու դաշտավայրի մը գոգը,  
 ափ մը գետինի վրայ մէյ մէկ տնակ հաստա-  
 տելով, ծածկուած՝ սեւցած ու ժանգոտ թի-  
 թեղներու թերթերով, կամ ցախերով և շա-  
 դախուած հողի պատառներով: Աղկէ աւելին  
 չէին կրնար ունենալ արդէն, ամէնքն ալ ըլ-  
 լալով բաղդակից չքաւոր տնւորներ, քանի  
 մը անդամով կազմուած ընտանիքներ, որոնք  
 զուրկ արհեստէ ու աշխատութեան դիւրու-  
 թիւններէ, կ'ապրուէին հաւաքական այն  
 արդիւնքով, զոր ընտանիքին անդամները  
 առանձնաբար կրնային հայթայթել իրենց ողոր-  
 մելի զբաղումներով: Մեծերը քիչ մը բան կը  
 վաստկէին բաղուկներու բիրտ ուժին միջո-  
 ցով, կլիները ու տղաքը մուրալով, և ոմանք

այ՝ տուներ կը մնային, անգործ, ուրիշներու՝  
ընտանիքին աշխատող տարրին ձեռքը հայելով :

Հող էր որ ինկած ելած էր հաւ Մանօ,  
իր մանկութիւնը անցուցած դրկից տղոց հետ,  
հողերուն հետ խաղալով, ընտանի անասուն-  
ներու հետ գլտորուելով արեւոտ մարդերուն  
մէջ, մինչեւ այն տարիքը, երբ մայրը ա՛լ  
յարմար նկատեր էր զինքը Գրամի Հալածան-  
քին լծելու, ա՛յն եղանակով, որուն յղացում  
կրնար տալ իր միտքը :

Կամաց-կամաց, ա՛լ վարժութիւններ ձեռք  
բերած էր Մանօ, ու մօրը պահանջներուն  
գոհացում տալու չափ արդիւնք մը կը շինէր  
մինչեւ գիշեր, հանդիպողին ձեռք բանալով,  
ետեւն ի վեր վազելով հապշտապ ընթացող  
անցորդներու, գոց սարվուած իր քանի մը  
խօսքերը շրթունքին ծայրը, զոր անսխալ  
ու տեւականապէս՝ կը կրկնէր, անխոնջ ու  
հեւ ի հեւ, լմնցնելէ ետքը ծայրէն վերատին  
սկսելով իր գոցը, աղաչելով, հայցելով, գթա-  
շարժ դիմագլիծեր շինելով, միմոսական ծա-  
մածուութիւններ ընելով, մինչեւ որ, անցորդը,  
գթալով, կամ այդ խեղկատակութիւններէն  
թուլնալով, ջնջին պարգեւով մը գոհացում  
տար իր պաղատանքներուն : Երթալով, շաա-  
ցեր էին իր ծանօթները, մտերիւմ դէմքեր էին  
եղեր անոնցմէ ոմանք, զորս փողոցի մը ծայ-  
րէն հշմարածին պէս, Մանօ կը վազէր դէպի

անոնց կողմը, իր առօրեայ խնդրանքը կրկնելու, իր աղաչական բացազանչութիւնները յեղյեղելու, օղին մէջ հովթփելով իր պատասաժ ու հազար կարկտանով ցնցոտիները, որոնք հազիւ կը ծածկէին մերկութիւնը իր պղտիկ մարմինին, որուն ուժը չէր բաւեր շատ անգամ համակու արագոտն անցորդներու քայլերուն:

Իր հեւ ի հեւ վազքին մէջ, յաճախ, շնչաապառ, բաւական ետ մնացած հետապնդած քայլերէն, ձեռնուճայն կանգ կ'առնէր, կամ, երբեմն, սրունքներուն ուժը վատնած՝ կարողութենէն վեր արշաւի մը մէջ, կը գլտորէր, կրկին ելլելով վազվզելու, կամ ետ դառնալու համար, քիչ ետքը ուրիշի մը ետեւէն ինկած: Կը նշմարէր որ, դէմքերը ո'րչափ մտերմանային իրեն, ա'յնչափ իրենց գթասիրական զգացումները շուտ կ'արթննային: Ատիկա կը քաջալերէր դինքը իր աշխատութեանը մէջ ջանքերը կրկնապատկելու, նոր խանդով փարելու անոր, և խպլիկ խօսքերով, շարժումներով, դխմադիծերով, փայփայելու ամէնքը:

Յաջողութիւնը սկսեր էր դգուել իր ջանքերը, և, որչափ ալ դեռ տղայ և անխելահաս մարդոց հոգեբանական վիճակներուն, բնազդաբար կրցեր էր տիրանալ այն յատկութիւններուն, որոնցմով իր ճիգերը փայլուն

արդիւնքներ կրնային ունենալ: Հիմա ա՛լ կրնար իրմէ պահանջուած գումարը առաջ-  
 ուանէն դիւրին հայթայթել, ինքնիրենը ծա-  
 հօթացած ըլլալով այն փողոցներուն, ուրկէ  
 հաց կրնար ելլել, և այն դէմքերուն՝ որոնց  
 եղած դիմումը ապարդիւն չէր ըլլար:  
 Ատանկով, կրնար մօրը սպասած գումարէն քիչ  
 մը բան ալ աւելցնել, զոր կը յատկացնէր,  
 գաղտագողի, պտուղ առնել ուտելու, իր  
 մանկական անդիմադրելի ցանկութիւններուն  
 մէջ պահ մը մոռնալով մօրը պատուէրը,  
 որով աղդարարած էր իրեն՝ բերել ինչ որ  
 ձեռքը խնար տուներէ, կամ եթէ աւելնար  
 դրամը՝ կերուխումի չվառնել: Ու շահագոր-  
 ծելով անոր տղու միամտութիւնը, լսած էր թէ,  
 բերանը հոտուրտալով, կը հասկնա՛յ ատանկ  
 զեղծում մը ըրած ըլլալը, որուն մասնաւոր  
 պատիժ մը սահմանած էր: Իրաւ է թէ կ՛ա-  
 հարեկէր ան այդ պատիժին հեռանկարէն,  
 սակայն յաճախ ա՛յնչսօի անդիմադրելի կը  
 զգար իր այրող կոկորդը՝ անուշեղէնով մը  
 կամ պտուղով մը զովացնելու փափաքը, և  
 իր տղու ճաշակներովը ա՛յնչսօի կը յափշտակ-  
 ուէր տեսքէն ջրոտ պտուղի մը, որ ամէն  
 բան մոռնալով՝ կը յանդգնէր իրեն արգիլ-  
 ուած զեղծումը գործելու:

Ինքատի տղեկը, առանց որոշապէս գի-  
 տակցելու դառնութեանը այն ստորնացուցիչ

դիրքին, որուն մէջ կը գտնուէր, կ'օրօրուէր գոհունակ ու միամիտ մխիթարութիւնովը իր առօրեայ յաջողութիւններուն, և չունենալով որոշ գիտակցութիւնը Երջանկութեան ու Դժբաղդութեան, ինքզինքը դժբաղդ չէր զգար, որչափ ալ անհանդուրժելի ու սանջանալից ըլլար իր կեանքը ու ապրելու եղանակը:

## Բ.

Յեղակարծ պատահար մը սակայն, որուն քնաւ չէր սպասեր և որով չէր կրնար մտահոգ ըլլալ երբեք, խռովեց կեանքը Մանօի և զինքը ամէնէն անհանդուրժելի փորձութիւններուն մասնեց:

Իրենց կայքէն դրկից կին մը, գիշեր մը եկեր էր Մանօի մօրը, խնդրելու համար անկէ որ, իր աղջիկը, Շամէ, որ ալ սկսեր էր ճշտորիլ քիչ մը ու ոտքերը սկսեր էին հաստատ քայլեր առնել, ընկերացնէ Մանօի, մէկտեղ քաղաք երթալու համար, ուր սորվեցնէ անոր՝ իրեն պէս ապրուստ մը հայթայթելու եղանակը, մուրալու արուեստը: Բնական բան մը կ'երեւար այս միջոցին դիմելը՝ որչափ այդ կնոջ, նոյնչափ միւսին: Տղուն մայրը քիչ մը մտածեր էր այս առաջարկին վրայ, և, նախկին փորձ աշխատաւոր Մուրացկանութեան Դպրոցին, գուշակելով յոռի հետեւանքը՝ որ պիտի ծագէր ադկէ,



իր տղուն համար, նախապէս դէմ կեցեր էր այդ գաղափարին, սակայն կարգ մը ուրիշ նկատումներով, տեղի տուեր էր ետքէն, ընդունելով որ յաջորդ օրը երկու պղտիկները մէկտեղ երթան քաղաք, ու Մանօ աղջկան սորվեցնէ ի՛նչ որ պէտք էր ընել:

Մայրը հաւանութիւն յայտնելէ ետքը, Մանօ չէր կրնար անպատեհութիւն մը նշմարել այդ ընկերակցութեան մէջ, որով սիրայօժար յանձն կ'առնէր յաջորդ առտուն ընկերով մը ճամբայ ելլելը, մանաւանդ տարասեռ ընկերով մը, որովհետեւ, է՛հ, գիտնա՛նք որ՝ տղոց սիրան ալ կը բարախէ այն մեծ սարսուռով՝ զոր Սէրի կայծը կը բռնկցնէ հողիներու մէջ:

Փոփոխումը կեանքի այդ միօրինակութեան, որմէ տաղտկացած էր ալ մուրացիկ տղեկը, երկու տարիէ ի վեր, նոր ոգեւորութիւն մը բերաւ իր վրայ, ու յաջորդ օրը, խնդում-երես ու կայտուելով, երկու գեղջուկները, ձեռք ձեռքի, ճամբայ ինկան դէպի քաղաք:

Այդ օրը շատ երջանիկ կը զգար ինքզինքը Մանօ, ու այն փոշոտ երկա՛ր ճամբան, որմէ հո՛գեւին զզուած էր, և զոր քալելո՛վ քալելով չէր կրնար հատցնել, իր բոսիկ ու մանկական տոտիկներովը, հիմա այնչափ երկար չէր երեւար իրեն, ու հաճոյքով կը վազ-

վզէր անոր երկայնքին, խօսակցելով իր նոր ընկերուհիին հետ, անոր բացատրելով նոր-նոր բաներ, չգիտցածները սորվեցնելով ու շտեմածները ցուցնելով: Երբ քաղաք մտան, Մանօ շատ բաներ պատմեց Շամէի, որ ապ-չահար կ'ուռնկնդրէր, լսածները իր աղու երեւակայութեան մէջ կը խոշորցնէր, և կը շլանար, կը յափշտակուէր անոնց իրեն առ-թած հմայքէն: Հոն սակայն, Մանօ, բնագ-դարար մենամտ զարձած իր մուրիկի հետա-պնդումներուն, մուսյաւ պահ մը իր ընկե-րուհին, նուիրուելու համար իր աւօրեայ դբա-դումին: Աղջիկը, իր առաջնորդին քղանցքը չի ձգելու ճիգերով, ու վախով թէ՛ կրնայ կորսնցնել դայն, կը վազվզէր անոր ետեւն ի վեր, իր անվարժ սրունքներուն բոլո՛ր ուժովը:

Առջի իրիկունը, աղջիկը բան մը չկրցաւ տանիլ տուն. քայց ատոր համար չէին կորսար կշտամբել զինքը: Մայրը վստահ էր որ աղ-ջիկը օր մը յաջող վասակուոր մը կ'ըլլայ, որովհետեւ, աչուր աչուրներ ունէր ու դիմա-գիծերու յանկուցիչ գեղեցկութիւն, ինչ որ մուրացկանութեան արուեստին մէջ մեծագոյն դրամադրութիւններէն են: Ու իրաւ, աղջիկը օ՛ր օրի սկսաւ վնայուն քայլեր ցոյց տալ, և իր վրայ դրուած ակնկալութիւնները պատկել շացուցիչ արդիւնքներով: Իր տեսքը չէր

կրնար անուշադիր մնալ անցորդներէն, —  
 անյնչափ սիրուն էր երեւոյթը ու գրաւիչ էին  
 իր շարժումները և մանկական աղաչական  
 ձեւերը: Սո՛րապէս արտայայտիչ ու վճիտ  
 կապոյտով մը փալփլուն իր աչքերը՝ արտա-  
 սովոր շնորհք մը կուտային իր կլոր խատու-  
 տիկ դէմքին, որ խարտեաչ մաղերու ան-  
 խնամ և ունի ի վար թափուած խուրձովը  
 շրջանակուած, զարտուղի թովչութեան մը  
 զեղովը կ'աղւարցնէր թշուառութեան ու  
 ազեղութեան բոյնի այդ զաւակը:

Մանօի դեղերած փողոցներուն մէջ, հիմա  
 իրմէ աւելի ա՛ն էր ուշադրութեան և հոգա-  
 ծութեան առարկայ, և անցորդներ չէին կրնար  
 աննշմար անցնիլ քովէն թշուառութեան այդ  
 դոհին, որուն տեսքը իրենց սիրտը կը շար-  
 ժէր, և ամէնէն կարծրասիրտները անգամ,  
 կը տկարանային իրենց անողոքութեանը մէջ,  
 վարձատրելով դինքը այն խնդրանքին մէջ, զոր  
 անյնչափ արտադրու կերպով կ'ուղղէր հան-  
 դիպող ամէն անցորդի, ակնարկը անոնց աչքե-  
 րուն սեւեռած, ետեւնուն առջեւնուն ոտառու-  
 տելով, ետ մնալով, առաջ անցնելով: Մա-  
 նաւանդ տարէց կիներ, չէին կրնար զսպել  
 իրենց խանդաղատանքը, և, յաճախ, — թե-  
 րեւս զաւկի մը կարօտովը տոչորուող կարօ-  
 տակէզ մայրեր, — անոր ամբողջ լիառատ պարզ և  
 մը սահեցնելէ ետքը, կը չոքէին, իրենց մար-

մինքն անոր հասակին հաւասարոյնելով, զայն  
գգուելու համար իրենց կուրծքին վրայ, շո-  
յելու համար փայլուն, աղւոր մազերը, որ-  
չա՛փ ալ անոր կեղտոտ երեւոյթը պժգանք  
ազդելու բնոյթը ունենար:

Հիմա յաջողութեան ճամբան գրկած էր,  
և մեքենարար ուսած՝ ի՛նչ որ պէտք էր իր  
դիմումները արդիւնաւորելու համար: Մայրը  
գոհ էր որ աղջկանը հրապոյրները լաւագոյն  
կերպով կը շահագործուէին: Ու պզտիկը,  
քաջալերուած քիչ ատենուան մէջ ձեռք բերած  
իր յաջողութիւններէն, շլացած դրամի հա-  
տիկներու տեսքէն ու մանկական գոհունա-  
կութիւնով թէ՛ անոնցմով մայրը կը հրճուե-  
ցնէր, կը կրկնապատկէր հետզհետէ իր ջանի-  
քերը, կ'ողեւորուէր:

Սակայն Մանօ աղէկ աչքով չէր կրնար  
հայիլ այս բոլոր անոցած-դարցածին: Ընկե-  
րուհիին յաջողութիւնները ո՛րչափ փայլ ստա-  
հային, ա՛յնչափ կը սկսէին նուազիլ իր հա-  
սոյթները, և կը տեսնէր որ, իրեն տալ սովո-  
րած բոլոր մնայուն իր ողորմատուները, հիմա  
կամաց-կամաց կ'անցնէին միւսին, չէ՛ր գի-  
տեր ի՛նչ անբացատրելի ու դաղտնապից սլատ-  
ճաւով: Շատ անգամ ի՛նք էր որ լեզու կը  
թափէր, կը յողմէր, կը սլաղատէր, և կը  
տեսնէր որ, մի՛ւսը կը տիրանար նուէրին:  
Յափշտակել անոր ձեռքէն՝ չէր ըլլար, որով-

հետև աղջիկը կը պուռար բոլոր ուժովը, և անցորդներուն միջամտութիւնը կը հրաւիրէր: Քանի մը անգամ ամայի տեղեր ուզած էր փորձել այդ ձեռնարկը, բայց նորէն չէր յաջողած, որովհետև սատանորդի աղջիկը, իր խելքէն վեր մտածումը ունեցած էր՝ դրամները տեղաւորելու մինչև պորտին վրայ, զգեստին ներքնակողմէն կախուած քսակի մը մէջ, և եթէ ակռաներն ալ քակելու ըլլար՝ չէր կրնար առնել, ա՛յնչափ ամուր կը փարէր իր պզտիկ հարստութեան, կը սեղմէր զայն տղեկի տկար ձեռքերուն բոլոր ուժովը: Ճամբան ալ չէր կրնար ընել այդ քանը, քանի որ մօրը լուր տալու վախը կար, ինչ որ մեծ գայթակղութիւն կրնար առաջ բերել երկու դրկից տուներուն միջև:

Անհանդուրժելի էր կացութիւնը Մանօի համար ու ընդվզեցուցիչ: Իր թափած քրտինքներուն, իր ցանած սերմերուն պտուղը հիմա Ուրի՛շ մը կը քաղէր անխնայօրէն, ու ինք գրեթէ բացը կը մնար: Հասոյթները սկսեր էին հիմա քիչնալ, ու քանի մը անգամ դրամը պակաս գալով, մօրը սպառնալիքները սաստկացեր էին, և պատիժները շատ կակծալի էին եկեր սիրտին, քանի որ անձնապէս յանցանք մը չունէր ինք:

Ըմբռնումներուն հետևանքով այն բնակչութեան՝ որուն կը պատկանէր, բաժնաւիլ ալ



չէր կրնար իր մրցակիցէն. ատիկա կրնար  
 իրենց դրկիցներուն զայրոյթը գրգռել, ու  
 պարսաւի, լուտանքի հոսանք մը հրաւիրել  
 իրենց վրայ: Տաժանելի էր այս կացութիւնը,  
 և ո՛ր և է կերպով փրկութեան ճամբայ չի  
 կար Մանօի համար, որ խոր ատելութիւնով  
 մը կը լեցուէր հետզհետէ՝ հանդէպ Միւսին,  
 ու կը չարչարուէր այդ զգացումին իր ներսը  
 արթնցուցած կիրքերէն: Կ'ուզէր թօթափել  
 վրայէն զինքը ընկճող պատուհասը. չէ՛ր  
 կրնար: Այդ զայրոյթը, այդ ատելութիւնը,  
 հետզհետէ կը մեծնար իր մէջը. ու կը կրծէր  
 հոգին, անհուն տազնապի մը մատնելով իր  
 դիւրաբեկ էութիւնը, որ կը ճնշուէր ծանրու-  
 թեանը տակ զինքը խոշտանգող հարուածին:  
 Միտքը կը հալածուէր գիշեր ցորեկ, ուրուա-  
 կանէն այդ աղջկան, որ իր երջանկութիւնը  
 խանգարեր էր, իր բաղդը սլափորեր էր: Ու  
 իր տղու երեւակայութեանը մէջ, ծրագիրներ  
 կը յորինէր՝ ջնջելու այդ Միւսը, որուն ներ-  
 կայութիւնը զինքը անհանդիստ կ'ընէր, կը  
 խռովէր ու կ'ահաբեկէր: Կը սոււայտէր  
 սուր վիշտովը հողեկան այդ խռովքին ու  
 անհուն սանջանք մը, որ ո՛ր օրի կը մեծ-  
 նար իր մէջը, կը լկէր զինքը չարաչար, իր  
 ծիծաղկոտ օրերը դժբաղդութեան սև տեսիլի  
 մը փոխակերպելով: Կ'ուզէր, եթէ կարենար,  
 հոգի՛ն առնել այդ Միւսին, որ իր երջանկու-

Թիւնը յափշտակեր էր ձեռքէն, իր բա՛ղդը պղտորեր էր: Կ'ատէր, հո՛գեւին կ'ատէր այդ ինքնակոչ Միջանկեալը, որ բաղդի գուռին վրայ զինքը դիմաւորեր, զինքը կասեցուցեր էր, ու ի՛նք առաջ անցեր էր, տիրանալու համար այն վայելքին, զոր ի՛նք էր պատրաստած, որուն համար ի՛նք էր քրտինք թափած, և որուն ոչ մէ՛կը իրաւունք ունէր միջամտելու: Այդ անհանդուրժելի զրկանքին հա՛նար ուրեմն, կ'ատէր զայն, իր զգացումներուն ու հոգիին բոլո՛ր ուժովը, կը սոսկար անկէ, կը խորչէր անոր ներկայութենէն, կը հալածուէ՛ր շարունակ անոր ուրուականովը: Կ'ուզէր, եթէ կարենար, հոգի՛ն առնել անոր. բայց ոչ ի՛նչ կրնար ընել:

\*  
\*  
\*

Այն օրերը, երբ իրենց յաճախած փողոցները ամայի կ'ըլլային, երկու պղտիկները կողմնակի թաղերու մէջ կ'ուղղէին իրենց քայլերը, հոն դեգերելու և հո՛ն որսեր որոնելու համար, իրենց հոտառու քիթով: Պատուհաններու առջեւ թառող տիկիներու առջին, փողոցը, միմոտական խաղեր ալ կ'ընէին երբեմն ու լիառատ կը վարձատրուէին, որովհետեւ տիկիները մեծ հաճոյք կը զգային այդ թիզ մը հասակով պղտիկներուն խեղկատակութիւններէն ու պղտիկ երգերէն, մատուանդ աղջկան ըրածներէն, որուն երեսէն

Մանօ ալ պակաս չէր մնար նպատաւորուելէ : Այն օրը , երբ թափուր գտած էին փողոցները և ուղղուած թաղերը , մէկ քանի զուարճալի ոստոստումներու համար , զոր Շամէ անյնչափ շնորհալիօրէն կատարած էր , անուշեղէնի խոշոր պատառ մը ելաւ իրեն , տունէ մը : Բայց անոր երկնցուած ատեն , Մանօ անմիջապէս նշմարելով զայն , ու չկրնալով դիմադրել անոր անսքին , սուրաց ու յափշտակեց , երբ աղջիկը դեռ չէր տեսած : Բայց կռիւր վրթաւ անմիջապէս , որովհետեւ աղջիկը կը պնդէր իր իրաւունքին վրայ : Տեղի չէր տար տղան , ո՛չ մէկ սրտաշարժ խօսքի , ո՛չ մէկ բռնութեան : Փորը անօթութենէ կը խօսէր արդէն , և , ոչի՛նչ կրնար ողոքել զինքը , երբ վրէժ մը լուծելու հաճոյքովն ալ անյնչափ պիտի սփոփուէր : Բիրտ հարուածով մը մէկդի հրեց աղջիկը , որ աղիողորմ լաց մը ձգած , մրտտ դէմքն ի վար , ոտքերը գետին կը զարնէր ու կը ճչէր : Այդ լացը անձառ հաճոյք մը կը պատճառէր Մանօի , ու կը սրէր ախորժակը : Գնաց առանձնացաւ մօտակայ արեւոտ կատարի մը վրայ , զոր աղբի կոյտեր կ'եզերէին , ու սկսաւ մեծ պատառներով խածատել անուշեղէնը , ախորժակ գրգռող շփրտութիւնք արձակելով շրթունքներէն :

Շամէ , հեծկլտալով վէրքին ցաւէն զինքը

վիրաւորող անիրաւութեան, դէմը նստած, իր լացը կը խորդար, գթաշարժ աղերսանքներով:

— Ի՞մա էր աղ... տո՛ւր... տո՛ւր...

Սառնական անզգածութեան մը խորոխաւը թութիւնով՝ տղան կը շարունակէր ճաշակել անուշեղէնը, ու կէս կ'ընէր:

Լացը դադրեցուց աղջիկը, ու աչքերը՝ ա'ջն յուզումով ու դիւթանքով, դոր կինը ունի մեծ վիշտերու մէջ, սեւեռեցան տղուն վրայ:

Մանօ խռովեցաւ այդ նայուածքէն, ու զգաց որ բան մը կը փչէր իր մէջը, տեղի կուտար, կը քայքայուէր, փոթորկելով իր հոգին, ու անծանօթ սարսուռի մը հեշտանալովը ցնցելով իր էութիւնը: Ատելութեան բիրտ շէնքն էր որ կը փչէր իր մէջը, Ուժին տակ Սէրի Մեծ Զգայումին, որուն իր կուրծքին խորը Զարթնումը՝ կ'ողողէր իր սիրտը ու կը տիրապետէր հոգիին վրայ:

Անհուն զեղումովը կոյս խանդաղատանքի մը, որ կ'ալեկոծէր հիմա ամբողջ իր էութիւնը, մօտեցաւ անոր՝ որ Առաջին Մեծ Խռովանքը ճառագայթած էր իր հոգիին մէջ, ու թեւը օղակ շինելով անոր քնքուշ գլխուն շուրջը:

— Ես կատակ ըրի, աղւո՛րս, չե՞ս գիտօ՞ր, — ըսաւ, — սրաղեղ համբոյրի մը կրակոտ սարսուռը հպեցնելով անոր այտերուն:

... Ու շրթունքը երկար հպած մնաց,  
 Զարթնումի կոյս հեշտանքի մը մէջ,  
 ակնարկը գամուած այն Աչքերուն, ուրկէ  
 Սէրի Մեծ Յուզումին Ուժը ցայտեր էր, և  
 որմէ ցնցուեր էր Տղա-Մարդը:



# ԱՌՈՂՋԸ ԵՒ ԱՆԿԱՐԸ

Հայն ու բազմամարդ վաղուցին այն անկիւնը, ուր ճամբան երկուքի կը ձեղքուի, մուրացկաններու անսխալօրէն թիւ մը, սովոր է իր շարքը ցցել, դէմ դէմի պատերուն առջեւը, գրաւելով ամբողջ երկայնքը այն ցիւց զառիվարին, որ դատուելով ուղիղ ճամբէն, խոտոր ընթացքով մը կը շեղի, վարը դարձեալ միանալու համար առջինին:

Անոնք չվերցնել կը թուին իրենց ջուրը հողկէ, որովհետեւ առտուն շա՛տ կանուխ, թերեւս արշալույսէն առաջ, — ո՛վ էր ստուգողը, — հոն պատրաստ են, ինչպէս գիշերները ուշ ատեն, մտ-թին իյնալէն ետքն ալ, ամէնքը իրենց աղեկաարշ մէկ դիրքովը կամ երեւոյթովը, պատրա՛ստ հրաւիրելու անցորդներուն դժուր-թիւնը, իրենց դժաշարժ աղաղակներովը, կամ ո՛ր և է կերպով խղճայի մէկ տեսքովը:

Անոնցմէ որ մէկուն ո՛ւրքը կատարած է, որ մէկուն թե՛ւը չի կայ. ուրիշ մը կայր է, ուրիշ մը հաշմանդամ, և այսպէս իր կարգին:

Եւ անոնք, իւրաքանչիւրը, իրենց այդ

մարմնական պակասութիւններո՛վն է որ կը փորձեն գութը շարժել անցորդներուն, խօսուն ակնարկով մը մէջտեղ դնելով ամէն անգամ, ցո՛յց տալով միշտ իրենց ճակատին գրուած այդ աղէտը, հինգ կամ տասը փարաի ողորմութեան զգայում մը կարենալ բղխեցնելու համար զիրենք դիտելով անցնողներու սիրտին մէջ :

Այդ ձեւ-ձեւ մուրացիկներու շարքին մէջ, կայ մէ՛կն ալ, որ ամէնէն ուշագրաւն է բուրբին, իր տխրատեսիլ երեւոյթովը :

Հաշմանդամ ծերունի մըն է ալ, կքած քամակով, դառամած դէմքով, փոթփոթած մորթով խղճալի էակ մը, որ երկոտանի պղտիկ մատուկի մը մէջ կծկաւ, երկու կտոր եղած է մարմնին կէսէն, թոյլ ու նիհար արունքները ծալելով գիրկը առած :

Ոսկրաջախջախ մարմնի զանգուած մը ըլլալ կը կարծուի ան, առաջին տեսքով, տապրակի մը պէս նետուած այդ մատուկին մէջը, — կառքի ողորմելի մանրանկար մը, — որ առանց անգամ մը տեղէն շարժելու, ծրարի մը պէս ծալուած կը նստի ան, յաւիտենական ու անփոփոխ գթաշարժութեան իր տխրատեսիլ երեւոյթին մէջ, մահամերձ հիւանդի մը տեսքը զգեցած, դալկադէմ ու նիհար, գլուխը կախ, միշտ աղերասարկու :

Այդ դազաղի երեւոյթը ունեցող տխրա-

բոյր անտուկը առտու-իրիկուն միայն կը շար-  
 ժի տեղէն, առտուն անծանօթ բոյնէ մը հող-  
 բերելու համար իր դժբաղդ պատասպարեալը,  
 և իրիկունը՝ նորէն իր տեղը փոխադրելու  
 համար: Կը պատահի որ, երբեմն ալ, ամառ-  
 ները, ան իր տեղէն կը շարժի, արեւին կիզիչ  
 տաքէն ազատելու համար խեղճ մուրացիկը,  
 ծառի մը շուքին տակը տեղափոխուելով:

Իրեն պէս դժբաղդ աղքատ մըն է որ, կը  
 լրացնէ հաշմանդամ ծերուկին այդ պէտքը,  
 այտերը կղակին անցած նիհար ու հիւժած  
 կարճլիկ ծերուկ մը, որ անտուկին առջեւէն  
 ցցուող երկու փայտերը անութին տակ ան-  
 ցուցած, դայն անիւներուն վրայ քաշքշելով,  
 քարերէ ու փոսերէ անցընելով, կը բերէ կը  
 դնէ իր սովորական տեղը, և չի սահելու հա-  
 մար՝ անոր ոտքերէն մէկուն տակը քար մը  
 դետեղելով, կը հեռանայ, գիշերը, իր ժամա-  
 նակին, գալ գտնելով իրեն կարօտ մուրացի-  
 կը, տեղը փոխադրելու համար դայն, նոյն  
 կերպով, անփոփոխ, միօրինակ:

Յայտնի չէ թէ ո՞վ է ծերունի մուրացիկին  
 այդ օգնականը. եղբայրը, զաւակը, հայրը,  
 դրացի՞ մը, թէ հողիին ծառայող հաւատաց-  
 եալ մը, որ Անդիի Աշխարհին մէջ իր վարձքը  
 գտնելու համար, ինքզինքը նուիրած է իր  
 ուժին չսփովը Օգնութեան այդ Պարտքին:

Խելք չի հասնիր որ, ի՞նչպէս կը համբերէ

յաւիտենական անշարժութեան մէջ արձանագրած այդ եղկելի արարածը, ամբողջ օրերով զամուսած սպասելու նեղ մատուկի մը ծակին մէջ, լուռ ու մունջ, առանց զբաղում մը ունենալու, փարատելու համար տաղտուկը այդ աստիճան տաժանելի կեանքի մը:

Բայց, մխիթարուած ըլլալ կը թուի ան, գոնէ վրան շունչ մը դտնուելուն, և բաց աչքերով դեռ աշխարհը տեսնելուն համար, որովհետեւ դժգոհանքի և արտունջի արտայայտութիւն մը չի տեսնուիր երբեք իր դէմքին վրայ, որ իրեն սահմանուած դժբաղդութեանը սիրայօժար տոկալու, և զայն անտրտունջ կրելու համոզումը կը խօսի, գերբնական համբերատարութեան մը յայտնի երեւոյթին մէջ:

Ու մշտնջենական անսխալութիւն իր դէմքին մէջ, գոգին մէջ երկու ձեռքերովը բռնած թիթեղէ պնակ մը, կը սպասէ գութ ունեցող անցորդներու աւատաձեռնութեանը, որպէս զի դրամի կտոր մը նետեն անոր մէջ, իրեն հացագինին իբր փոխարժէք: Շատ բնական է որ, իր ուտեստը համադամ խորտիկ մը չկազմեր, այլ յաճախ շուներու առջեւ չդրուելիք աղատտ կերակուր մը, զոր մօտակայ տուներէն կը հայթայթեն իրեն, պնակներու աւելցուքները իրար խառնելով: Եւ կամ, շա՛տաշատ, այդ կերակուրը կ'ըլլայ՝ աղջուրի

Թթուաչ մը, որուն մէջ հացի կտորուանքներ  
թաթխելով, մուրացիկը կը դրկէ իր ստա-  
մոքսը:

Բարերարութիւնը իրա՛ւ է որ խտրակա-  
նութիւն չի ճանչնար, սակայն անցորդներու  
գութը բոլոր միւս մուրացիկներէն աւելի  
միանալ կը թուի այս ծերուկին վրայ, որուն  
պնակը քիչեր միայն անտեսելով կ'անցնին, —  
երբ ուրիշներու առջեւ բոլորովին անտարբեր  
են, — մտածելով թերեւս որ, անոնք նորէն  
ոտք մը ունին քալելու համար, և իրենց  
աղերսանքը ու փորին անօթութեան ճայնը  
պտտցնելու ամէն կողմ, մինչ այդ ոտնաբեկ  
թշուառ ալեհեր ծերունին, եթէ կառքը քաշող  
մըն ալ չունենայ, թերեւս անօթի մեռնի՛ ալ,  
մնացած տեղը:

Ու անցորդներու կարեկից վերաբերումն է  
թերեւս որ, կը մխիթարէ զինքը, իր անախո-  
փելի դժբաղդութեանը մէջ, աչք չունենա-  
լու համար միւս մուրացիկներէն մէկ քանին  
քիչ շատ առողջ վիճակին և ոտք մը ունե-  
նալնուն, և չի տրանջալու վիճակէն, նոյն իսկ  
բարեբաղդութիւն մը նկատելու զայն, —  
զգացում, զոր կ'ունենան շահախնդիր մու-  
րացիկներէ շատեր, — քանի որ ատիկա շա-  
հաստան մը կը դառնայ իրեն, ամէնէն  
առատ կերպով ողորմութիւնը հոսեցնելու հա-  
մար իր գոգը:



Ատենէ մը ի վեր սակայն, ծերունիին անբիծ հանգստութիւնը և անարտունջ երջանկութիւնը վրդովուած էր տեսքէն անսովոր անցորդի մը, որմէ չէր կրնար իր ուշադրութիւնը և կասկածը բաժնել, ի՞նչ որ կ'ընէր:

Կասկածելի երեւոյթով, տհաճ տեսքով, թշուառ պատանի մըն էր աղ, որուն յաճախակի անցքը իր առջեւէն, և սուր զննութիւնը իր սնտուկին մէջ, կը խռովէր զինքը ու անհանգիստ կ'ընէր:

Ձեռքերը տափառին գրպանը, հինու-մին գլխարկը մինչեւ յօնքերը քաշած, ուսերը օրրելով, իր ցնցոտիներուն մէջ պարուրուած, օրը քանի մը անգամ կ'անցնէր ան սնտուկին յաւիտենական բնակիչին առջեւէն, սրատես և խուզարկու աչքերուն գաղտագողի ակնարկներովը մի՛շտ հետազօտելով ծերուկին վրան-գլուխը և սնտուկը:

Աչքերը զիրար հասկցած էին, ու ծերուկը սկսած էր չախորժիլ տեսքէն այդ աղուն, որուն երեւումը ատելութեամբ լեցուն տհաճութիւն մը կը պատճառէր իրեն, և որուն ուրուականը՝ կը հալածէր զինքը:

Ամէն անգամ որ անոր սեւազգեաց մարմինը տեսնէր, ցցուած իր առջեւը, որ դանդաղ կ'անցնի, ակնարկովը խուզարկելով զինքը, կամ հեռուն, փողոցին անկիւնէն, անոր երեւումը, որ սլքտալով իր կողմը կու-

գայ, թունաւոր քինասխնդրութեան խօսուն արտայայտութիւնը ունեցող նայուածքով մը՝ կը հասկցնէր անոր որ, չի դեզերի իր շուրջը և շատ չիցնայ իր հետը:

Անգործ դատարկապորտ մը չէր իսկապէս այդ տղան, ամոնցմէ, որոնց գաղտնիարականը դիւրայաջող շահատակութիւններով դարձնել է կեանքին Անիւը:

Յաջորդական ձախորդութիւններու և անձողոպրելի դժբաղդութիւններու զոհ մըն էր ինքը, որ շարունակ ճակատագիրին անխնայ հարուածներուն ենթարկուելով, հասած էր մինչեւ Անօթութեան Գուռը, հիմա, երբ ալ ո՛չ մէկ յոյսը, ո՛չ մէկ ապաւէնը մնացած էր: Գործ, աշխատութիւն, պատրաստ էր հոգիովը նուիրուելու ատոր. — Չի կա՛ր: Իր անկուճին օգնութեան փութացող մը, թեւէն բռնող մը. — Չի կա՛ր: Մարդ մը, ծանօթ մը, որ յոյս մը ներշնչէր իրեն, հոգ չէ՛, սայլի մը լծէր ու քշէր. — Չի կա՛ր: — Որովհետեւ, երբ գիւղին մէջ ալ չափահաս էր եղած, գրպանը քիչ մը դրամ դնելով, ճամբայ հանած էին զինքը, երթալ դրամ շահելու, ո՛ւր որ ուզէր, և հիմա ինքզինքը կը գտնէր տեղ մը, ուր ո՛չ մէկ ծանօթ ունէր: Իրարու յաջորդող ձախորդութիւններ և յուսախարութիւններ՝ հիմա ալ զրկած էին զինքը ո՛ր և է յոյսէ և ապաւէնէ, ո՛ր և է միջոցով մը ինքզինքը ապրեցնելու համար:

Ու ատոր համար, ճարահատ, սկսած էր մուրա՛լ ալ, ափ բանալ. սակայն ա՛դ այ չէր յաջողեր, որովհետև, այն ողորմատէրները, որոնք սիրայօժար քսակնին կը բանային կեղծիքի դիմակը հագած սուտ կամ իրաւ շա՛տ մը մուրացկաններու, իր ափ բացած առնն, երիտասարդութիւնը ու կայտաւութիւնը երեսին կը զարնէին: Հաղիւ քանի մը անխորական ու մուրացողին հոգին ճշմարտապէս հասկցող ողորմատէրներ, դրամ մը կը սահեցնէին իր ափը: Սակայն ամբողջ օրուան մէջ շահուած այդ գումարը հաղիւ անօթութենէ մեռնելէ կրնար փրկել զինքը: Եւ այդ անստոյգ ապաւէնին օր մը հի՛ մնովին կործանելուն, և անօթութեան ճիրաններուն մէջ մահանալուն ահաբեկիչ հեռանկարը, ամէն բան ընելու պիտի մղէր զինքը:

Արդէն երեսուն ժամէ ի վեր էր որ փշրանք չէր տեսած ստամոքսը, երբ վերջին անգամ, շարունակ կ'անցուղարձէր հաշմանդամ մուրացիկին առջևէն, ու կը տեսնէր որ անոր թիթեղէ ամանը կը հնչէր անդադար ինկող մետաղներուն ձայնէն, որովհետև ան՝ գութ շարժելու ամէն պայմանները լրայնող երեւոյթի մը մէջ էր, մինչ իր ստամոքսը կ'որոտար սովալկութենէ, և, ո՛չ մէկը կ'ուզէր բան մը հարցնել իրեն, քանի որ գութ հրաւիրելու ձեւերը չէր պատշաճեցուցած իր երե-

ւոյթին, ոտքը կոտրած ձեւացնելով, թեւը ծուռ ցոյց տալով, կամ կեղծիքի կերպով մը՝ աղիողորմ վիճակ մը զգեցնելով իր տեսքին:

Իր յաճախակի զննութիւններուն մէջ, որոնցմով շա՛րունակ հետապնդած էր ծերունի մուրացիկը, տեսած էր որոշակի թէ, ան ծլար մը ունի, զոր մեծ խնամքով և գուրգուրանքի յախշտակութիւնով մը, կը թաքուցանէր կառքին մէկ անկիւնը, գրեթէ վրան նստած, ամենաթանկագին առարկայի մը պէս, զոր մարդ չուզեր իրմէ բաժնել: Գիտէ՛ր անոր ի՞նչ ըլլալը: Գիտէ՛ր վատահ որ՝ խռփած ծերուկը ոսկիներու կծիկ մը ունէր անոր մէջ ամփոփած, զոր տակայն չէր դիտեր վայելել:

Այդ օրը իր կառքը փողոցին վերը, ուրիշ շա՛տ աւելի ամայի անկիւն մը զետեղել տուած էր մուրացիկը, այդ միջոցով, թերեւս կարենալ խուսափելու համար հետապնդութիւններէն անառակ ստահակին, զոր կ'ատէր հո՛գեւին, և որուն համար լան մըն ալ չէր կրնար ըսել մէկու մը, գաղանթիքը դուրս չի տալու համար:

Աւիթը ոտքը եկած սեպեց սովալուկ ուրուականը:

Փողոցին անկիւնէն, առանց նշմարուելու մուրացիկէն, աչք մը պտտցնելով չորս կողմը, տեսաւ որ, անցորդ չի կար և դեռ գոնէ ժամանակ մը, ո՛չ մէկը կրնար իրենց քովը

Ըլալ : Անոր պռուպէն ալ վախ չունէր , քանի որ ձայնը լսելի չէր կրնար ըլլալ այն պարտէզներուն պատերէն և վանդակորմերէն ներս , որոնցմով շրջապատուած էին տուները և բուրովին անջատուած փողոցէն :

Ինքզինքը քաջալերելով դեռ երակներուն մէջ հոսող բոլոր ուժովը , ընդոստ դարձաւ անկիւնը , ու սովալլուկ գայլի մը բոլոր վայրագութիւնովը , աչքին ո՛չ մէկ բան երեւալով , և վատահ թէ՛ ան ո՛չ մէկ շարժում պիտի կրնար ընել , խոյսացաւ հաշմանդամ մուրացիկին վրայ , գոռալով .

— Յանձնուէ՛ . . . խռֆա՛ծ . . . հագիդ ձե՛ռքս է . . .

Շլմորած , ու անսովոր կատաղութիւնով , ձեռքը նետած էր կառքին մէջ , փնտռելու համար ծրարը , երբ .

— Նորէ՞ն դուն , սրիկա՛յ , — շաշեց ձայնը ծերուկին , — քանի որ ո՛ղջ եմ , դեռ ձեզի պէս երխտասարդներուն հարիւր հատին կրնամ դէմ դնել . . . կեցի՛ր քիզի . . .

Ու տակը փռուած խշտեակին ծայրէն դաշոյնի մը տեսքը շողացնելով , ջլապինդ ու յաղթանդամ ցշուածքով մը կառքին մէջ ոտի կանգնած , պիրկ մտաներուն մէջ առնելով միւսին կակորդը , գերագրգիռ կատաղութիւնով մը , մխեց դաշոյնը անոր ուսին :

Խեղդուկ ճիչ մը արձակելով , թեւերովը



տաքերովը ետ ընկրկեցաւ թշուառ զոհը : ու  
կռնակին վրայ փռուեցաւ գետին :

Իաշոյնը նետելով անոր քովը , յագեցած  
վրէժխնդրութեան յաղթական գոհունակու-  
թիւնով մը , անայլայլ ու դիւային պաղարիւ-  
նով , մեգերայական կախարդանքի մը մոգա-  
կան շուտափութութեամբ կառքին տակէն  
հանելով քարը , բերաւ անկիւնի դառիվարին  
գլուխը , ու մէջը ցատկելով , թող տուաւ որ  
երթայ ան ցից փողոցն ի վար , իբր թէ ար-  
կածով խախտած ըլլար կառքը տեղէն ու ինք  
յուսահատ համակերպողը անոր քմահաճոյքին :  
Իր վիճակին զուարճալիութենէն առթուած  
կէս-հաճոյքի , կէս-դժգոհանքի ճիշ մը բարձ-  
րացուցած , ճամբաներուն ուղղութիւնովը կը  
սուրար վար , անցորդներու քրքջալիւ պու-  
շտուքներու մէջէն :

\* \*

Ետքէն գտնուեցաւ Անօթութեան Զոհին  
դիակը , որ սովալկութեան վերջին նուաճնե-  
րու իր բնազդովը՝ մինչեւ կողոպուտի սոս-  
կումներուն ենթարկած էր ինքզինքը , արիւնի  
ժայթքի մը մէջ յագեցնելու համար վերջա-  
պէս իր անսաստ Ստամոքսին Պապակը :

... Ու չի հասկցուեցաւ թէ ո՞վ էր անոր  
ազաննիչը , — որովհետեւ յանդուգն դիապար-

տը, իր անկասկածելի երեւոյթին ապաստանած՝ սովորականին պէս կուգար իր տեղը գրաւել ամէն օր, ազատած այլ եւս զինքը հալածողին ներկայութենէն, և կեղծիքի իր ցուցադրութեանը մէջ յաղթական, ու ամէնուն զութը շարժելու եղական յաջողութեան վիճակի մը մէջ...

## “ԳԵՇ ԿԱԹ,”

(\*) Թրամվէյի դիժինն ան տեղը, ուր կառքերը ձի կը փոխեն, դժուար վերելք մը ընելու համար, ծառաղարդ ուղիին ծայրը, որ ցած ու բարձր տանիքներով դուռերու շարքովը կ'եզերուի, ձիերու ախոռին կիցը, հո՛ն ուր առններու ընթացքը կը կարի պահ մը, իր մէջը առնելու համար ախոռին շարք-շարք մասերներով երկարածիզ մարմինը, ցած ու խարխալած տնակ մը կայ, ինկած ծեփերով, աններկ, գունաթափ, մէջքը մէկ կողմ ծռած, որին ա՛լ հովէն ու արեւէն մաշած աղիւսները կ'երեւան, խոշոր ծակափքներ ցուցադրելով դէպի տնակին ներսը:

(\*) Աս պատմածքը՝ լեզական փորձի մը համար՝ հրատարակած է լեզական ուղղութիւնով մը՝ որը հեղինակը կը դաւանի թէ՛ պիտի ըլլա Ապագա Աշխարհաբարը: Կը զգա թէ՛ սա փորձին մէջը՝ ներդաշնակութիւնը, ականջի վարժութիւնը, ձայներու երածշտականութիւնը՝ զոհեւած են լեզական նրբախոյզ խտութիւնով կանոնականութիւնի մը, սակայն, ան կը հաւատա նոյն ատեն թէ՛ ատո՛նք ալ նախապաշարումներ են լեզին մէջը, ականջին ու աչքին համար, և թէ՛ ժամանակը, սրբագրելով լեզւի ա՛դ խնդիրներն ալ, — ինչպէս ըրած է անհաւատալի դաւանեւած շատ մը ուրիշներ՝ աշխարհաբարի ծաղկումէն մինչև մեր օրերը, — անպղտոր միօրինակութիւնի մը մէջը կը նւիրագործէ անոնց ընդհանրացումը, ուշ կամ կանուխ:

Ադ տունը պատմութիւն մը ունի, որը թաղին տղաները խաղէ ձանձրոյթի պահեր-  
սուն, երբեմն կը պատմեն իրարու :

Անցորդները, երբ աչքերնին վեր առնեն  
դէպի ադ խեղճ տնակին խարխուլ լուսամու-  
տը, գեղանի Հելլենուհի մը կը տեսնեն հոն,  
որ գլուխը կախ, երգելով, բանի մը կ'աչ-  
խատի: Մեծ հռչակ հանած է ադ աղջիկը՝  
Էլէնի, թաղին մէջը, և սիրային արկածներու  
համբաւ մը ունի, որ բերանէ-բերան տարածւած  
է ամէն կողմ, տեղացի և բաղդախնդիր անցորդ-  
ներու համակրութիւնը իր կողմը դարձնելով:

Կարճ արկածախնդրութիւն մըն ալ՝ եղած  
է ամբողջ իր կեանքը: Աչքէ ձգւած, բաղ-  
դին հարւածովը բի'րտօրէն լքւած տարա-  
բաղդ որք մըն է ինք, որ մայրին մեռնելէն  
ետքը, եկած է ապաստանիլ ադ անշուք  
երդիքին տակը, իր թշուառ օրերը անցընելու  
համար, մանկամարդ կինի մը հետը, որ իր  
մօրաքոյրն է, և որ իր քոյրին մահէն ետքը,  
միակ անգօր պաշտպանը գտնուած է, — ինք  
ալ մարդի կարօտ և գթացող ձեռքի մը  
պէտք ունեցող հոգի մը, — իր քեռաղջիկին,  
անի անպաշտպան ու փողոցը մնացած գտնե-  
լով, երբ դեռ հազիւ քանի մը տարեկան էր,  
և երբ Էլէնիի մայրը, օր մը, յանկարծ,  
տխամար գինովի մը դաշոյնին զոհ կ'երթար,  
սուտ տարփանքներու տունի մը մէջը, ուր

ան, իր աղափա խառնւածքին և խառնակեաց հոգիին ցոյի հակումներէն մղւած, դեռ աղջիկ, գացած էր կեղծ սէրերու շռայլանք մը բաշխել պատահական ամէն նոր տարփածուի:

Էլէնի, մայրին առ մոլորական ու ցոփակեաց օրերուն պիղծ պտուղն էր, որը անպարկեշտ մայրը մեծցուցած էր, իր պագչոս ու թունաւոր համբոյրներովը, իր քովէն չգատելով անի մինչև անոր խելահասութիւնին օրերը, երբ, դիպւածով, կը բաժնուէր անկէ, անծանօթ ձեւքերու ձգելով իր կեղծ տարփանքներու թշւառ պտուղը:

Մայրի ու զաւակի առ բարեբաղդ բաժանումէն ետքը, Անաստասիա իր քովը առնելով Էլէնին, — հոգ չէ թէ ի՞նչ խկ օրական հացը մտմտացող մը ըլլար, — զո՞ն մը փրկած կ'ըլլար անպականարար ճախճախուտքի մը մէջէն, ուր թերեւս գլորէր ան, հոն մնալով, երբ մեծնար ու աչքը բացուէր ցոյի ան կեանքին խարուսիկ հաճոյքներուն, որոնց մէջը կը գտնուէր:

Անաստասիա, իր քովը առնելով քեռաղջիկը, մայրի մը գուրգուրանքը յատկացուց անոր, իր բերանէն կտրելով կերցուց անոթ, հագուեցուց: Ինկած դժբաղդի մը՝ իր բոլո՛ր կրցածը ընել, և տեսնել որ ան իր ճիգերուն զօրութիւնովն է որ մէջտեղ կ'ըլլէ, կը ծաղ-



կի, կը բողբոջի, մեծ հաճոյք կու տար իրեն, որովհետեւ ի՛նք ալ բաղդին հարւածին ենթարկւած դժբաղդ մը, չէր կրցած ամուսնանալ ու զաւակի տէր ըլլալ, ծնունդը իր ճակատին դրոշմած ըլլալով անարբագրելի տգեղութիւն մը, որ պժգանք կ'ազդէր անի դիտողին: Ատոր միացած էր նաև, դէմքին վրայ ծաղիկի խոր հետք մը, որին ենթարկւած էր տղայութիւնին, և որ ամբողջ խոր աղօսներով ծակծկւած խորտուբորտութիւնի մը վերածած էր իր արդէն անհրապոյր ու տխրաամենիկ կերպարանքը, շիլ ու նեղ-նեղ բացւած իր աչքերուն դժնեակնիկ պատուհաններովը, լայն ու անձուռնի բացւածքովը իր բերանին, զանգւածաւոր հասա ու ամբհի ծակերովը իր ուռնագերուն, և պզտիկ վեղկերու պէս բացւած բարակ ցից ախանջներովը:

Ելէնի, տասնիկ, մեծցաւ մօրաքոյրին թւին տակը, մի՛շտ անոր ապաւինած, մի՛շտ անոր հովանաւորութիւնին կարօտ, դո՛նէ պզտիկ մասնակցութիւնով մը իսկ չկրնալով օգնել իր ձեռական աշխատութիւնին արդիւնքովը՝ բարւոքումին անոր նիւթական կացութիւնին, որ մեծ ապրաւէններու կը կարօտէր արդէն: Մի՛շտ օրական հացի կարօտ մնացին աս երկու անօգնական դոյութիւնները, մի՛շտ իրարօտ ապաւինած, երկու ինքնաբոյս և առանձ-

հասկեաց ծաղիկներու պէս, որոնք հողի նո՛յն ակօսին մէջը, իրարու ապաւինած, իրարու կեանքո՛վ կ'աճին և հասակ կ'առնեն:

Բնութիւնը սակայն, իր քմահաճ անօրի-նութիւններովը, հակադրութիւն մը յօրինել ուղելով, ցաւի, դժբաղդութիւնի ու տւայտանքի աղ բոյնէն՝ ուզած էր ծաղկեցնել կեանք մը, որ անսովոր ու գերազանցապէս հմայիչ ըլլար, էլէնի թալով դեղեցկութիւն մը, որ օր-օրի կ'աւելնար, իր տարիքին հետք, իր վրայ դարձնելով մտածումը և տարիանքը բոլոր ինքը տեսնողներուն: Ինչ ատենէն, ան կրցաւ իրեն սեփականել թաղին աղջիկներուն ամէնէն աղւորը հաչակելու ըսողը, ինչ որ քիչ հախանձայուղութիւն չէ որ արթնցուց իր շուրջը:

Թաղեցի տղաներ, դարձէ՛ դարձին, իր շուրջն է որ կը դեգերէին, դիշերի մութի պահերուն, իրենց սէրի արասայայտութիւնները բերելով երգել անոր զգլխից դեղեցկութիւնին առջեւը, որը ինք և մայրը ո՛վ գիտէ ո՛ր պատահական դեղանի աղա-մարդին կը պարտէին, որ փախստեաց աճուսինը եղած էր մեռնողին:

Անհաւատալի առտապել մը միայն կրնար հսկաաւիլ աղ տեսակ լքւած ու խղճալի տնակի մը մէջը՝ գոյութիւնը էլէնի, որ մոլորած այցելուի մը տպաւորութիւնը կը թողուր

ինքը տեսնողներուն վրա, տեսակի մը մէջը, որ երբեք չէր վայլեր իր գեղեցկութիւնին: Եւ անոր հոն մտած-ելած ատենը, կարելի չէր հաւատալ թէ, անոր յարմար բնակիչն է ան:

Բոլոր անցորդներուն մէջէն, որոնք անցան դարձան իր պատուհանին տակէն, և միշտ առ անշուք լուսամուտին առջեւը նստող գրաւիչ գեղեցկութիւնով առ աղջիկին ցուցադրած հակասութիւնը դիտեցին, թրամվէյին պատուհաններէն, մշտնջենական յաճախորդներ կամ հեախոտան անցորդներ, և պահ մը դրաւվեցան անով, մէկը, անոր յանկուցիչ աչքերէն ու ժպտուն դէմքէն հշիմ'րտապէս ու անկեղծօրէն գրաւվող մէկը, գերին եղաւ անոր:

Թրամվէյի տունսակաւաճառ մըն էր աղինքնահրաւէր տարիածուն, երկայն նուրբ հասակով թարմ սղա մը, ընչացքը հաղիւ սեւոտած իր շրթունքները, կայտառ ու գեղադէմ թարմ երիտասարդ մը, որ առ գիծին վրա պաշտօնեա անցած օրէն, սկսած էր զբաղիլ էլէնի կեանքովը, ու անոր վրա երազներ հիւսած ինք իրեն:

Չորս-հինգ տարիի շրջանի մը միջոցին, երբ իր կուրծքը խռովող զգացումներէն բա՛ն մը չէր ըսած ան իր հոգիին մէջը ապրող սիրականին, օ՛րը-օրին, կէտ-կէտի հետեւած

էր Սթամաթ Էլէնի կեանքին, օր-օրի տեսնելով անոր մեծնալը, տարիք առնելը, և հետզհետէ գեղեցկանալը:

Ան բոլոր սովորական յաճախորդներուն պէս թրամվէյին, որոնք, օրուան իրենց կանոնաւոր երթուղարձին մէջը, անի դիտելով ա՛լ մտերիմի պէս եղած էին, Սթամաթ կարօտակէզ դիտող մը եղած էր անոր, դրկից ծանօթի մը պէս բարեւելով անի առտու իրիկուն, որովհետեւ օրը չորս-հինգ անգամ կ’անցնէր կը դառնար հոնկէ, կառքին երթեւեկին հետը, և կարելի չէր գոնէ բարեւ մըն ալ զլանալ ա՛նչափ ծանօթ աղջիկի մը, որը ամէն անգամին սլատուհանը կամ դուռին սեմին վրա կը տեսնէր, և որ տաք մտերմութիւն մըն ալ ցոյց կու տար իրեն:

Ասանկով, թագուն սէր մը մշակած էր իրենց միջեւ, բոլորովին տարբեր անոնց համակրութիւնէն, որոնք, Սթամաթի պաշտօնակիցներ, ուրիշ կառքերում, իրենց յաճախակի տեսութիւնին բնական բերումովը, պզտիկ համակրութիւններով զօղւած էին Էլէնի հետը:

Օր մը, ժամանակը հասած սեպեց Սթամաթ, և ուզեց լամալ սիրտը իր պաշտած տարփածուին:

Թրամվէյին կառքը, դիմացինը սպասե-

լու և ձի փոխելու համար, միշտ դադար մը կ'առնէր Էլէնիի դուռին առջեւը: Սթամաթ վար կ'իջնար աննպատակ երթուղարձ մը ընելու համար ճամբանս եզերող մայթին վրա, գլուխը կախ, խոհուն, երբեմն մեքենադար առջեւէն կ'ախւած պայուսակին մէջը դրամները համբուլով, երբեմն ուղղւելով ձիերուն քովը, անոնց բաշը փայտայելու և քամակը ծեծելու համար, սիրազեղ շոյանքով մը:

Գիշեր մը, կառքը կը սպասէր, կը սպասէր, սակայն դէմինը չէ'ր դար, որ ինք ճամբա ելլար: Մութը աղէկ մը իջած էր, և օդակազի լեզուները ճամբաին երկու եզերքը անշարժ ցլւած, աղօտ լոյս մը կը ախուէին պաշտտախն լուռ միայնութիւնին և ծառերու կատարներուն վրա:

Սթամաթ ինքզինքը դօրացուց բռնի քաջալերութիւնով մը, և ուղղւեցաւ Էլէնիի կողմը, որ դուռին առջեւը ցլւած, հետաքրքիր նայւած քներով կը դննէր ուշ մնացած ճամբորդները, որոնք կառքին մէջը սպասելէ ճանձրայած, անհամբուլութիւնի շարժումներ կ'ուսնենային: Ան մօտեցաւ Էլէնիի, ու մութին մէջը, դողդոջուն ձայնով մը, անոր փախացիւր սէրին խոստովանութիւնը, որ արդէն անակնկալ մը չէր դեռաւոր աղջիկին, քանի որ ա'նչափ բան խօսած էին երկուքը իրարու, ակնարկներով և կցկտուր խօսակցու-



Թիւններով, ամէն անգամ երբ վակօնը կանդ կ'առնէր հոն, և ետքէն մեկնելու շարժումը կը սկսէր: Էլէնի քրքջալիր խնդաց միայն, ամօթխածօրէն գլուխը խոնարհեցնելով: Երբ մեկնումի սուլիչը հնչեց, և կառքը շարժեցաւ, Էլէնի ձեռքովը համբոյր մը դրկելով հեռացող կառքին, որին ետեւը կը կենար միշտ տոմսակալածառ տղան, սարսպրեց անոր, որ, յաջորդ օրը, կիրակի, իրենց այցելէ: Աղ կիրակին արձակուրդի շրջանն էր Սթամաթի: Գիշերը մեծ տաղհասիներով լուսցնելով Սթամաթ, եկեղեցիէն ետքը, քայլերը ուղղեց Էլէնիի անակը, ուր երջանիկ երազներ կը սպասէին իրեն: Ճաշէն ետքը հասաւ հոն, իր հետը ունենալով նորափափաք սարսիածուխ մը նւէրները, որոնցմով ա'նչափ պիտի ուրախացնէր իր սիրականը: Նստան, խօսեցան անոնք, երկար, երկար ժամեր, վայրկեա'ն մը չձանձրահալով: Մօրաքոյրը, որ սեղեակ էր երկու սիրատարի հոգիներու յարաբերութիւններուն, չի դատցաւ իրենց ա'ղչափ մտերմական սեռակցութիւնի մը արտօնութիւնը: Ընդհակառակը, ի'նք ալ պակաս չըրաւ իր քաջալերիչ միջնորդութիւնները սիրտերու ամրապնդումին, ադկէ ապասելով Էլէնին կարգելու յաջողութիւնը, ինչ որ թիչ մը պիտի թեթեւցնէր իր բեռը, և վիզին պարտքը մինչեւ

վերջը կատարած ըլլալու մխիթարութիւնը պիտի տար իրեն :

Իրենց մտերիմ պատուհանին առջևը , դուրսէն շտեմնելու շափ ներսով նստած , անոնք խօսեցան անվերջանալի բաներու վրայ , իրենց երազներուն , երջանկութիւնի տիրանալու տենջանքներնուն , ապագա կեանքերնուն , շա՛տ , շա՛տ մը բաներու վրա : Հիմա ամէն օրի պէս , նորէն միջոցը մէյ մը թրամվէյը կ'անցնէր առ պատուհանին տակէն , իր խժալուր աղմուկը ձգած փողոցներուն մէջը , և փողը հնչեցնելով , բայց առ յաւիտենական ձայնը , առ միօրինակ ու տաղտկալի ժխորը՝ չէր հասներ տոմսակավաճառին ականջին , որովհետև ան փոխադրւած էր ուրիշ աշխարհ մը , աղւոր երազներում , ուր առ ամենօրեայ ձայները իրեն մտերիմ շէլն գար , և ինք չէր ուզեր հաւատալ թէ , ինք ալ տպրած է առ կեանքը , թէ առ կեանքը ի՛րն ալ էր , ամէն օր , կամ վա՛ղը իսկ , երբ պիտի երթար խառնելի անոր աղմուկներուն և ժխորին , լծելի անոր բեռին :

Անպատում հրճանքով և սիրտը անսահման ուրախութիւնով մը լեցուն , բաժնեկցաւ Սթամաթ առ գիշերը , ան խեղճուկ տունէն , որ իր պաշտելի կուռքը կը պահէր իր կիսափուլ պատերուն մէջը :

Ա՛լ անկէ ետքը , տարբե՛ր աչքով սկսան

նայիլ երկու սիրակցորդները իրարու, որոնք  
 ա՛լ իրարու կը պատկանէին, և որոնք քիչ  
 ատենէն պիտի զօդէին իրենց գլուխը ամուս-  
 նական կապով, քանի որ փոխադարձ համե-  
 րաշխութիւնը գոյացած էր, և խոստումները  
 տրւած էին, մօտաւոր ապագայի մը համար:

Էլէնիի համար լաւագոյն ընտրանք մը և  
 գեղեցկագոյն բաղդ մը չէր կրնար ըլլալ,  
 քանի որ Սթամատ, որչափ ալ պարզուկ տոմ-  
 սակաւաճառ մը, յարմար ամուսինի մը ամէն  
 կատարելութիւն կը ներկայացնէր իր անձին  
 վրա, գեղադէմ ու սիրուն երխտասարդի մը  
 առաւելութիւնովը, ինչպէս նիւթական կա-  
 ցութիւնի քիչ-չատ բարւոք ու ապահոված  
 վիճակովը:

Ո՞վ կրնար միաքէն անցընել Էլէնի որ  
 ինքը ատենէր, ընկերային ա՛ղչափ ինկած  
 դիրքի մը մէջը գտնուող և օրական հացը  
 մտմտացող աղջիկ մը, որին պատիւն ալ մօր-  
 մէն ժառանգւած արատով մը, ա՛նչափ փայ-  
 լուն ու նախանձելի չէր որ կրնար ներկայաց-  
 ւիլ: Անչափ ատեն որ գործը դարպաս ընե-  
 լու և իր գեղեցկութիւնին հրապոյրները շա-  
 հագործելու վրա ըլլար, այո՛, կրնա՛ր ունե-  
 նալ իր շուրջը մէկէ՛ աւելի գլուխ պատուող-  
 ներ, թաղին բազմաթիւ ստահակներէն մինչեւ  
 ծանօթ բոլոր տոմսակաւաճառները, և քիչ  
 մըն ալ թրամվէյին բոլոր մնայուն յաճա-

խորդները, որոնք ամէն օր անցած-դարձած  
ատեննին, կտասկներ, խօսքեր և սիրային ար-  
տայայտութիւններ պակաս չէին ըներ ծանօթ  
աղ պատուհանին անխախտ պահապանին:  
Բայց երբ գործը անքակտելի կապով մը  
կեանքը անոր միացնելու հարցին դար, հա-  
հանջողները շա՛տ կ'ըլլաին, և գրեթէ ամ-  
բողջակա՛ն: Աս հեռանկարը աչքի առջեւ ու-  
նենալով, էլէնի բաղդը իր ոտքը եկած նկա-  
տեց, երբ Սթամաթ ինքնաբերաբար, իր  
ձեռքը կը խնդրէր, և խոհեմութիւն սեպեց  
անմիջապէս հաւանիլ ճակատագիրի աղ ինք-  
նեկ ժպիտին, ու խօսք տւաւ անոր:

Հիմա, ա՛յ երազի ու երջանկութիւնի  
օրերն է որ կը հոլովւէին երկուքին համար:  
Սիրասարսի տոմսակալածատին սիրարդ վերը-  
հական երջանկութիւնի մը մէջը կը թեւածէր:  
Հիմա ճամբաները երկայն կուգային աչքին,  
երկա՛յն, անվերջանալի ճամբաներ, որոնք  
չէին հասներ, շուտ-շուտ հասնելու համար  
դուռը իր սիրականին, և ցոյց տալու անոր  
դէմքը իրեն, որին պաշտանքին հուիրւած  
էր իր հողին: Ան կը տենջար որ կարճնախ՛ն  
աղ ճամբաները, և շատնա՛ր իր երթեւեկը,  
անգամ մը աւելի՛ կրնայ դիտելու համար  
դէմքը անոր՝ որն որ կեանքի մը հուրքը կը  
ճառագայթէր իր հողիին մէջ: Ա՛նչախ գրաւ-  
ված էր դեռաբոյս տոմսակալածառը իր

երազներովը և սիրտին բարախումներովը, որ յաճախ պղտիկ սխալներ կ'ընէր դրամ առնել տալու, տոմսակ կտրելու մէջը, սխալներ, որոնց երեսէն՝ քսակէ՛ն կը տուժէր:

Սակայն առ պղտիկ դժբաղդուժիւններուն մէջը, ան կը մխիթարէր ան երջանկութիւնովը, որը կ'առթէր իրեն ամէն անգամ իր կարծ տեսակցութիւնը էլէնիի հետը, երբ կառքը պահ մը կը սպասէր անոր դուռին առջեւը, և ինք կառքին մէջէն, ան՝ դուռէն կամ պատուհանէն, կը խօսակցէին մտերմօրէն:

Աս հովւերգութիւնին ամէնէն բերկրալի էջը կը կազմէր բաժանուածի ան դրուագը, որ փոխադարձ սիրատարի տկնարկներու փոխանակութիւնով կը կատարէր, երբ կառքը կը շարժէր:

Անոնք հայւածքով իրարու կը հետեւէին, մինչեւ որ կառքը մօտակայ անկիւնը անհետանար, և ալ զիրար չկրնաին տեսնել, սպասելով մօտաւոր դարձի մը, երբ հորէն պիտի կրկնէր հոյնը: Աղջիկը կառքերու երթեւեկը համբելով, ամէն փողի ձայնի, վեր կ'առնէր գլուխը, տեսնելու սպասումին մէջը իր սիրականը, որ կառքին ետեւէն կէս մէջքէն ծռած, բարեւը կը փնտռէր պատուհանը իրեն սպասողին:

Գիշեր մը, հորէն վակօնը երկար կը



սպասէր: Իր մտերիւմ դուռը բաց էր: Սթա-  
 մաթ վար իջաւ, և ուղղեցաւ հոն: Աս-  
 անգամ Անասթասիա սցւած էր հոն, իր  
 տղեղ էակի մը ամբողջ ասելի տեսքովը:  
 Անհամբեր բանի մը կը սպասէր ան, դուռին  
 բերանէն կէս մէջքէն ծռած, ակնարկովը հե-  
 տազօտելով փողոցին վարի ծայրը: Տղեկ մը  
 կուգար հոնկէ, գիրկը ծանր բեռ մը, որը  
 տքալո՛վ կրնար կրել: Դուռին առջեւը հաս-  
 նելով, ան վար դրաւ գիրկէն իր բեռը: Կէս  
 կազի մնառուկ ամուխ էր, որով կերակուր  
 պիտի եփէին և պիտի ուտէին: Ո՛վ գիտէ  
 գիշերի ո՛ր ժամին պիտի համնէր իրենց  
 խաշելիք խեղճ կերակուրը, որ առ վտիտ  
 հոգիներուն ստամոքսը պիտի տաքցնէր:  
 Վճարելու համար քսակը բացաւ չքաւոր  
 խեղճ արարածը, առ ողբալի խրճիթին ողոր-  
 մելի մատակարարը: Դրամը պակաս ելաւ,  
 ուրիշ չունէր. ամօթի սպաննող զգացում մը  
 խայթեց իր հոգին: Ապագա փեսան սա-  
 կայն, փութաց լեցնել առ պակասը, վճարե-  
 լով պակաս դրամը: Էլէնի, առ միջոցին վար  
 իջած ըլլալով, կը տեսնէր անցած-դարձածը:  
 Իր պզտիկ արժանապատուութիւնին դպող  
 նուաստացումի առ տեսարանը՝ վիրաւորեց  
 ինքը: Բայց հպարտ այրը, ջանաց չզգացնել  
 իրենց ձեռք երկարած ըլլալու իր փութկո-  
 տութիւնը:

Աս անցքը մե'ծապէս գգուեց իր առնա-  
կան հպարտութիւնը, տալով իրեն ճաշակը  
ամուսնական երջանկութիւնին հաճոյքներուն:  
Մտածեց թէ, քիչ ատենէն տունի պետ մը  
պիտի ըլլար ինքը, իր խնամքը պիտի յատ-  
կացնէր ադ ընտանեկան յարկին, ուր պիտի  
տիրէր էլէնին, և որին վրայ պիտի կեդրո-  
նացնէր ինք իր գուրգուրանքներուն ամէնէն  
փափուկը, պիտի պարուրէր անի իր ամէնէն  
անկեղծ, ամէնէն անյաղ ու ամէնէն խան-  
դակաթ սէրերովը ու գգուանքներովը: Սնոր  
համար դրամ պիտի ծախսէր ինք, իր ունե-  
ցածը անո'րը պիտի ըլլար: Ու հիմակէ'ն կ'ե-  
րեւակայէր արդէն թէ, ինչ անբաղդատելի  
հաճոյք մը ու երանութիւն մը պիտի պատ-  
ճառէր ադ իրեն:

Երջանկութիւնի երազները կը հիւսւէին  
ասանկ հետզհետէ, և անոնք մօտեցած ալ  
կրնաին նկատուիլ, քանի որ շատ չէր մնա-  
ցած իրենց նշանատուքին և ամուսնութիւնին,  
որոնց թւականը որոշած էին, և որոնք պիտի  
կատարէին յաջորդաբար, մէկ-երկու շաբա-  
թի մէջը:

Ադ երազներէն յափշտակւած, Սթամաթ  
ապասեց անհամբեր, անձկաց որ գա'յ ադ  
օրը, որ իրենք իրարու գիրկ պիտի նստէր:

• \* •

Առտու մը , կանուխ , թրամվէյի երթեւեկը սկսող առաջին կառքով , վար կ'իջնէր Սթամաթ , սովորականին պէս լեցւած իր տարփուհիին իր առաջին բարի-լոյսը ըսելու հրճւանքով :

Անկիւնը դարձած ատենը , դատարկ գտաւ պատուհանը , տնակին կողէն բացւող նեղ ու ցած ան պատուհանը , որ իրենց խորհրդապահ ժամադրավայրը կղած էր , և ուր անպատճառ էլէնի իրեն կը սպասէր , քունի ժամը ակամայ լքած , վաղաղարթ , յաճախ մազերը դեռ չսանտրած , անխնամ կերպով ուսէն վար թափւած : Տունին առջեւը համնելով , ո՛չ մէկը գտաւ : Աս անսովոր բացակայութիւնը չխռովեց սակայն ինքը : Մտածեց թէ , գիշերէն անքուն մնացած ըլլալով , — վասն զի աղ խեղճ երդիքին անկիւնը քաշւած աղջիկները ապրուստնին հայթայթելու համար միշտ ձեռական աշխատութիւնով մը կը զբաղէին , մինչեւ գիշերին ուշ ատենները , — կրնաին արթնցած չըլլալ դեռ : Վարէն եկող կառքը հասած ըլլալով , ինչպէս կը պատահէր սովորաբար , իրենցը երկար չսպասեց , որպէս զի ժամանակ ունենար վար իջնալով դուռը զարնել և լուր մը առնելու , ժամադրութիւնին թերացող իր սիրականին վրա :

Ճամբան , անադորոյն յայտնութիւն մը , սթափեցուց ինքը իր ինքնախաբ նախապա-

շարունակներէն, և յեղակարծ ցնցեց իր խեղճ էութիւնը:

Թաղին ծանօթ երիտասարդներէն մէկը, — սիրամոլ հալածողներ էլէնիի, որոնք տեղեակ էին իր հովուերգութիւններուն, և որոնք միշտ հաճոյք կը զգային ամէն առիթով ինքը հեզ-տելու, ճամբան երբ Սթամաթի դէմը ելաւ, աս անգամ իր հեզութիւնին գոհունակ ու յազթական շեշտ մը տալով.

— Իսկոյն դեռ կառքերուն մէջը սլքտա՛, ապո՛ւշ, — ըսաւ, — էլէնիդ փախաւ ան գիշեր՝ Թավիսին հետը:

Թավիս՝ իր հաճոյատէր շահատակութիւններովը ծանօթ, խոշոր, հաստաքազուկ Հրեայ ջրհանկիր մըն էր, որմէ՛ իբր ամուսին ո՛չ մէկ ակնկալութիւն կրնար ունենայ էլէնի:

Չկրցաւ հաւատալ պարզամիտ տոմսակա-վաճառը աս անգութ յայտնութիւնին: Իար-ձին, կառքին կայքէն շատ կանուխ, վար ցատկելով, ինքիրմէն ելած ու խելայեղ, վազեց դուռը ասի առաւ:

Տունին տխրատեսիլ բուն, դուռը բանա-լով, իր անճոռնի դէմքէն վար լղրճուկ լաց մը ձգած, պատասխանեց տարաբաղդ սիրա-հարին թէ, իր տարփուհին փախած է գիշերը Թավիսին հետը, հաճոյքի ան վայրերը, ուր անցած էր իր մանկութիւնը:

Գլուխը պտուտկիլ սկսաւ թշուառ արկածեալին, ու ոտքերը կ'թռտեցան:

Զգաց թէ տուները իր գլխուն կը փլչէին, և աչքերը բան մը չէին տեսներ: Զօրաւոր ճիգի մը պէտք ունեցաւ ինքզինքը բռնելու համար:

• • • • •  
 Կառքը փողը հնչեցնելով, կը դառնար անկիւնը: Պարտականութիւնը ինքը կը կանչէր ադ փողով... և չէր կրնար հնազանդիլ... հետեւեցաւ ադ կոչին:

Կառքին հանած ժխորին ու փողին խլացուցիչ աղմուկին յանձնւած, կ'երթար ան... բա՛ն մը չէր զգար... բա՛ն մը չէր լսեր: Կըզգա՛ր միայն թէ, ադ ժխորը ու աղմուկը՝ անազին դղրդումներ կը յարուցանէին իր ուղեղին մէջը, որ բոցարծարծ հրդեհի մը յանձնւած, կ'այրէր ու կը չարչարուէր:

— Ի՛նչ պիտի ըլլայ, «գէշ կաթ» ծծած է.

— Մտածեց վերջապէս, — անհաւատարիմ փախըստականին մայրին անցեալը աչքին առջեւը բերելով:



# Ս Է Ր Ի Ն

## ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Շողեկառքին մէջ ճանչցայ դինքը, Սիւ-  
զանը :

Ամէնէն անուշ ու մխիթարական բանը, որ  
կայ ճամբորդութեան բոլոր հաճոյքներուն մէջ,  
ան ալ ճամբորդներուն՝ իրարու հանդէպ ցոյց  
տուած անզուգական կերպով տաք մտերմու-  
թիւնն է, անմիջապէս, ժամուան մը մէջ ար-  
թնցած մտերմութիւն մը, որ շատ հին սրտա-  
կցութեան մը բնոյթը կ'առնէ շուտով :

Աշխարհի բոլոր աղւոր ճոխութիւններուն  
մէջ մեծցած հպարտ նապապէն մինչև ամէ-  
նէն չքոտի ճամբորդը, շատ անգամ ամէնէն  
տաք համակրութիւններով կը կապուին իրա-  
րու հետ, եթէ մանաւանդ, անոնցմէ մէկը  
ունենայ լեզուագիտութիւն՝ իր ընկերոջ հե-  
տաքրքրութիւնները գոհացնելու համար՝ ամէն  
այն բաներուն վրայով, զորս երկիրէ երկիր  
անցնելով կը տեսնեն ճամբորդներ : Աշխարհիկ  
կեանքին՝ շուրջս սարքած բոլոր խժալուր աղ-  
մուկներուն զզուանքով, հեռաւոր ճամբորդ-

դուժիւն մը ուզած էի ընել, օրին մէկը, առանց դեղեւումի կառախումբ նկատելով, ինծի ինչ փոյթ՝ թէ ուրե՛ր պիտի տանէր ան զիս, ո՛ւր, ո՛ւր որ ուզէր, ճե՛ռու, շէնքերով, մարդոց աղ՛ուկներով, սեթեւեթներով խճողուած քաղաքներէն, քիչ մը բնութեան ծոցը, ուր կարենայի գեղացիի մը լայն շունչը առնել, բոլորովին թոթուած քաղաքակիրթ մարդու կաշկանդումները :

Ու այդ ցանկարծական անխորհուրդ մեկուսացումը լայնօրէն վայելելու կայր հաճոյք մը՝ առանց բարակ մտադրութիւններու, կառախումբին առաջին կարգը նկատեր էր զիս, ուր, ժպտուն բաղդէս, օտարուհի մը մինակ կը գտնէի ինծի ընկեր, երբ ալ բաւական նկատուած էինք քաղաքներուն աղմկալից ժխորէն, ու անծայրածիր դաշտերու բացութիւններուն և աղւար կանանչութիւններուն մէջը մտած :

Ճամբորդին համար, — որչափ ալ կ'ուզէ մննասէր և մարդտատեաց ըլլայ ան, — ամէնէն անտանելի բանն է երկար մենութիւնը, վակոնի մը չորս նեղկուկ պատերուն մէջը բանտուած, անծայր ծովը միայն ունենալով իրեն տեսողութեան սահման, կամ դաշտի մը դաշարուէս կանանչութիւնները, իրենց պատահական ցանկերով, հեռադրաթելերուն կանճեխներովը եղերուած, որոնք կը փախչին

աչքէդ շարունակ, կը փախչին պահուրտութիւնացող դեւերու պէս, վայրի մենութիւններու մէջ:

Մթնշաղը սկսած էր իջնել, ու վախօճի մը ձեղունէն դէպ ի վար պորտ տուող գլխավար գմբէթաձեւ լամպարի մը աղօտ լոյսն էր որ կը փարատէր թանձր վարագոյրներով կիսագոց պատուհաններուն և չոր պատերուն մէջ լճայող մթութիւնը: Մեր երկուքին դէմքերը կը խողտային լոյսի այդ տկար, նուաղկոտ ճաճանչներուն տակ, որոնց վերջին սլսլուքը կ'երթար մարել պատուհաններէն դուրս, կառախումբը պարսիակող ազջամուղջին մէջ: Ու սեւ, լոյսը չծակող մութին մէջէն, կառախումբը, դղրդալից վայնասուն մը արձակելով, կը սուրար վայրագօրէն, իր որսը հալածող գաղանի մը դօտեալինդ ու կատուած վազքովը, երակները պայթեցնելու չափ ուժով, կտոր կտոր ըլլալով:

Պատուհանները, որոնցմէ մէկը ես, և միւսն ալ օտար դրացունիս էր դրաւած, շէին կրնար տեւական ընկերներ ըլլալ մեզի, երկալք ատեն: Պզտիկ հարցում մը, խզած էր արդէն անձանօթի խրտչուտութիւնը մեր միջեւ, և շուտով հին մտերիմներ էինք դարձած, հաճոյալի խօսակցութիւններու յանձնելով ժամանակին թեւերը:

Ու գիտէ՞ք ի՞նչ հեշտալի վայելք մը կայ

երկինքէն ինկած այդ թանկագին բարեկամութեան մէջ, որով երկու անձանօթներ, իրարու կը կապուին, ամէնէն գուրգուրոտ, ամէնէն մաքուր կապովը անկեղծ մտերմութեան, անկեղծ հոգիի մը կրցածին չափ, ու անչափ ալ պատկառոտ իրարու հանդէպ, պզտիկ մը անգամ չչեղելով փափկանկատութենէ և բաղձալով մինակ որ՝ վայրկեանները երկարին, երկարին կարելի եղածին չափ, անվերջ օրուան մը համար:

Կենցաղագլխութեան բարակ-ցաւ հաշիւները, փոքրոգի նկատումները, շուտով կը վերնանայ այդ մտերմականութեան պահուն, ու մարդիկ իրարու կը բացուին, դուրս թափելով՝ հոգինուն, ի՞նչ բան որ կը վրդովէ դիրենք, նոյն իսկ մերկայնելով անանկ զաղտնիքներ, զորս մարդ ուրիշ ատեն չի կրնար յայտնել . . . խոստովանահայրին անգամ:

Մարդկային հոգիին այս տարօրէ՛ն ու անբացատրելի տկարութիւնովն էր որ, իր արկածալից կեանքին պատմութիւնը ըրաւ ան ինծի, ծայրէ ծայր: Ու ի՞նչ բան է որ պիտի բաղդատուի այն անպատում երանութեան հետ, քան կեանքին պատմութիւնը այդ աննամանօրէն աղւոր կնկան, որ անչա՛փ մըն ալ շռայլօրէն օժտուած էր կանոցի մարմնական զգլխիչ հրապոյրներով, իբր թէ Աբարիչը, իր մէկ քմայքի վայրկեանին,

գչիրով մը խաղալ ուզած ըլլար անոր դէմ-  
քին ու մարմինին վրայ, հրաշակերտ անդրի  
մը շինած ըլլալու բաղձանքով:

— Երազներու և յուզումներու մէջ ան-  
ցան ամբողջ մանկամարդութեանս տարիներ-  
ըր, — ըսաւ հինաւուրց ծանօթի մը մտերմու-  
թիւնով, և յուզումներով լեցուն գլուխը  
գածի չափ լերկ ձեռքերուն մէջը առած,  
արմուկներովը պատուհանին եզերքին յեյ: —  
Կըսեն թէ կնոջ մը ամէնէն անուշ կեանքը  
աղջիկութեան տարիքն է: Ծիշդ է եղեր  
ատիկա, բարեկամս, որովհետեւ ես ալ չգիտ-  
ցայ թէ, ինչպէս շուտ անցան այդ անուշ  
օրերը, շուտ՝ երազի մը վաղանցիկութիւնով,  
և առանց բան մը ձգելու իրենց ետեւէն,  
հոգիիս մէջ, առանց բան մը ձգելու բոլոր  
փախչող աղւորութիւններէն, որոնք աղջկան  
մը միտ կիտ, անմեղ ու կուսական հոգիէն  
միայն կը ծնին, հոն մեռնելու համար դարձ-  
եալ, երբ անկա կնութեան աղտոտ սահ-  
մանները կը կոխէ:

«Ամուսնութիւնս, մի՛ հարցներ, տարօ-  
րինակ, այլանդակ, աշխարհի ամէնէն տգեղ  
բանը եղաւ ատիկա: Դեռ ինքզինքս աղջիկ-  
նութեան մշուշոտ տարիանքներուն մէջ չի  
գտած, դեռ օր մը իսկ չի վայելած աղջկան  
մը դիւրախար հոգիին ծնցուցած խենթ բաղ-  
ձանքները, ու հազիւ անոնց զարթնումին



անուշ զգայնութիւնը ունենալով կուրծքիս  
տակ, ինձի ուզող մը ելաւ մէջտեղ:

Ու մտիկ ըրէ թէ, ի՞նչպէս կ'ուզէին յա-  
փշտակել զիս մօրս քովէն, առանց անոր  
գիրկին անուշութիւններովը կշտացած ըլլա-  
լու դեռ:

Սրուան մէկը, երբ նոր դարձած էինք  
դեռ շատ շքեղ ցերեկայթէ մը, ուր ե՛ս միայն  
կրցած եմ եղեր փայլիլ, պաշտուած դիցուհիի  
մը չափ, ա՛նէնէն ճօխ ու բոլոր խենթեցնող  
գեղեցկութիւններս — ջներուի՞ր ինձի որ  
հպարտանամ ասով — մասնող արդուզարդի  
մը մէջ, վայելուչ տղայ մը կը ներկայանար  
տուն, առանձին տեսակցութիւն մը խնդրե-  
լով մօրմէս:

Մեկնելէն ետքը միայն տեղեկացայ թէ,  
զիս ուզել եկած է եղեր, վճռական որո-  
շումով մը մեզի հետեւելով անմիջապէս,  
եւքին այն ցերեկայթէն, ուր ինք ալ ներկայ  
է եղեր, և ուր յափշտակուեր է ինձմէ: Յան-  
կարծական, յանդուգն ու անկ'ողծ առաջարկ  
մըն էր աղ, որուն վրայ ամբողջ ընտանիքով  
զարմացել էինք ան գիշերը:

«Ուսնձին խորհրդակցութիւնով մը, հա-  
ւանութիւնս ուզեց մայրս, որովհետեւ սպա-  
սել շուզեր եղեր տղան»:

Հօռտի մը զաւակն է, ըսին ինձի, թարգ-  
մանի պաշտօնով, հեռաւոր քաղաքի մը մէջ:

Առնական զմայլելի գեղեցկութիւններով  
 օժտուած շքեղ երիտասարդ մըն էր, որուն  
 հաւնեյայ ես ալ, անմիջապէս, մանաւանդ  
 որ, օտարի մը հետ ամուսնանալու փափաքը՝  
 աղայութեան երազս էր եղած, խելքս քիչ  
 մը համնելէն ի վեր, և զինքը մերժել, որ և է  
 խելայի աղջկան համար, աշխարհի ամէնէն  
 տխմար բանը եղած պիտի ըլլար:

Հաւնեյայ, իր հրապուրիչ գեղեցկութիւն-  
 ներէն աւելի, անկեղծ ու յանդուգն այն  
 նկարագիրին, որով առանց այլ և այլի, մա-  
 քուր սէրի մը խոստովանութիւնը կը բերէր  
 ան փուել ոտքերուս տակ:

Ու երկու շաբաթէն, քաղաքական պաա-  
 կով ամուսնայանք, մեզրալուսինի ճամբոր-  
 դութեան մը ելլելով դէպի Զաւիցերիաի լեռ-  
 նային զբօսավայրերը, ուր բնութիւնը ահալի  
 մը պատառուածքէն նայող անուշ լուսինին  
 պէս կը խնդայ մարդոց երեսին, երբ մանա-  
 ւանդ անանք մեզրալուսինի օրերուն սիրուը-  
 տուքը կը խաղան: Իր կիւս-պարմանիէն պաշ-  
 տուող պարիկի մը չափ երջանիկ ըրաւ զիս  
 ամուսինս, աշխարհի ամէնէն ճոխ վայելքնե-  
 րուն մէջը խղղելով, և խելայեղ, շկտացող  
 սէրով մը պաշտելով ամբողջ էութիւնս:

Հէքեաթներու մէջ պատմուած ըզձանոյշ  
 մը անդամ չէ ճանչցած թերեւս այն խենթե-  
 ցնող սէրը, որով ցնորած պարմանի մը մոլեգ-

Նօրէն կը սիրէ իր հիրիկը, զայն աղափանդէ սենեակներու մէջ բանասերով, որպէս զի չըլլայ թէ մարդկային պիղծ աչք մը արժանա՛նայ անոր նայուածքին:

Դառնալով իր պաշտօնատեղին, օղատուն գիւղի մը ծայրը, գլխածական վիշա մը շինել տուաւ ինծի, ուր գրեթէ բանտարկեց զիս, պարտէզները, ընտանի կենդանիներ և կին ծառաներս միայն ձգելով ինծի ընկեր:

Չէր ուզեր որ՝ որ և է յարաբերութիւն հաստատէի մէկու մը հետ, վախնալով որ բարեկամ մը կունենամ հետը տեսնուելու: Աղւոր շուն մը ունենալու վափաքիս անգամ դէմ կեցաւ, անկէ իսկ նախանձելով զիս, և որպէս զի չըլլայ որ գուրգուրանքէս, սէրէս բաժին մըն ալ՝ իրմէ զատ բանի մը յատկացնեմ:

Միայն կիրակի օրերը, կառքով պտոյտի կ'ելլէինք, ան ալ անկոխ ու ամայի անտառներու մէջ, կամ քաղաքէն բոլորովին հեռու բացատաններ շրջագայելու: — Աշխարհքը վայելելու կարօտովը տոչորուող կին մը ի՛նչ կը հասկնայ սէրին այդ բանատեղծական ձեւերէն:

Չաւակ մը անգամ խնայեց ինծի, աղւոր, գուրգուրալի աղջիկ մը, որպէս զի չըլլայ որ խամրիմ կանուխ, վրայ տալով հրապոյրներս, ինչպէս ծաղիկի կասկածոտ սիրահար մը շու-

զեր հոտուըտալ դիւթիչ վարդ մը, զայն շուտով չթումեցնելու վախէն:

Տարիները, ասանկ, սահեցան շուտ շուտ, պզտիկ հետք մը անգամ չձգելով իրենց հետեւէն, երջանիկ ապրուած կեանքէ մը:

Կարդալու տուի ինքզինքս այդ վանական մենութեան մէջ, կոյս մայրապետի մը կեանքը ապրելու պէս, իբր թէ ինծի համար չըլլային ամուսինիս խեղժի պէս զիս սիրելու, զիս հոգիին մէջ մտցնելու խելացեղ վիճակները:

Չեմ գիտեր թէ ինչ ունէի վրաս այդչափ մոգական՝ որ կիսինկը ինծի կը կապէի արտակարգ խելացնորութիւնով մը, բայց աս ստուգօրէն գիտեմ որ՝ ամուսինս բանաստեղծական խառնուածք մը ունէր, և բանաստեղծի վայրագ տարփանքով մը կը սիրէր զիս:

Տարիքը առնելուն հետ սակայն, փոխանակ իր երիտասարդական խամոզը մարելու, փոխանակ պաղելու և զզուելու անսովոր իր պաշտումէն, ալ աւելի կը մոլեգնէր ան, իր խելացնոր պաշտելութիւններուն մէջ, անանկ որ ատիկա հիւանդութիւն մը կը դառնար ալ իրեն:

Թիթեռնիկի մը պէս կը դառնար շուրջս, կը խենթենար, կը խելացնորէր, ուզածին պէս չկրնալ սիրելուն համար զիս, ինչպէս մայրեր, շատ անգամ, զաւակնին շատ սի-

բեղնուն, խեղդելու չափ կը սեղմեն զանոնք կուրծքերնուն վրայ: Կուզէր որ, հոգիին մէջը մտնէր զիս, հոն բնակեցնէր, ասով կշտանալու համար թերեւս իր զարհուրելի տարփանքէն: Ու չկրնալուն համար յաշուղի այդ տենչին մէջ, կը խելայեղէր: Ու այս ընթացքները՝ դեռ չէին յագեցնէր զինքը:

«Աղաւնիի մը պէս ձեռքին մէջը սուած, կ'ուզէր որ, եթէ կարելի ըլլար, օդին մէջէն թռչնէր զիս, ոտքս գետին չդպցնելու համար, օդին մէջէն թռչնէր դեղձանիկի մը պէս, թեւս, մարփնս, ասորով էութիւնս նիւթական տարկաներէ հեռու պահելու համար, միայն իր գիրկին մէջ, իր կուրծքին վրայ: Ու այդ բանը չկրնալ ընելուն, վագրի մը կասաղութիւնովը կը զայրանար ինքնիրեն, հոգեւին, ինքզինքը բղքանելով:

Հարցումներով, խօսակցութիւններով, անուշ լեզուներով կը խեղդէր զիս, երբ քովս ըլլար, իր ամէն բանի պատրաստակամութիւն ցոյց տուող հարցումներ, որոնցմէ ա՛լ զղուկ կը սկսէի:

Կուսապաշտ մը թերեւս չպիտի խնկարկէր իր կուռքը ա՛յնչափ ջերմեանդօրէն, որչափ անյագ պարփանիս կը գինովցնէր զիս իր անվերջ գուրգուրանքներովը և սէրի բուռն արտայայտութիւններովը, վրաս նեղութիւն բերելու աստիճան:



Ետքերը, երբ իր այդ սիրամուլտութիւնը կատարեալ հիւանդութեան մը ախտանշիչերը առաւ, ա՛լ գործէն ալ պաղեցաւ: Հիւանդ կեղծելով ինքզինքը, օրերով կը բացակայէր պաշտօնատեղիէն, երեսի վրայ ձգելով պաշտօնին վերաբերող շատ մը կարեւոր ու ծանր գործեր:

Գործի գացած օրերն ալ, երթալ դալը մէկ կ'ըլլար, վախէն ու կասկածէն, իրը թէ զիս վախցնէին տունէն, իր բացակայելովը, — այդ տեսակ մտատանջութեան մը խելացնորող վախէն զարհուրած կարծես:

Ասանկ մարդու մը արտաւոյ գործավարութեան, բնական է որ չպիտի կրնային հանդուրժել իր գերադասները: Օր մըն ալ, հրաժարեցուցին զինքը պաշտօնէն, ու կիսինկ տունը մնաց: Կ'երեւակայէ՞ք ասանկ մարդու մը տունը մնալը, իր ցնորած տարիածուի վիճակին մէջ: «Մինչեւ իրիկունս զիս քովը առած, իր խենթ ու խելառ հարցումներովը, և սէրի ցոյցերովը և սիրուըտուքներովը կը զգուեցնէր ալ զիս, և վայրկեան մը իսկ չէր ձգեր որ բաժնուէի իրմէ:

Սէրի մուկեցնութեան այս անտանելի շղթան կրող մը միայն գիտէ թէ, ինչ դժնդակ բան է ամբողջ տաղակացուցիչ կերպով ճնշող ծանրութիւնը անոր, խենթ տարիանքներով կապտուած կնոջ մը ուսին:

Գլխուս վերև կատարեալ յիմար մը ունէի, սիրոյ խնդագար մը գրեթէ, զոր սակայն չէի գիտեր թէ ինչպէս կը սիրէի ես փոխադարձօրէն, կամ կը սիրէի՞, չեմ գիտեր, որովհետև միտքս կը ցնորէր, անոր տարփալից խժոժութիւններովը խճողուած:

Բոլոր բուն սէրերս ու համակրութիւններս, ատենով սիրուած ահուսինի մը հանդէպ, մէկէն պազիլ կը սկսէին ալ: Հրէշ մը ունենալ կը կարծէի դէմս, որ զիս իր ճիրաններուն մէջը առած կը չարչարէր, իր քմահաճոյքին համար, չուզելով փարատել, բզբատել, ոչ ալ արձակել, ինչպէս խաղամու կատու մը, իր թաթերուն զոհը, մուկը՝ բերնին մէջ կը չարչարէ, առանց թող տալու զայն, ոչ ալ բզբատելու, մինչև որ խեղճ կենդանին խեղդուի, անգութ ու քմահաճ անասունին ակռաներուն մէջ:

Ա՛լ չէի կրնար հանդուրժել այդ անգութ կաշկանդումներուն, որքան ալ սիրող մաքուր հոգիէ մը բղխէին անոնք: Այդ այլանդակ սէրը, սև ճիւտղի մը պէս կը կանգնէր դէմս, ակռաները սրած, պատրաստ իր ճանկերը նետելու կոկորդիս, և որուն տեսքէն կը զարհուրէի, կը սարսափէի:

Երազներուս և արթնութեանս մէջը, ան միշտ դէմս էր, իր անարկու բերնին մէջէն ինձի դէմ զինուած ցասկոտ ակռաները ցոյց տալով:

Պէտք էի փախչիլ անկէ ա՛լ, ազատել փափուկ ու անմեղ պարանոցս անոր ակռաներէն, որ կատակ չէր գիտեր:

Վճռական որոշումով մը, օրին մէկը, սուտ պատրուակի մը տակ, ամուսինս տեղ մը դրկելով, ժողվեցի մեծարժէք գոհարեղէններս, և վիշլան, իր գազանային որջի մը ամայութեանը մէջ իրեն ձգելով, խուսափեցայ այլանդակ սիրողիս ձեռքէն, ու հիմա մօրս սուներ կը դառնամ, քիչ մը լայն շունչ առնելու համար, որովհետեւ ալ կը խեղդուէի, գլխ ճնշող ահարկու կաշկանդումներէն:

Բան մը չպիտի գիտնայ մինչեւ իրիկուն: Գարձին իրար պիտի անցնի խեղճը, և թերեւ փախչող թռչունին ցաւէն, խենթենայ ալ, ճշմարտապէս խենթենայ, ի՛նք սիրոյ խելագար մը արդէն, ինչպէս իր սէրը: Այն սէրը, այն սէրը...:

Չայնը սկսած էր խղդուիլ, ցաւագին հեծկլտուքի մը մէջ, և իր երկինքի պէս աղւոր աչքերէն մարգարիտէ արցունքներ կը թափէին ձեռքին վրայ, որ հրաշակերտ անդրիի մը իր բովանդակ գեղեցկութեանը մէջ, միտի ու փափկութեան հրաշալիքի մը պէս կը շողար:

Իր ամբողջ փլուզեալ հոգիին մարած ուժերը ժողվելով, աւելցուց, ճակտին վրայ

ինկած խոպոպիք մը ետ ընելով . «Կը փախչիմ աչդ սէրէն բարեկամս, կը փախչիմ, որովհետեւ զարհուրանքներուն ամէնէն սուկալիովը խռովեց ան հոգիս, ցասկոտ փոթորիկի մը չափ, որ իր խօլ յորձանքներուն մէջ կ'օրրէ թեթեւ փետուր մը: Կը փախչիմ, և, թերեւս, խեղճ մարդը, սիրուած ամուսինս, խելքին բերէ . . . օհ . . . խելքին բերէ:

Կսկծագին փղձկումներու մէջ մարեցաւ իր ձայնը, ու գլուխը ինկաւ վակօնին քանափէն երկուքի բաժնող բարձին և զերքը:

Եղբօր աննկատ ու երկիւղած պատկանանքով, զետեղելէ ևտքը իր պաշտելի գլուխը բարձի մը վրայ, քաշուեցայ վակօնին ննջարանը, հոն զգալով անկողինին անուշ-ցած ըլլալը:

Շոգեկառքը, խօլարձակ, կը սուրար սեւ մթութեան մէջէն, կատղած դազանի մը պէս, մոլեգնած, զայրագին, սրնթաց վազելով, և ծուռ ու մուռ զիկզակներ գծելով շարունակ, երկաթեայ կամուրջներու և խոր խոր անդունդներու անշշուկ լռութիւններուն մէջէն, որոտագին աղմուկներ ձգած ետեւը, խորտակումի գղրղումներ յարուցանելով:

# ՍՈՒԳԻՆ ՀԱՐՍՆԻՔԸ

Հարսնիքի՛ ալ հրաւիրեր են զիս :

Գրեց վարդապետը , Յուշատեսարին օրուան էջը բանալէ կտքը , անհուն թաղծու թեան մը ու անդարմանելի լկանքի մը խռովքը մատնելով դէմքին վրայ , ուր ընկճող ցաւի մը սարսուռը կ'անցնէր : Թուղթին սղտիկ էջին վրայ հեղգօրէն փռած մօրուքը , — ուրկէ տարիներու հովը անցեր էր , իր աւերքի յայտնի հետքերը ձգելով , — ու աչքերը շեղակի յառած անժամօթ անկիւնի մը , կը մտածէր թէ պիտի կրնա՞ր շարունակել պատմութիւնը իր ալեկոծ կեանքին , որուն արկածալի անցքերը կը քրքրուէին հիմա , իր միտքին մէջ , տխուր դիպուածով մը , որ կը վրդովէր , կը ցնցէր զինքը ուժղնապէս :

Հա՛րկաւ , — շարունակեց կուսակրօնը , տնասահման տակնուվրայու թիւնով մը , — պէտք էի ե՛ս ալ բաժինս ունենալ ցաւի այն շարժառիթէն , որ իր վերջին վճիռովը կը շեշտուի հիմա , մեղի երկուքի՛ս ալ , կեանքի յեղաշրջութեան դուռին վրայ՝ որուն կը պատրաստուի Աննիկ , գլուխը կապելու կոչուելով թէկու մը հետ , որ այս տողերը ձեռքովը գրող արկածեալը չէ՛ , աւա՛ղ :



Պէտք է որ արձանագրեմ սակայն տխուր էջը, կեանքիս մէկ հատուածին, կղերի իմ յուշերուս մէջ, որոնք զաղտնապահ ընթերցումի մը չէ՛ որ սահմանուած էին մինչեւ հիմա, և որոնք աշխարհիկէ հեռու իրողութիւններու շուրջը բարախած են:

Այո՛, պէտք է որ արձանագրեմ զայն, մոռացումի անգութ գերեզմանին մէջ չթաղելու համար ցաւառիթ ու ողբալի յիշատակը կեանքիս էն ուշագրաւ դրուագին, որուն մեծութեանը ո՛չ մէկ էջ պիտի կրնայ հաւասարիլ, և որ էն նուիրական յիշատակարանը պիտի մնայ կեանքի բոլոր անցքերուս: Յուզիչ ամբողջութիւն մը՝ տարաբաղդ անցքերով պատմութեան մը:

Ի՛նչ եղանք մենք ասանկ, ի՛նչ հով փշեց մեր վրայ, ցիրուցան ընելու համար մեզ, տկար փետուրներու պէս, որոնք մոլորական կը քշուին հովին քմահաճ հոսանքներէն, բաղդին վճռած անկիւնները նետուելով:

Ի՛նչպէս մոռցայ ես Աննիկը, ի՛նչպէս կրցաւ մոռնալ ան ալ զիս: Ի՛նչպէս կրցանք մոռնալ զիրար, ու յանձնուիլ այն կեանքին, որ ո՛չ մէկ կերպով այդ վերջաւորութիւնը առնել կը խոստանար: Իժուար կուգայ ինձի՛ մեկնութիւնը այս անողոք առեղծուածին:

Ա, կը յիշեմ սակայն ամբողջ տողանցքը մեր վրդովուած անցեալին: Մէկիկ մէկիկ

կ'անցնին անոր պատկերները աչքէս, ու անոնց վերջիշումը կ'ընկճէ զիս սաստիկ, կը տառապեցնէ խելայեղօրէն:

Պատանութեան մեր խանդոտ կեանքերը իրար էին բաղխած մէկէն, ու մենք խելայեղեր էինք անոր առթած արբշուանքէն:

Ան առնն դեռ կղերի մեծամիտութիւնը ու անցեղլի վերապահութիւնները իրենց շուքը չէին արձակած գլխուս վրայ, ու կեանքի իմաստը իր ծանրակշիւ կողմերովը չէր ներկայացած ինծի:

Միամիտ ու անատոյգ աղայ մըն էի, ինչպէս ան՝ անբիծ ու մաքուր աղջիկ մը, որ ինծի էր ձօնուեր, անծանօթ ձեռքի մը կողմէ:

Ու մենք դանել կարծեր էինք իրարու մէջ, ինչ որ մէկուն կը պակսի առանձնօրէն: Ամբողջ խանդովը մեր աղայական եռանդին ու երեւակայութեան՝ իրար լրացնող ամբողջութեան մը հաճոյքը գտեր էինք, իրարու պատկանելու դերադոյն ըղձանքով մը, այն ընկերակցութեան մէջ, զոր մեր դրացնութիւնը ստեղծեր էր մեզի, և զոր պարտէզներու անպատուար զուգակցութիւնը ա՛լ աւելի դիւրացած էր:

Անեզր պաշտումով մը կը սիրէինք զիրար ու մեր ամէն կերպով անկասկածելի յարաբերութիւնը՝ ո՛ր և է արգելք չէր յարուցաներ իրարու շա՛տ մօտ ու շատ աւրնթերակից ապրելու համար:

Սովորութիւնս ունէր. մեր հաճոյքի ու սիրւաութի խօսակցութիւններէն կաքը, ծուսկս կ'ուզէր, գլխուն բարձ ընելու համար, ու ատանկ կը պառկէր ժամերով, մինչև որ գլուխը ցաւէր ու ձանձրանար: Իմ ծուսկս չէր ցաւեր սակայն երբեք, բնական օրէնքներու իր հպատակութեանը անսաստելով, ու ես մտղերը կը շոյէի անոր, մինչև որ ձանձրանայի: Այնչա՛նի անուշ էր այդ կեանքը մեզի, որ չէինք մտածեր լաւագոյն ապագայի մը վրայ, երբ տարիքնիս կ'առնէինք կամայ-կամաց: Գիտէինք որ մեր սիրտերը մեզմէ տարբեր հոգիներու համար չէին կրնար բարասիտել, ու տախկան հաստատ ապահովութիւնն էր, օր մը իրարու պատկանելուս: Տղայ նկատուելով չէ՛ սակայն որ, — որովհետև երկուքս ալ կատարեալ հախանա էինք, ու աշխարհը գաղտնիք չունէր մեզի, — աւանձնաչնորհուած էինք ծնողքներու կողմէ, արաստախոր թոյլատուութեանը այդ կեանքին, այլ կայր վատահութիւնս մը՝ բնաւորութեանս այն աւանձնապատկութեան, որմէ առաջնորդուելով, դիտ վարդապետացու նկատած էին, շատ ողորակուց, ու այդ վատահութիւնը բաւած էր որ, ահէնէն փորձիչ ոչխարը անդամ աներկիւղ յանձնուէր անխտանդ գայլի իմ ընկերակցութեանս: Աւ, իրա՛ւ, գայթակղական ո՛չ մէկ արտունջի առիթ տուած էինք,

ես՝ իմ կողմէ հաւատարիմ վարդապետացու-  
թիւնովս, և ան՝ Աննիկ, անբիծ ու աննենգ  
աղջկանս իր անմոլորութիւնովը: Գաղափա-  
րական, մաքուր բան մըն էր մեր սէրը,  
առանց սակայն բան մը պակաս ունենալու  
Սէրին անասմանս պայմաններէն:

Յոսամնալից էր մեր հեռանկարը, որուն  
անկեղծութեանը՝ մեր սէրին անկեղծութեանը  
չափի վաստահ էինք:

Հիմա կը մտածեմ թէ, — դիրքիս անվա-  
յել մոլորեալի անպարիշտ մտածում, — ի՞նչպէս  
կրնայ փոխուել եղեր ա՛յդչափ անասման ու  
վճռում կարգաւորութիւն մը:

Անողո՛ք աւեղծում:

••

Ամառ մըն էր, օդափոխութեանս դնաց  
Աննիկ իր ծնողքին հետ, որ մեծապէս  
վրդովուեր էր անոր նիհարնալէն, ու բժիշկ-  
ները յանձնարարել էին անպատճառ հար ջուր  
մը խմել ու օդը փոխել, իր կորսում աւող-  
ջութիւնը ու մարմինի բարեկարգութիւնը  
վերահաստատելու համար:

Գնաց, ժամանակ մը հեռու մնալով ինձ-  
մէ: Մեկնումէն մէկ քանի օր ետքը միայն  
դպացի թէ, ո՛ր ատիճանս մեծ պէտք մըն  
էր ան իմ հողիս համար, որ անոր բա-  
ցակացութեանը, անոր կորուստին համար

խորհրդաւոր ու ցաւագին սուգի մը մէջ կը մտնէր :

Ամիսներ չի կրցայ տեսնել զինքը . իր կարօտովը , իր՝ քովս ներկայութեան ըզձանքովը տառապեցայ : Չէի գտներ երջանկութիւնս , որ չարաչար կը թերանար իր երեսը ցուցնել ինձի , օրէ՛ օր աւելի անդուծ ու հեզնող դառնալով :

Մինչեւ ան ատեն , իբր խեղճ վարդապետացու , վայրենի տղու մը կեանքը անցուցեր էի տունը , արդէն ուխտեալ վանականի մը պէս , որուն համար արտաքին աշխարհը՝ տունին ու իր սենեակին չորս պատերը ըլլան : Յամառ մարդատեսաց մը ու ջերմեռանդ մեռածով մըն էի եղած արդէն սկիզբէն ի վեր , ու ադ էր որ շինած էր ինձի «վարդապետացու» կէս-ծաղրական անունը :

Տունէն դուրսը չէի ճանչցած , ու դպրոցէն ետքը , տարիներով , կեանքս եղած էր՝ փակուած մնալ խուցիս անկիւնը , մէկուն բան մը չյայտնելով իմ զգացումներէս ու ինքնութենէս : Աս տեսակ ապրող պատանիներ , հիմա ես ինքս ալ տեսնելով , վերջիշում մը կ'ունենամ անդեալի կեանքիս : Անոնք դարտուղութիւն մըն են , հասարակ կեանքերէ , որոնք ցանցառ բացառութիւններն են խառնուածքի յատկութիւններու :



Մօրուքս եկեր լեցուեր էր կզակիս տակը ,  
 սեւ փունջով մը շրջանակելով դէմքս , ու  
 բացառիկ կերպով շեշտելով մենակեացի , վա-  
 նականի դիմագիծս : Որչափ ալ ներողամիտ  
 ըլլային ծնողքս ու դրացիներ անգործու-  
 թեան ու ծուլութեան այդ անխմաստ կեան-  
 քին , ընկերական պայմաններու խստապա-  
 հանջ զգացումը կար ներսս , որ կը ձայնէր  
 ինձի թէ , ա՛լ պէտք է բանի մը նմանիմ ,  
 թօթափեմ կնոջական հակումներս , դուրս  
 նետուիմ տունէն , ուր աղջկան մը պէս փակ-  
 ուած մնացած էի մինչեւ ան ատեն , իբր  
 մարդ՝ կովացեալ բան մը դառնալով :

Սառնուածքի , բնաւորութեան ու կեն-  
 ցաղի այդ պայմաններով բանի մը չէի կրնար  
 յարմարիլ , — վստահ էի ատոր , — և սակայն  
 միաքս դրեր էի , գլուխս կապելու գործի  
 մը , ի՛նչ որ ալ ըլլար ան :

Բաւական զարնուեցայ ասդին անդին ,  
 սակայն բաղխելով հրապարակին ու գործնա-  
 կան կեանքի դժուարութեանց դէշ տրամա-  
 դրութիւններուն , շուտով յուսահատեցայ ,  
 ե՛ս , արդէն աղջկան պէս մեծցած տղայ :

Պէտք էի սակայն բան մը ընել : Ամօթը  
 կը կրծէր ներսս , որովհետեւ , մարդիկ , ալ  
 իբր անզգայ արարած մը , արհամարանքով  
 կը նայէին վրաս , ու իմ դիւրազգած մեծ-  
 արտութիւնս չէր հանդուրժեր ենթարկուելու

ամբոխէն բղխող այդ դատապարտութիւններուն :

«Վարդապետցո՛ւ, ե՞րբ վարդապետ պիտի ըլլաս», կ'ըսէին ինծի, — հողեկան տրամադրութիւններս ու խառնուածքս ա՛յնչափ հասկումը ունէին վարդապետի պէս բան մը ըլլալու միայն : Արդէն բոլորովին դատարկ ենթադրութիւն մըն ալ չէր ինծի վերագրուածը, որովհետեւ սկիզբէն սողորուած ըլլալով կզեր ըլլալու փափաքով մը, այդ ըզձանքը հետզհետէ սաստիկ թափով մը արծարծած էր ներսս, ու իր պատկերն էր որ ցոլացուցած էր արտաքինիա վրայ :

Որոշեցի մանել վանք մը, ատեն մը ատա՛նկ երթալու առաջադրութիւնով : Բաւական տարիներ ունէի առջեւս, մինչեւ վճռական ու ծանրակշիռ ուխտս արտասանելու : Ո՛վ գիտէ, մինչեւ անատեն ի՛նչ կ'ըլլար : Ետ դառնալն ալ դժուար բան մը չէր արդէն : Երեւոյթները փրկելու ձեւ մըն էր առիկա, շատ յաջողակ ճարտարութիւնով մը :

Ինքզինքս յանձնելով այդ կեանքին, Աննիկի յիշատակին ու անձին մոռացումն ալ չէ՛ որ քաջապետած էր զիս դիմելու անոր : Ընդհակառակը, շա՛տ աւելի ուժգին թափով մը կը բարախէր անոր կարօտը հողիս մէջ, ու կը տազնապեցնէր զիս :

Առժամանակեայ ձեռնարկ մըն էր ըրածս,

որուն կը սկսէի, քանի որ պէտք էի բան մը ընել վերջապէս, և մանաւանդ որ, զարգացումի ըզձանքը, որ տոչորած էր դիւ երկար ատեն, այդ կերպով յագեցում պիտի գտնէր մէջս:

Բան մըն էր կ'ընէի ատանկ, առանց երկայն-լարակը փնտռելու, և հեռատես նախազգացումներու անապու:

Մոլորանքի չարադէպ քայլ, զոր առերեւմ, վտանգաւոր յանդգնութիւնովը անխոհեմութեան, որուն աղետաւոր հետեւանքին ծանրութիւնը, հողիւս համար, հի'մա կը զգամ, աւանդ:

Այդ քայլը իմ կործանումս պատրաստելու կոչուած է եղեր, որուն սակայն ահաւորութեանը կ'անդխտակցէի չարաչար:

Անգամ մը սկսելէ ետքը մոլորանքի կեանքը, ան՝ տեւական անյողդողդութիւնով չդարմանուեցաւ մինչեւ ետքը:

Տարիները սրլնթայ յաջորդեցին իրարու, մոռցնելով ինծի, պահ մը, ամէն բան, անցեալիս փառքերէն ու երջանկութիւններէն:

Վանսամունին ստուերամած մթնոլորտը, ա'լ աւելի թմրեցուց հողիս, քուն-արթնութեան մէջ ապրող գիշերաշրջիկի մը կեանքին վերածելով օրերս, ուր չէի զգար ի'նչ ըլլալս, ո'ւր դիմելս:

Մոլորական դնացքի մըն է որ յանձնուեր

էի, ու այդ կեանքէն դարձի մը կարելիութիւնը հնարաւոր չէր թուեր երբեք, որովհետեւ, տարուէ տարի նո՛ր պարտաւորութիւններ, նո՛ր կոչումներ, ու կեանքի նոր պայմաններ կը ծանրանային կղերականութեան նորընծայ ուխտաւորներու վրայ:

Ընկերներս և ուսուցիչներս ալ չէին կրնար մեկնել հողիիս վիճակները, երբ իրենց զուարթ ու կեանքոտ ընկերակցութեանը՝ փախչտող, մենասէր ջլագարի մը մեկուսացումներովը կը պատասխանէի:

Օ՛ր մըն ալ ըսին թէ լրացած է արեղայութեան շրջաննիս, ու յաջորդող կիրակին պիտի ձեռնադրուինք:

Բան մը չեմ յիշեր վիճակէս ու տրամադրութիւններէս, որոնց մէջ ահաւոր ուխտիս որոշումը տուեր եմ, չյիշելով բա՛ն մը այն յիշատակէն՝ որ կեանքիս ամէնէն արտիաւետ շրջանը օրրեր էր:

\*

\*\*

Ու օ՛ր մըն ալ վարդապետ գտայ ինքզինքս, և աշխարհ նետուեցայ:

\*

\*\*

Կեանք մը ամբողջ մութի մէջ փակուելէ ետքը, լոյսի յորդ ողողումին տակ իյնողի մը սթափումը կ'ունենայի ան ատեն, ահաւոր ու ցաւոտ սթափում մը, որ զիս քունով անցուած կեանքիս ուշաբերութիւնովը կը ցնցէր, ու կը դողայի անսահման տագնապին

առջև այն ճամբուն՝ որ կը բացուէր առջեւ ,  
 և մեծ նշանակութեանը կեանքի այն պայ-  
 մանին՝ որուն մէջ կը գտնէի ինքզինքս , մէկ  
 ոստումով նետուած , դարաւոր քունէ մը ետ-  
 քը արթնցողի մը պէս :

Է , լմնցեր էր ամէն բան , պէտք էր հա-  
 մակերպիլ :

Ծռեցի գլուխս մեծ աղէտին առջեւ , որ  
 պարուրեր էր զիս , ու գլխիկոր կը հետեւիմ  
 հիմա անոր պատգամներուն :

Չեմ գիտեր թէ , ի՞նչ եմ հիմա , ի՞նչ  
 կ'ընեմ , ո՛ւր կ'երթամ :

Անցեալի կեանքիս լուսաւիր արշալոյսները ,  
 կը զգամ որ չեն մարած հողիս խորը : Ա-  
 նոնք միայն սև գիշերներու տեղի տուեր են  
 պահ մը : Հիմա խողտիչ լուսափաղփութիւ-  
 նով մը կը ճաճանչեն անոնք , գեղատեսիլ  
 արշալոյսները հիմա մեռած հողիս , — հի՛ն  
 սէրերս :

Ցաւակոծ հողիս հիմա կը մեղանչէ երբեմն  
 անոնց վերյուշումը փնտռելով , ու ես կը դո-  
 ղամ ահարկու սաստումէն այդ պակուցիչ մե-  
 ղանչանքին :

Ի՞նչ պիտի ընեմ , ի՞նչ պիտի ըլլամ : Չեմ  
 կրնար ընտրել ինձի ներկայացող ճամբաներէն  
 ո՛չ մէկը , որովհետեւ անոնք ամէնքն ալ մութ  
 քաւիղներ կ'առաջնորդեն զիս , ուր հողիս չի  
 կրնար ապրիլ , չի կրնար ծաղկիլ , քանի որ



ան լուսաւոր երկինքներ՝ ր կը փնտռէ, ծծելու համար կարօտի անուշութիւնը իր մեռած երջանկութեան:

Քանի մը անդամ տեսայ զինքը, աւերակ հողիկա անցեալի կէտը, սակայն չխնդաց ան ինծի, որովհետեւ ալ մեռած եմ եւ հիմա իրեն համար վճռականօրէն, ու ինձմէ բան մը չի կրնար սպասել անդառնալի կերպով:

Ան շատոնց աչքը դարձուցեր էր ուրիշ կողմ, քանի որ անգութ լքումի պատուհասովը խորտակուեր էր սէրի պաշտամունքին մեր երջանիկ բազինը:

Իրաւո՛ւնք ունէր: Ի՛նչ կրնար ընել, երբ ե՛ս էի եղեր անխոհեմ խորտակիչը մեր լուսալիր բաղդին:

Երբ «Աննիկ» կ'ըսեմ հիմա իրեն, սիրազեղ շեշտովը սէրի նախկին խանդավառութեանս, ան չթաւիր յիշել ի՛նչ յիշատակ որ կ'արթնայնէ այդ անուանակոչութիւնը մեր մէջ: Սառնորակ պաղարիւնութիւնով կ'ընդունի շեշտս, ու կը պատասխանէ ինծի ճիշդ անա՛նկ, ինչպէ՞ս պիտի պատասխանէր նոր ծանօթի մը:

Է՛, մեռեր է ամէն բան մեր մէջ, մեռե՛ր են մեր հողիները:

Ան հիմա ուրիշի մը վրայ կը մտածէ, անոր որ վաղը իմ կործանած բաղդիս պատահական շաջորդը պիտի ըլլայ անխնայօրէն:

Կեանքի ընթացիկ օրէնքը պիտի ողջունէ  
ան, ու գոնէ հողի տեւական վրդովանքով  
մը չպիտի չարչարուի, ինչպէս անոնք՝ որոնք  
անհաշիւ մոլորանքներով ու շա՛տ սնտոյի դա-  
ղափարականով մը կը շեղին անկէ:

Իբր օրերը ցաւին տեսքը չպիտի ունենան,  
ու ան կեանքը պիտի ապրի՝ ինչպէս պէտք  
է, ինչպէս կոչուած է մարդ ապրելու:

Մինչ ևս, ինձի՛ք փախչող երջանկութեանս  
ջիշատակին անագորոյն ցաւովը պիտի չար-  
չարուիմ ու չպիտի կրնամ թողել զայն հո-  
գիս մէջ, մեռցնել անոր արծարծուն կեն-  
դանութիւնը, որ օր-օրի աւելի կ'ողեւորուի:

Անյետլի օրէնքներու դատապարտութիւնը  
պիտի ունենամ ևս միշտ գլխուս վրայ, ան-  
դրդուելի կաշկանդումներու պատուհասը,  
որոնց սակ պիտի հեծեմ, պիտի չարչարուիմ  
եղկելիօրէն, ո՛չ թէ անոր համար որ կեանքի  
ընկերի մը պէտքը զօրաւոր է ներսս, այլ  
որովհետեւ, կեանքը՝ որուն մէջ կը գտնեմ  
ինքզինքս՝ իմս չէ՛, և խեղակորոյս զս'նս ևս  
ևս շուտրած մոլորանքի մը:

Ի՞նչ պիտի ըլլամ:

Սովորութեանց ընկալեալ սրայմանները  
պիտի չթողուն որ դարմանեմ մոլորանքս:  
Կեանքս պիտի տարուքերուի անոնց քմահաճ  
հովերէն, ու ևս բանի մը չպիտի կրնամ նմա-  
նիլ:

Ի՞նչ իմաստ պիտի տամ, ե՛ս իսկ, ինք-  
զինքիս, որ ոչինչ եմ: Մեծ Ոչինչին թշուառ  
պտուղ, ահաւոր Ոչինչ մը պիտի ըլլամ ես,  
մշտնջենական ցաւին զոհը ինքզինքը կառա-  
վարելու տկար հոգիի մը չարադէպ մոլորան-  
քին, ու տարաբաղդ արկածեալը ոտնակոխ  
եղած սէրի մը, որ անդարմանելի թշուառա-  
կանութիւնը կերտեց կեանքիս, և որ անհուն  
տուայտանքով մը պիտի մաշեցնէ հոգիս:

Ասիկա չէ՛ր բաւեր, հարսնիքի՛ ալ հրաւի-  
րեր են զիս, սուգի՛ս հարսնիքին...

\*\*\* ՎԱՐԴԱՊԵՏ

Նետեց գրիչը ձեռքէն կուսակրօնը, ու հե-  
կեկալով լալ սկսաւ, խռովալից և յուզիչ  
լաց մը, որ իր մօրուքը կը հեզնէր:

## ԶԵՊՕՒՆ ՑԱԻԸ

Անէսթօ՝ գարունէն մնացած առնելիք մը  
գանձելու գացեր էր գիւղ, ուր ծխախոտ,  
մոմ, աղած ձուկ կը տանէր մէկ քանի շա-  
քաթը անգամ մը, աղքատ մանրավաճառնե-  
րու, որոնք, մէկ-քանի հոգի միայն, մէյ-մէկ  
պզտիկ խանութ բացած, պէտքը կը հոգային  
գեղին սակաւապէտ բնակչութեան:

Իր աշխէտ ձիովը կ'երթար կուգար միշտ,  
գեղէն քաղաք, անոր վրայ, ուսին վերեւը,  
իր առջեւօքը բեռցուցած չքոտի պաշարը իր  
մանրավաճառքին: Իր ձեռքովը մեծցուցած  
ըլլալով այդ ձին, Զեպօն, մեծ հաճոյք մըն  
էր իրեն, հեծնել անոր վրայ, ու ճամբայ ել-  
լելէ առաջ, շոյել, սիրել անոր բաշը, խան-  
դակաթ համբոյր մը դրոշմել անոր սկանջին,  
և փորին կրունկի հարուած մը տալ, որպէս  
զի ճամբայ ելլէ ան, բաշերը հովին տուած,  
գլուխը սէզ, կայտառ ու ոստոսաուն գնաց-  
քով:

Լեռներու վրայէ երկար այդ ճամբորդու-  
թեանը մէջ, իր գորովագութ ընկերն էր Զե-  
պօն, որուն շունչին ու կեանքին հետ կը

հոյնանար Անէսթօ : Կարօտակէղ հօր մը խանդաղատանքով , իր համբոյրը և խրախոյսը պակաս չէր ընէր անոր վրայէն , հպարտանալով ամէն անգամ անոր յանդուգն խիզախումներուն , խրամատէ մը ըրած ոտու մին , կամ կատարի մը կողն ի վեր անվերհեր խոյանքին համար :

Եւ ինչո՞ւ տոտանկ չըլլար , քանի որ անոր ծնիլը տեսած էր , իր ընկերոջ ախոռին մէջ , և ետքէն՝ անոր խոտամնադից հասպատակ մը ըլլալը տեսնելով , քոակին ամբողջ դրամը՝ զոր ա՛յնչտի խնայողութիւններով և քրտինքներով ձեռք բերած էր՝ պարպած էր ընկերոջը ձեռքը , դնելու համար դայն , իր սեփականութիւնը ընկու համար , ձի մը ու ննալու համար , մանուսնոգ արու ձի մը :

Գանձու մը ընկէն կտքը , իր յաճախորդ մանրավաճառներէն , սրտնք դինքը պատուելու համար կո՛ւշտ մը խմցուցած էին , ճամբայ ինկած կը դառնար քաղաք , դո՛ս ու դուարթ , մրմռալով մանկութեան կրդերէն կայառուն սպաղ մը , որ շուտով կը կտրուէր լեռներու լուռ ամայութիւններուն մէջ :

Հեղձուցիչ տաք մը , հալած կապարի ծանրութեամբ , կը մտղուէր օդին ալքերէն , ու կը դժուարացնէր դնացքը թէ՛ ձիին և թէ՛ իրեն : Ծառի տերեւ մը անգամ չչարժող օդի սյղ միօրինակ կայունութիւնը և շնչա-



հեղձող սաքութիւնը, թոյլ մեղկութիւն մը կուտային իրեն, կուրծքը ճնշելով, ու մրափի մը կարօտը զգացնելով աչքերուն, երբ ա՛յնչափ անուշ կը դառնայ ցորեկուան այդ միջոցին աչքերը փակելը: Օղին ու գինին, որոնց չափը փախցուցած էր, ա՛լ աւելի կը սաստկացնէին ծանրութիւնը դլխուն, որ շողիի զանգուածով մը լեցուածի պէս, կարծես պայթիլ կ՛ուզէր:

— Հիմա՛ Քարկալը կը համնիմ, մտածեց ինքնիրեն, Ջէպօն կը կապեմ ծառի մը, ու քիչ մը կ՛երկննամ շուքին մէջ:

Աճապարանքով համնելու եռանդով մը, խթեց ձին, ու քաջարի կենդանին ոտքերը վեր աւաւ, դլուխը թոթուեց, ինքն իր վրայ ցցուեցաւ և սկսաւ քառասմբակ արշաւել:

Քանի մը վայրկեանէն հասած էր Քարկալը: Հովանուտ ծմակ մը, զոր թաւախիտ անտառներ կ՛եղերէին շուրջանակի:

Անէսթօ վար իջաւ ու յողնաքել, տասանելով, Ջէպօի սանձէն բռնած, մօտեցուց ուժեղ ծառի մը, որուն բունին կապեց զայն: Աւ քրտինքը սրբելու պէս, ձեռքը անոր բաշերէն մինչև պոչին կողմը պտտցնելէ ետքը, գզլուտ շարժումով մը անոր մտուտ քաւակին վրայ ապտակ մը շահեցնելով, հեռացաւ քովէն, ապահովուած թէ՛ այդ թեթեւ քրտինքէն բան մը չպիտի ըլլար իր շարքաշ ձին:

Ու գնաց երկնցաւ դալարուտ գետնին այն մասին վրայ, ուր զով շուք մը կը ձգէին նեղ առուակի մը եզերքը աճող թմբիներ:

Թեւը գլխուն բարձ շինելով, հանգստաւէտ անկողինի մը պէս փռուեցաւ կանանչներու կակուղ գորգին վրայ, աչքերը յառելով երկինքի անհուն կապոյտին: Հեշտալի թեթեւութիւն մը զգաց հողի այդ պատառին վրայ, ու խոնջէնքէ կազդուրումի անուշութիւն մը, որ իր մարմինէն, մինչե՛ւ երակներուն մէջէն, ծանր բռւի մը պէս կը քակուէր կը վերնար: Կուրծքը յամր ելեւէջի մը տակ կը բաբախէր: Շուտով աչքերը գոցուեր էին ու քունը սարեր էր:

Այն արեւոտ բացաստանին մէջ, որ անտառակներու ցանկերովը կը շրջանակուէր, մօտակայ պարտիզպան մը իր ջրհորը դարձնող էգ ձին արձակեր էր, արածուելու համար: Ա՛յնչափ վարժ էր ան՝ տեղին, և իր ասպարէզը սահմանափակ, որ սէրը անոր փախուստէն վախ մը չունէր: Մերկ ու անասնձ, արեւին տակ փալվլալով, ան կը ճարակէր ասդին անդին, իր քիմքին յարմար տերեւներ փնտռելով դեպիւր կամ թզուկ ծառերու վար կախուած ճիւղերուն վրայ:

Երբ Չէպօի քիթին հովը իջաւ, որով կը հեւար իր արշաւասոյր վաղքէն ետքը, գլուխը վեր առնելով, տեսաւ իրեն ընկեր մը, որ,

անսիրոյթ, կը ճարակէր, առանց դուռնչը գետնէն վեր առնելու: Կուրծքը բարախեց անոր տեսքէն, և ուզեց մօտենալ: Քայլ մը առնելով, հասկցաւ որ կապուած էր: Իր ընկերոջ լեցունն ու թարմ մարմինը, որ արեւին ճամնչներուն տակ յանկուցիչ վառք մը կը ստանար, կը գերէր իր հոգին, անոր մօտենալու տենչանքով: Իստարկ ախոռներու մէջ մեծցած իր առանձնակեաց հոգին, նոր ու հեշտալի սարսուռի մը զգայնութիւնովը կ'արթննար, և խլրտումը կը զգար անծանօթ որդի մը, որ կը կրծէր իր ներսը, անոր քով խոյանալու անդիմադրելի ցանկութիւնն մը տալով իրեն:

Մէկէն, բուռն զգացում մը անցաւ իր ներսէն: Ուժով մը խրխնջեց, իր սիրազեղ ձայնը բարձրացնելով դէպ ի միւսին հասցէին, զայն իր քովը կանչելու փափաքով մը: Իր ձայնը անպատասխան մնաց, ամօթխած էգին կողմէ, որ միշտ անտարբեր՝ դուռնչը կը պտտցնէր մէկ կողմէն միւսը: Վրդովիչ տազնաալի մը մէջ կ'եռար Ջէպօի հոգին, ու տաք սարսուռներ կը սողոսկէին իր երակներուն մէջ, որոնք անսահման կակիծով մը կ'աաղնատէին իր մարմինը: Կոյս տազնաալի մը հատցնող խուովքը կը զգար իր հոգիին մէջ, որ կը ճանկութէր իր մարմինը, և անդիմադրելի գրգիռով մը կը հիւծէր զինքը, երթալու համար միւ-

սին քովը , չգիտնալով թէ ի՛նչ բանի համար :  
 Անհանդարտ շարժումներով , սկսաւ քրթ մնջել  
 ու սրտնեղ դուփիւններով գետինը ծեծել ,  
 աղերսանքի գթաչարժ պաղատանքով մը՝ որ  
 գան զինքը քակեն : Անէսթօ , կաշիէ փակեր  
 չունենալով , հաստ չունն մը ձգած էր անոր  
 վիզին : Ուրիշ կերպով կարելի չպիտի ըլլար  
 զայն զսպել : Չուննը իր բիրտ կարծրութեա-  
 նը մէջ , անկարելի էր փրցնել : Չէպօ , երկար  
 մաքառեցաւ . ի զուր ծեծեց գետինը , և ըմ-  
 բոստացաւ չուննին դէմ : Ո՛չ մէկը կը լսէր  
 իր աղերսանքը : Յոգնած ճամբորդը , ա՛յնչափ  
 խոր թաղուած էր քունի անուշութեան ու  
 թմբիրին մէջ , որ գլուխն ալ եթէ կտրէին՝  
 չպիտի իմանար : Չէպօ կ'անսկոտէր , ետեւի  
 ոտքերուն վրայ պիրկ ձգառումներ կը փորձէր ,  
 չուննը փրցնելու համար , բայց անյաջող կ'ել-  
 լէր իր բոլոր ճիգերուն ու տապալակումներուն  
 մէջ : Բարկութենէն կը ծառանար , զինքը  
 կաշկանդող ծառին ուղղութիւնովը , բայց  
 անողոք չուննը քա՛յլ մը չէր հեռացներ զին-  
 քը իր արգելարանին շրջանակէն , որ իր ուժ-  
 գին դուփիւններուն տակ փոշոտած , և ակօս-  
 ակօս եղած էր , իր ոտքերուն հետքերէն :  
 Միւսը , մի՛շտ անտարբեր՝ իր սարասեռ ընկե-  
 թոջը աղերսանքին , հիմա կը սկսէր հեռանալ  
 բացաստանին միւս ծայրը , դէպ ի ախրոջը  
 պարտէզին ցանկապատը ուղղուելով : Չէպօ

անհուն անձկութիւնով մը նշմարեց որ՝ ըզ-  
 ձայի թռչունը կը հեռանար իրմէ: Գերագոյն  
 ճիգի մը բնածին դրդումով, ընդոտտ ոստում  
 մը ըրաւ, երկու ոտքերուն վրայ ծառանալով  
 ահագին բարձրութիւնով: Իր վիզին հետ  
 բարձրացաւ նաեւ սանձը, և վար իջնելու  
 սրահուն, կառչեցաւ կոճղի մը, որ իր հասակէն  
 քիչ վերօք, ծառին բունէն դուրս ցցուած  
 էր, և զոր անծանօթ ձեռք մը կարելով օրին  
 մէկը, երկու թիզ արմատ մը միայն ձգած էր:  
 Չուանը անցաւ մնաց հոն, պատճառ ըլլալով  
 որ՝ Ջէպօ չկարենայ առջևի ոտքերը գետին  
 դնել, և կախուած մնայ ծառէն, քիթը դէպ ի  
 երկինք ցցուած:

Վիզը կը փրթէր այդ դիրքին մէջ, ու  
 կոկորդը կը սեղմուէր: Ազատելու ճիգով,  
 բուն շարժում մը փորձեց, ու սխալ ոս-  
 տումի մը հետեւանքով, գլուխը դարձաւ  
 ծառէն, կռնակը անոր բունին եկաւ, ու  
 ետևի ոտքերը գետնին վրայ երկնցան: Ական-  
 ջէն կախուած նապաստակի մը պէս, կ'երկն-  
 նար ծառին երկայնքն ի վար: Բանի՛ ոտքե-  
 րուն ծայրերովը գետին դպչիլ ու կանգնիլ  
 կ'ուզէր, ծառը կոշտ ապառաժի մը պէս  
 կռնակին կը բաղխէր: Ուժաթափեցաւ, ա՛լ  
 անկարող՝ ո՛ր և է շարժում ընելու: Կոկորդը  
 կը պայթէր շնչահեղձութենէ: Աչքերը կ'ու-  
 ռէին ու արիւնէ գունտերու գոյն մը առած,

դուրս պոսթկալ կ'ուզէին: Աղիողորմ տեսքի մը մէջ, կամաց-կամաց կ'անշարժանար իր սիրուն դէմքը, որ քիչ առաջ ա'յնչափ առոյգ և ցնծուն էր: Լայն ելեւէջ մը ունեցաւ իր գիրուկ մատղաշ փորը, ուրկէ ճնշուած շունչի զանգուած մը խուժեց դէպ ի վեր, բերանը: Խեղդուկ հեւք մըն ալ՝ ու ոտքերը երկնցնելով արձանացաւ:

Երբ երկար ու անուշ երազներէ Խոքը, արթնցաւ Անէսթօ, կէս-բաց կէս-դոց աչքերով, Զէպօն փնտուեց: Խենթի պէս վեր ցատկեց ծառէն կախուած գանելով զայն, կառափնատ հանուած եղկելի զոհի մը աղիողորմ դիրքին մէջ: Երկար չարչարելով ուղեղը, չկրցաւ գտնել պատճառը իր սիրական Զէպօնի անճնասպանութեան, և իր գեղջուկ մխոքը չզօրեց գտնել գաղտնիքը խուսափուկ էգին, որ եկած անցած էր իր կայտառ ճիին քովէն:


Սիրտով մեռած ու գլխիկոր, քաղաք ուղղուեցաւ, կառք մը բերելու, իր մեռած հոգիին դիակը վերցնելու համար:




# Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ն Ց Ա Ն Կ Ը




	Էջ
ԿԻՆԸ . . . . .	5
ՍՈՒՔԻԱՍ . . . . .	31
ՍԷՐԸ . . . . .	49
ԱՌՈՂՋԸ ԵՒ ԱՆԿԱՐԸ . . . . .	69
՝ԳԷՇ ԿԱԹ,, . . . . .	81
ՍԷՐԻՆ ՄՈԼԵՌԱՆԴՈՒԹԻՒՆԸ . . . . .	99
ՍՈՒԳԻՆ ՇԱՐՍՆԻՔԸ . . . . .	113
ՋԷՊՕԻՆ ՑԱԻԸ . . . . .	127





442129





BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7513 02061 135 5